21-ՐԴ ԴԱՐ

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՆԴԵՍ

1 (71)

ԵՐԵՎԱՆ

2017

21-ՐԴ ԴԱՐ
տեղեկատվական-վերլուծական հանդես

Լույս է տեսնում 2003 թվականից 1 (71), 2017

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ալեքսանդր Գասպարիշվիլի
Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետհամալսարանի լաբորատորիայի վարիչ, փ.գ.թ. (Մոսկվա, ՌԴ)
Ալեքսանդր Կորնիլով
Նիժնի Նովգորոդի Ն.Ի. Լոբաչևսկու անվան պետական համալսարանի արտասահմանյան տարածաշրջանագիտության և տեղային պատմության ամբիոնի վարիչ, պ.գ.դ., պրոֆեսոր (Նիժնի Նովգորոդ, ՌԴ)
Աշոտ Թավադյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր
Արամ Սաֆարյան
Բանասիրական գիտությունների թեկնածու
Արթուր Աթանեսյան
ԵՊՀ կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ, ք.գ.դ.
Բաբկեն Վարդանյան
«Հայք հաստատություն» հ/կ տնօրեն, ՀՀ պաշտպանության նախարարի ավագ խորհրդական
Գագիկ Հարությունյան *(համակարգող)*
«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, ք.գ.թ.
Զավեն Եկավյան
Դոկտոր, պրոֆեսոր (Լիսաբոն, Պորտուգալիա)
Էդուարդ Լ. Դանիելյան
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հին դարերի պատմության բաժնի վարիչ, պ.գ.դ.
Կարեն Վ.Կարապետյան
ՀՀ վարչապետ, տնտեսագիտության դոկտոր
Հրանուշ Հակոբյան
ՀՀ Սփյուռքի նախարար, ի.գ.դ.
Միհրան Դաբաղ
Դոկտոր, պրոֆեսոր, Ռուրի համալսարանի պատմության ֆակուլտետին առընթեր Սփյուռքի և Ցեղասպանության ինստիտուտի տնօրեն (Բոխում, Գերմանիա)
Մուշեղ Լալայան
ՀՀԿ փոխնախագահ
Սամվել Մանուկյան
IPSC Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի վերլուծաբան, ս.գ.թ.
Սեյրան Օհանյան
Գեներալ-գնդապետ
Սերգեյ Գրինյան
Ռազմավարական գնահատականների և կանխատեսումների կենտրոնի գլխավոր տնօրեն, տ.գ.դ. (Մոսկվա, ՌԴ)
Վահագն Ազլյան
«Նորավանք» ԳԿՀ խորհրդական, ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Հանրային կառավարման ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ
Վարդան Հարությունյան
ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեի նախագահ, տ.գ.թ.

21-ՐԴ ԴԱՐ

տեղեկատվական-վերլուծական հանդես

Թիվ 1 (71), 2017թ.

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր
Գագիկ Հարությունյան

Գլխավոր խմբագրի տեղակալ
Վահագն Ագլյան

Պատասխանատու խմբագիր
Խոնարհիկ Քարաուղլանյան

Պատասխանատու քարտուղար
Լուսինե Բաղրամյան

Արեստակես Սիմավորյան
Դիանա Գալստյան
Կարեն Վերանյան
Վահրամ Հովյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արման Մկրտչյան
Ռազմավարական մտածելակերպի զարգացման կարևորությունը պետական կառավարման համակարգում 5

Կարեն Վերանյան
Զինված ուժերի նկատմամբ հասարակական հսկողության սահմանման հարցի շուրջ 16

Հայկարամ Նահապետյան
Հովհաննես Բաղրամյանն Առաջին համաշխարհայինի տարիներին 30

Լիա Էվոյան
Թուրքիա-Ադրբեջան. «դարի պայմանագիրը»՝ աշխարհատնտեսական գործոն 52

Տարոն Սաքոյան
Պանթյուրքիզմը որպես եվրասիական ժողովուրդների աշխարհաքաղաքական մարտահրավեր 75

Վարդան Աթոյան
Ուղեղային կենտրոնների տիպաբանության հարցերը քաղաքագիտական դիսկուրսում 85

Համլետ Զաքարյան
Զբաղվածության քաղաքականության բարեփոխումները 103

Էդիտա Գզոյան, Արամ Միրզոյան, Սոֆյա Ալեքսանյան, Լուսինե Հովհաննիսյան, Սիմոն Հունանյան, Մարիամ Մեհրաբյան, Շուշանիկ Սարգսյան
Հայ-ռուսական և հայ-բելառուսական գիտական մրցույթների ուսումնասիրությունը համատեղ պետական դրամաշնորհների շրջանակներում 111

Գրիգոր Ներսիսյան
ՀՀ-ում պետական գնումների ոլորտի ֆինանսահիրավական կարգավորման առանձնահատկությունները 129

Հուշագիր հեղինակին 135

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Արման Մկրտչյան*

Բանալի բառեր ՝ ռազմավարական մտածելակերպ, պետական կառավարման համակարգ, ազգային անվտանգություն, ռազմավարության արվեստ, ազգային շահ:

Պետության կառավարման համակարգի արդյունավետությունը պայմանավորված է կառավարման պարտավորություններն ստանձնած ղեկավար անձնակազմի ռազմավարական մտածելակերպի շարունակական զարգացմամբ, նրանց հմտությունների անընդհատ կատարելագործմամբ ու հաջորդ սերունդներին այդ հմտությունների փոխանցմամբ: Ռազմավարական մտքի զարգացմամբ և ռազմավարության արվեստին հստակ տիրապետմամբ է հնարավոր մշակել և իրագործել ազգային անվտանգության այնպիսի ռազմավարություն, որը կապահովի անհատի, հասարակության և պետության ֆիզիկական անվտանգությունը և որը կնպաստի սոցիալական, տնտեսական և տեխնոլոգիական առաջընթացին, ժողովրդագրական պատկերի բարելավմանը, ազգային արժեքների պահպանմանը:

Լայն իմաստով, ռազմավարությունը նպատակների, դրանց հասնելու համար անհրաժեշտ միջոցների և այդ միջոցներն արդյունավետ օգտագործելու ձևերի փոխկապվածության և փոխներազդման համակարգ է [1]: Արևմտյան գիտական շրջանակներում հայտնի է նաև հետևյալ ձևակերպումը. «Ռազմավարությունը որոշակի առավելությունների հայտնաբերումը կամ ստեղծումն է, ինչը կարող է օգտագործվել վերջնանպատակին հասնելու համար՝ չնայած ռեսուրսների սակավությանը և, ամենակարևորը, հակառակորդների կամ մրցակիցների հակառակ ջանքերին» [2, p. 19]: Մեկ այլ ձևակերպմամբ՝ «իրական ռազմավարությունը սահմանափակ միջոցների և

* ՀՀ ԶՈՒ գնդապետ, ԱՄՆ Ազգային պաշտպանության համալսարանի Պատերազմի ազգային քոլեջի մագիստրոս:

մեծ նպատակների միջև կամրջի կառուցման ձև է, որով ռիսկերը վերածվում են հնարավորությունների» [3, p. 5]:

Ռազմավարությունն էապես տարբերվում է նախանշված նպատակներին հասնելուն անհրաժեշտ «գործողությունների պլանից»՝ այն իմաստով, որ այդպիսի պլանները ենթադրում են հաջորդական գործողությունների իրականացման շարք, մինչդեռ ռազմավարությունը նախատեսում է համակարգային ձևաչափով միջոցառումների միաժամանակյա իրականացում, ընդ որում՝ նախօրոք հաշվի առնելով համապատասխան ռիսկերն ու հետևանքներն անցանկալի զարգացումների դեպքում:

Պաշտպանական-անվտանգային բնագավառում ռազմավարության մշակումն ունի որոշ առանձնահատկություններ, թեև, ընդհանուր առմամբ, այն պահպանում է ռազմավարական գործընթացի բովանդակությունը: Այդ գործընթացը բաղկացած է համապատասխան տարրերից, որոնք պետք է փոխկապված լինեն: Ռազմավարության արդյունավետությունն ուղղակիորեն կախված է այդ առանձին տարրերի փոխկապվածության աստիճանից և այն հանգամանքից, թե որքանով են այդ տարրերը միմյանց փոխլրացնում: Ռազմավարական գործընթացի տարրերից են.

1. ռազմավարական միջավայրի գնահատումը (հայտնի, անհայտ տեղեկատվություն, ռազմավարական նկատառումներ),
2. սեփական, հակառակորդի, հավանական դաշնակիցների (գործընկերների) և հավանական հակառակորդների շահերի հստակեցումը,
3. ազգային շահերի դեմ ուղղված սպառնալիքների և այդ շահերը խթանող հնարավորությունների գնահատումը,
4. ռազմավարական նպատակների և խնդիրների սահմանումը,
5. սեփական և հակառակորդի (այլ հնարավոր կողմերի) ուժեղ ու թույլ կողմերի համեմատական վերլուծությունը,
6. կարողությունների վերլուծությունը և դրանց զարգացման ծրագրի մշակումը,
7. ռազմավարության իրագործման հետևանքների, օգուտների և ռիսկերի գնահատումը,
8. ռազմավարական նկատառումների վերանայումը և համապատասխանաբար՝ ռազմավարության հարմարեցումն ազգային շահերին, գերակայություններին [4]:

Վերոնշյալ տարրերն ըմբռնելու, վերլուծելու և համապատասխան ռազմավարություն մշակելու համար անհրաժեշտ է պետական կառավարման համակարգում ունենալ ռազմավարական մտածելակերպով օժտված, անվտանգության խնդիրների վերաբերյալ համակարգված գիտելիքներով անձնակազմ: Անվտանգության համակարգի առանձին տարրերի փոխներգործության, ինչպես նաև ազգային և գլոբալ համակարգերի միջև փոխկապվածության ճանաչողությունը նման անձնակազմին դարձնում է ազգային անվտանգության ապահովման գործի առաջամարտիկներ:

Ազգային անվտանգության ռազմավարության մշակման գործընթացը սկիզբ է առնում անվտանգության միջավայրի գնահատումից, ինչը պահանջում է կիրառել ռազմավարական և օբյեկտիվ վերլուծական մոտեցում: Անվտանգության միջավայրը, որպես կանոն, բնութագրվում է անորոշությամբ, հարափոփոխությամբ, բարդությամբ և հնարավոր ռազմավարական-մարտավարական անակնկալներով: Այս փուլում պետք է հստակ տարանջատել փաստերը ռազմավարական նկատառումներից և պարբերաբար անդրադառնալ այդ նկատառումների վերստուգմանը: Մինչև գործողությունների որևէ պլան մշակելն անհրաժեշտ է համակողմանի ուսումնասիրություններ իրականացնել՝ անվտանգության միջավայրն առավելագույնս ադեկվատ ընկալելու նպատակով: Անհրաժեշտ է կատարել համեմատական վերլուծություն, «քարտեզագրել» ռազմավարական անվտանգային միջավայրը՝ յուրային, հակառակորդի, հավանական դաշնակիցների և հավանական հակառակորդների շահերը, շարժառիթները, ուժերն ու կարողությունները, ուժեղ և խոցելի կողմերը, նպատակները հասկանալու համար:

Ռազմավարություն մշակողների (ստրատեգների) համար կարևոր է հասկանալ պետությունների ռազմաքաղաքական ղեկավարության աշխարհընկալումը և անվտանգության այն միջավայրը, որտեղ պետք է իրագործվի մշակված ռազմավարությունը: Ընդ որում, անհրաժեշտ է խորապես ուսումնասիրել ինչպես սեփական երկրի ղեկավարության, այնպես էլ այլ երկրների և ոչ պետական դերակատարների աշխարհայացքները, իմանալ դրանց ձևավորման պատմությունը և առանձնահատկությունները, ինչը հնարավորություն կընձեռի համակողմանիորեն հիմնավորված նախադրյալներ ստեղծել՝ ռազմավարության ճիշտ մշակման և, ըստ այդմ, հնարավորությունները ճիշտ օգտագործելու համար:

Անվտանգության միջավայրի համակողմանի գնահատումից հետո անհրաժեշտ է հստակեցնել ազգային շահերը՝ միաժամանակ հասկանալով հակառակորդի, ինչպես նաև դաշնակիցների և գործընկերների շահերը: Ամերիկացի հետազոտող Թերի Դեյբլի սահմանմամբ՝ գոյություն ունի ազգային շահի չորս հիմնական կատեգորիա, որոնցից կարևորագույնը ֆիզիկական անվտանգությունն է, ինչը ենթադրում է պաշտպանություն պետության ներսում կամ դրա սահմաններից դուրս պետության քաղաքացիների կյանքին կամ ունեցվածքին ուղղված արտաքին միջավայրի սպառնալիքներից: Երկրորդ հիմնական կատեգորիան վերաբերում է տնտեսական բարեկեցությանը, որտեղ պետությունն իր հիմնական ջանքերն ուղղում է պետության ներքին սահմաններում տնտեսական առաջընթացի ապահովմանը: Ազգային շահի երրորդ հիմնական կատեգորիան պետական կառավարման համակարգի, ազգային արժեքների և մշակույթի պահպանումն է: Վերջին՝ չորրորդ կատեգորիան վերաբերում է սեփական ազգային արժեքների հնարավորինս լայն տարածմանն այլ երկրներում [4, pp. 123-127]: Վերջինիս համատեքստում Հայաստանի հնարավորությունները, հաշվի առնելով Սփյուռքի գործոնը, բավական շահեկան են: Ռազմավարություն մշակողները պետք է ազգային շահերին ստորադասեն ռազմավարության մնացած բոլոր տարրերը և դրանք նպատակաուղղեն ազգային նպատակներին ամենաարդյունավետ ճանապարհով հասնելուն:

Ազգային շահերը ձևակերպելուց հետո անհրաժեշտ է գնահատել դրանց ուղղված սպառնալիքները, հասկանալ այն հնարավորությունները, որոնք կարող են նպաստել ազգային շահերի հետապնդմանը: Այնուհետև պետք է սահմանել ռազմավարության նպատակները և խնդիրները, որոնք նույնպես պետք է ծառայեն ազգային շահերին հասնելուն: Միևնույն ժամանակ, այդ նպատակների և խնդիրների առաջադրման գործում պետք է հաշվի առնվեն ազգային շահերին ուղղված սպառնալիքները և հնարավորությունները: Այսպիսով՝ կարելի է ներկայացնել ռազմավարության արդյունավետ մշակման հետևյալ մոդելը (*Նկ. 1*):

Նշենք, որ *Նկ. 1*-ում ներկայացված եռանկյունու տարրերի փոխգործակցության և դրանց՝ միմյանց լրացնելու պարագայում է հնարավոր մշակել և իրականացնել այնպիսի ռազմավարություն, որն առավելագույնս արդյունավետ կլինի ազգային շահերի համատեքստում:

Նկար 1

Ռազմավարության մշակման մոդել



Ազգային շահերին ուղղված սպառնալիքները գնահատելու համար անհրաժեշտ է հաշվարկել բոլոր դերակատարների կարողությունները և նպատակադրվածությունը: Կարողությունները համեմատաբար հեշտ է հաշվարկել, թեև պետություններն իրենց իրական ռազմական կարողությունները թաքցնում են: Նպատակադրվածությունը հասկանալու համար անհրաժեշտ է մշտազննել տվյալ պետության ռազմաքաղաքական ղեկավարության գործողությունները, հայտարարությունները, հասկանալ հնարավոր զարգացումների միտումներն ու սպառնալիքների ընկալման նրանց տեսլականը: Սպառնալիքների սխալ գնահատման հետևանքով կարող են արագանալ սպառազինությունների մրցավազքի տեմպերը՝ որոշ դեպքերում հանգեցնելով սահմանափակ նպատակներով կամ լայնամասշտաբ պատերազմների, և դրա արդյունքում կարող է մշակվել թերի կամ սխալ ռազմավարություն: Հետևաբար, ռազմավարություն իրագործողների առաջնային խնդիրներից է հակառակորդի նպատակադրվածության վերաբերյալ ստույգ պատկերացումների ձևավորումը՝ անկախ հակառակորդի ունեցած ռազմական կարողություններից, քանզի դրանք, որպես այդպիսին, վտանգ չեն ներկայացնում, եթե հակառակորդը նպատակ չունի ռազմական ագրեսիա իրագործել:

Ռազմական սպառնալիքների գնահատման և յուրային ուժերի վրա դրանց ազդեցության համատեքստում պետք է դիտարկել նաև սեփական խոցելի կողմերը: Ինչպես սպառնալիքները, այնպես էլ խոցելի կողմերն առանձին վերցրած վտանգ չեն ներկայացնում պետության համար, եթե չկա հակառակորդի կողմից ռազմական ագրեսիայի նպատակ: Սակայն հակառակորդի

սպառնալից նպատակադրվածությունը և սեփական խոցելիությունը ստեղծում են վտանգի համապատասխան աստիճան: Հետևաբար, վտանգը կարող է սահմանվել որպես սպառնալիքի իրականացման հավանականության (որը չափվում է հարձակվող կողմի նպատակադրվածությամբ և կարողություններով), դրա հաջողության հավանականության (որը չափվում է պաշտպանվող կողմի խոցելիության աստիճանով) և սպառնալիքի իրականացման ու դրա հաջողության դեպքում հնարավոր հետևանքների (որը չափվում է վտանգված միջոցների կարևորությամբ) արտադրյալ: Ռազմական վտանգը չեզոքացնելու համար պետություններն ունեն երկու տարբերակ. հարձակողական դիրքորոշման որդեգրում՝ սպառնացող կողմի նպատակադրվածությունը նվազեցնելու կամ չեզոքացնելու նպատակով, և պաշտպանողական դիրքորոշման որդեգրում՝ մարտավարական դիրքային առավելության միջոցով հետագա ռազմական գործողությունների բարենպաստ ելքն ապահովելու նպատակով:

Ռազմավարության մշակման ընթացքում անհրաժեշտ է խորապես ուսումնասիրել և վեր հանել այն բոլոր հնարավորությունները, որոնք կարող են նպաստել ազգային շահերից բխող նպատակներին հասնելուն: Այդպիսի հնարավորությունների ի հայտ գալը կախված է տվյալ պահին արտաքին կամ ներքաղաքական իրադարձությունների զարգացման ընթացքից: Ինչպես սպառնալիքները, այնպես էլ հնարավորություններն ունեն կարևորության աստիճան: Թե՛ ներկա և թե՛ հետագա հնարավորությունները պետք է հայտնաբերվեն և օգտագործվեն՝ սպառնալիքների չեզոքացման կամ նվազեցման, ինչպես նաև ռեսուրսների սղությունը կոմպենսացնելու համար:

Թե՛ հնարավորությունները և թե՛ սպառնալիքները կապված են ազգային շահի հետ և ազդեցություն ունեն այդ շահի վրա: Պետությունները կարող են ունենալ շահեր՝ առանց սպառնալիքների առկայության, սակայն երբ շահերն արդեն սահմանված են, սպառնալիքի չափը կամ լրջությունը գնահատվում է կոնկրետ շահի արժեքով և այդ շահի վրա կոնկրետ սպառնալիքի ազդեցության աստիճանով: Այդ պատճառով էլ սպառնալիքների գնահատման գործընթացում անհրաժեշտ է որոշել ոչ միայն ակնկալվող վնասի չափը, այլև սպառնալիքի առարկան (ազգային շահը) և դրա կարևորությունը:

Ռազմավարության նպատակների և խնդիրների սահմանումը նույնպես ռազմավարական գործընթացի կարևորագույն բաղադրիչներից է: Առանց նպատակների ռազմավարությունն անիմաստ է: Ռազմավարության էությունը ցանկալի արդյունքի հասնելն է կամ, որոշ դեպքերում, անցանկալի ար-

դյունքների կանխարգելումը, և այդ արդյունքն էլ հենց կոչվում է ռազմավարական նպատակ: Թեև ռազմավարության իրականացման ընթացքում նպատակները կարող են ենթարկվել որոշակի փոփոխությունների և վերադասավորումների, այդուհանդերձ, դրանք պետք է հստակորեն սահմանվեն նախօրոք: Ռազմավարական նպատակները պետք է սերտորեն կապված լինեն ազգային շահի հետ և նպաստեն այդ շահին հասնելու պետական ջանքերին: Ռազմավարական նպատակների սահմանումն առանց ազգային շահի հաշվառման կարող է հանգեցնել մարտավարական հաջողությունների, սակայն, ի վերջո, կհանգեցնի ռազմավարական անհաջողության: Նպատակները ռազմավարության հաջողությունն են կարճաժամկետ հեռանկարում, իսկ ազգային շահն այդ հաջողությունների համախումբն է, որը տեսանելի է երկարաժամկետ հեռանկարում:

Ռազմավարական նպատակները սահմանելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հետևյալ խնդիրներին.

1. արդյո՞ք հիմնական ռազմավարական նպատակը ծառայում է ազգային շահին,
2. արդյո՞ք այն հաշվի է առնում ազգային շահի դեմ ուղղված սպառնալիքները և դրան հասնելու հնարավորությունները,
3. արդյո՞ք հիմնական նպատակն իրատեսական է և չափելի,
4. ի՞նչ լրացուցիչ նպատակներ կան, որոնք կարող են նպաստել հիմնական նպատակին հասնելուն,
5. արդյո՞ք հիմնական նպատակին հասնելու գործընթացը խոչընդոտում է ընդհանուր ռազմավարության մեկ այլ հիմնական նպատակին հասնելու գործին,
6. ո՞րն է բոլոր հիմնական նպատակների հարաբերական առաջնահերթությունը:

Վերոշարադրյալից պարզ է դառնում, որ ռազմավարական նպատակներն այն ցանկալի արդյունքն են, որին ձգտում ենք հասնել, իսկ ռազմավարությունը՝ այն մեթոդներն ու ձևերն են, որոնք պետք է կիրառվեն նպատակներին հասնելու համար: Ռազմավարական ոլորտի որոշ մասնագետների համար երբեմն դժվարություններ են առաջանում ռազմավարական նպատակները ռազմավարությունից զատելու առումով: Օրինակ, ոմանք դժվարանում են պատասխանել՝ «Սառը պատերազմի» տարիներին ԽՍՀՄ-ի նկատ-

մամբ ԱՄՆ զսպման քաղաքականությունը նպատա՞կ էր, թե՞ ռազմավարություն: Այդ ժամանակաշրջանի քաղաքականություն մշակողների գաղափարախոսությանը քիչ ծանոթ անձը կարող է պնդել, որ ԽՍՀՄ զսպման և մեկուսացման քաղաքականությունը նպատակ էր: Իրականում, այդ քաղաքականության հեղինակներն այն որպես նպատակ չէին դիտարկում, այլ որպես մեխանիզմ, որն, ի վերջո, կհանգեցներ ներքին խժդժությունների, տնտեսական անկման և ԽՍՀՄ փլուզման: Այսինքն՝ այդ քաղաքականությունն իր իսկ հիմնադիրների կողմից դիտարկվում էր որպես ռազմավարություն՝ իր բոլոր տարրերով, և ոչ թե որպես առանձին ռազմավարական նպատակ [5]:

Ռազմավարության իրականացման փուլում օգտագործվող միջոցների առումով իրատեսության և շարունակականության գործոնները պետք է համակողմանի վերլուծության ենթարկվեն: Ամերիկացի հետազոտող Ռոս Հարիսոնի կարծիքով՝ «չափազանցություն չի լինի ասել, որ որևէ պետության կամ կազմակերպության համար ռազմավարության մշակումը և այդ համատեքստում միջոցների ու կարողությունների պլանավորումը ցանկացած ռազմավարություն մշակողի կարևորագույն գործառույթներից են: Նրանք պետք է առաջարկեն, թե ինչպես այդ ռեսուրսները վերածել կարողությունների, ինչով էլ պայմանավորված կլինի ռազմավարության արդյունավետ իրականացման ամբողջ ընթացքը» [3, pp. 35-47]: Ամերիկացի մեկ այլ գիտնական՝ Ջոզեֆ Նայը, ավելացնում է, որ «վերջիվերջո ոչ թե ռեսուրսները, այլ արդյունքներն են կարևոր, և անհրաժեշտ է ավելի շատ ուշադրություն դարձնել ռեսուրսների՝ կարողությունների փոխակերպման գործընթացին, ինչը ռազմավարության մշակման համար որոշիչ գործոն է» [6, p. 10]:

Ռազմավարության իրականացման համար պահանջվող միջոցների պլանավորման փուլում անհրաժեշտ է հաշվի առնել այն, որ ռազմավարական նպատակներին հասնելու ժամկետը կարող է երկարել, հետևաբար այդ միջոցները պետք է համապատասխանեն ռազմավարության իրականացման նոր ժամանակահատվածին: Հնարավոր անհամապատասխանություններից խուսափելու և աշխատանքների արդյունավետության մակարդակը բարձրացնելու համար նպատակահարմար է միջոցների պլանավորման ընթացքում ռազմավարության մշակողներին և հնարավոր կատարողներին ընդգրկել մեկ աշխատանքային խմբի կազմում: Օրինակ, եթե այդ խմբում գնահատական է հնչում, որ կոնկրետ նպատակին հասնելու համար տվյալ միջոցն անիրատեսական է, ապա անհրաժեշտ է սահմանել լրացուցիչ ենթանպա-

տակներ, որոնք կկենտրոնանան համապատասխան կարողություն ստեղծելու վրա՝ հետագայում հիմնական նպատակին հասնելու համար:

Հայոց պատմության ներկա շրջափուլում, առավել քան երբևէ, տնտեսական, անվտանգության և սոցիալական արդի մարտահրավերների դիմակայման համատեքստում ռազմավարական մտածելակերպի զարգացման և հաստատութենացման պահանջը պետք է ներառվի ազգային խնդիրների առաջնային լուծում պահանջող հրամայականների ցանկում: Այս առումով, միջգերատեսչական ձևաչափով ռազմաքաղաքական կրթության ապահովման նպատակով 2015թ. դեկտեմբերին հիմնադրված ՀՀ ՊՆ պաշտպանական ազգային հետազոտական համալսարանը յուրահատուկ առաքելություն է ստանձնել՝ ՀՀ պետական կառավարման համակարգում ռազմավարության ոլորտի որակյալ մասնագետների, ռազմական ու քաղաքացիական կառույցների ապագա ղեկավարների պատրաստման գործում: Համալսարանի ռազմական բաղադրիչի զարգացման շրջանակում պլանավորվում է ստեղծել ԱՄՆ ազգային ռազմական քոլեջի քույր կազմակերպություն, որտեղ համալսարանի ուսանողական կազմը կուսումնասիրի ազգային անվտանգության ռազմավարության մշակման և իրականացման, պետությունը պաշտպանության պատրաստելու կարգն ու առանձնահատկությունները: Նշված հաստատությունը մեծապես կնպաստի ՀՀ պետական կառավարման համակարգում ռազմավարական մտածելակերպի զարգացմանը և ռազմավարություն մշակող քաղաքացիական ու զինվորական մասնագետների հետագա գործունեությունը կդարձնի ավելի համակարգված և նպատակային:

Դեկտեմբեր, 2016թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Arthur F. Lykke Jr.,* “A Methodology for Developing a Military Strategy” in Military Strategy: Theory and Application, ed. Arthur F. Lykke Jr. (Carlisle, PA: U.S. Army War College, 1993).
2. *Krepinevich, Andrew and Watts, Barry.* Regaining Strategic Competence (Washington D.C., CSBA, 2009).
3. *Harrison, Ross.* Strategic Thinking in 3D. VA: Potomac Books, 2013.
4. *Deibel, Terry.* Foreign Affairs Strategy: Logic for American Statecraft (Cambridge University Press, 2007).
5. *John Lewis Gaddis,* Strategies for Containment: A Critical Appraisal of Postwar American National Security (New York: Oxford University Press, 1982).
6. *Nye, Joseph.* The Future of Power (New York, PublicAffairs, 2011).

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Արման Մկրտչյան

Ամփոփագիր

Հոդվածում ներկայացվում է պետական կառավարման համակարգում ռազմավարական մտածելակերպի զարգացման և հաստատութենացման կարևորությունը՝ պաշտպանական-անվտանգային խնդիրների լուծման արդյունավետության բարձրացման տեսանկյունից:

Քննարկվում և վերլուծվում է ռազմավարության մշակման գործընթացը, ներկայացվում են այդ գործընթացի առանձին բաղադրատարրերի դերը և հաջորդականությունը՝ ազգային շահերի պաշտպանության համար ռազմավարական նպատակներ, ռազմավարության իրականացման եղանակներ և միջոցներ մշակելիս:

Որակյալ ռազմավարության մասնագետների պատրաստման և վերապատրաստման առումով կարևորվում է ՀՀ ՊՆ պաշտպանական ազգային հետազոտական համալսարանում միջգերատեսչական ձևաչափով ռազմաքաղաքական կրթության տրամադրման հանգամանքը, ինչը նպաստելու է պաշտպանական-անվտանգային խնդիրների ու մարտահրավերների միասնական ընկալում ձևավորելուն և ռազմապետական համակարգի գործունեությունն ավելի համակարգված և նպատակային դարձնելուն:

ВАЖНОСТЬ РАЗВИТИЯ СТРАТЕГИЧЕСКОГО МЫШЛЕНИЯ В СИСТЕМЕ ГОСУДАРСТВЕННОГО УПРАВЛЕНИЯ

Арман Мкртчян

Резюме

В статье представлена важность развития и институционализации стратегического мышления в системе государственного управления Республики Армения в аспекте повышения эффективности решения оборонно-безопасностных проблем.

Обсуждается и анализируется процесс разработки стратегии, описывается роль и последовательность отдельных элементов этого процесса при разработке стратегических целей, путей и способов реализации стратегии для защиты национальных интересов.

В свете подготовки и переподготовки квалифицированных стратегов для службы в военно-государственной области подчеркивается важность предоставления военно-политического образования в межведомственном формате в Национальном исследовательском университете обороны МО РА, что будет способствовать формированию единого понимания оборонно-безопасностных проблем и вызовов, а также систематизации и целенаправленности деятельности военно-государственной системы.

THE IMPORTANCE OF DEVELOPMENT OF STRATEGIC THINKING IN THE STATE GOVERNANCE SYSTEM

Arman Mkrtchyan

Resume

The article addresses the importance of development and institutionalization of strategic thinking in the state governance system of the Republic of Armenia, in the context of improving the level of effectiveness in dealing with defense and security issues.

The strategy development process is discussed and analyzed, the role and sequence of separate elements of that process is presented in specifying strategic ends, ways and means to protect national interests.

In the framework of preparing and educating qualified strategists to serve in the state -military area, importance is attributed to the provision of interagency level military-political education at the National Defense Research University of the Armenian MoD, which will contribute to the formulation of a joint perception of defense and security issues and challenges, and to the better coordination and purposefulness of the activity of the state -military system.

ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Կարեն Վերանյան*

Բանալի բառեր՝ պաշտպանություն, հասարակական հսկողություն, զինված ուժեր, ապաքաղաքականացում:

2016թ. հոկտեմբերի 5-ին ՀՀ պաշտպանության նորանշանակ նախարարը Ազգային ժողովում ունեցած իր ելույթում հայտարարեց «Ազգ-բանակ» հայեցակարգ-գաղափարախոսության մեկնարկի մասին: Նա իր ելույթում մասնավորապես նշեց, որ ներկայացված հայեցակարգը ամենևին էլ չի նշանակում հասարակության ռազմականացում, այլ նախատեսում է գործընթաց, որին պետք է ներգրավվեն բոլոր պետական կառույցներն ու հասարակությունը՝ ի շահ երկրի պաշտպանության ու անվտանգության ապահովման: Նորանշանակ նախարարը նաև հավելեց, որ պաշտպանության նախարարության հիմնական գործառույթներից են զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական հսկողության հաստատումը և զինված ուժերի ու այլ պետական կառույցների միջև համագործակցության զարգացումը: Նա անդրադարձավ նաև զինված ուժերում քաղաքացիական-պաշտպանական փոխհարաբերություններին, հասարակության, քաղաքացիական ինստիտուտների և զինվորականության միջև համագործակցության խնդիրներին՝ նշելով, որ «պաշտպանության նախարարը սկզբունքորեն պետք է լինի քաղաքացիական անձ, այլ ոչ թե զինվորական»[1]:

ԶՈՒ-ի նկատմամբ քաղաքացիական հսկողությունը՝ որպես պետության ժողովրդավարացման կարևորագույն ցուցիչ

Երկրի զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը բնորոշում է ժողովրդավարացման հասարակական-քաղաքական համակարգերում այնպիսի քաղաքացիական, հասարակական ու պետական միջոցառումների և գործունեության ամբողջական համակարգ, որով կարող են կարգավորվել, անհամեմատ արդյունավետ իրականացվել տվյալ երկրի զինված ուժերի

* «Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավար:

[1] http://voskanapat.info/?p=17659&l=ru

կազմակերպման և որոշումների կայացման մեխանիզմները։ Երկրի ԶՈՒ-ի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության հաստատման ու զարգացման գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է տվյալ հասարակության ժողովրդավարացման, բարեկեցության աստիճանով։ ԶՈՒ-ի նկատմամբ հասարակության վերահսկողությունը սոցիալական, հասարակական բնույթի շարունակական և բազմաբնույթ, բազմաշերտ գործընթաց է, որում ներգրավված է հասարակությունն իր բոլոր ինստիտուտներով ու գործառույթներով։

Բանակի նկատմամբ քաղաքացիական կամ հասարակական վերահսկողության իրագործման արդյունավետությունն ուղղակիորեն կապված է երկրում գործող հասարակական ու պետական մեխանիզմների, ինստիտուտների գործունեությունը հստակեցնող համապատասխան օրենսդրական դաշտի հետ, ուստի քաղաքացիական վերահսկողության հաստատման հարցում օպտիմալ գործիքակազմի ընտրությունն ու կիրառությունը խոսում են յուրաքանչյուր քաղաքացու և հասարակությունում ձևավորված քաղաքական բարձր մշակույթի մասին։ Տվյալ երկրի և հասարակության ժողովրդավարացման գործընթացներից ու որակական աստիճանից է կախված, թե բանակի նկատմամբ հասարակական վերահսկողության իրագործման սոցիալ-քաղաքական գործընթացներն ինչ արդյունավետությամբ կհարաբերեն հասարակություն-պետություն իրավաքաղաքական փոխգործակցությունը։

Զինված ուժերի նկատմամբ հասարակության կողմից իրականացվող վերահսկողությունը ենթադրում է մի քանի գլխավոր նպատակ.

1. բանակաշինության կազմակերպում,
2. բանակի կողմից երկրի և հասարակության անվտանգության ապահովման երաշխավորում,
3. հասարակությունում բանակի ինտեգրման գործընթացի ապահովում,
4. զինված ուժերի ապաքաղաքականացում,
5. բանակաշինության գործում հասարակության ակտիվ ներգրավման միջոցով ԶՈՒ-ում արատավոր երևույթների վերացում,
6. զինվորական փոխհարաբերությունների (զինվոր-սպա, զինվոր-զինվոր) բարելավում,
7. երկրի ռազմականացման բացառում։

Բանակաշինության գործում հասարակության ակտիվ մասնակցության ու պաշտպանական գործընթացների նկատմամբ հասարակական վերահսկողության արդյունքում հասարակությունը կարող է խուսափել երկրի

ռազմականացման տանող հնարավոր զարգացումներից և քաղաքական ճգնաժամերից, ինչպես նաև հասարակությունում բանակի ազդեցության մեծացման ու սահմանադրորեն իրեն վերապահված լիազորությունների չարաշահումից:

ԶՈՒ-ի նկատմամբ հասարակական վերահսկողության սահմանման գործիքակազմի կիրառության արդյունավետությունը պայմանավորված է բանակաշինության գործընթացի զարգացման տեսլականի հարցում հասարակությունում ձևավորվող ընդհանուր համաձայնության վիճակի կազմակերպման գործընթացով և կայացածության աստիճանով, հասարակության համախմբման հնարավորություններով. այն է՝ որքանով են հասարակության տարբեր կառույցներն ու անհատ-քաղաքացիները կարողանում համընդհանուր փոխհամաձայնեցված մոտեցումներ որդեգրել երկրի պաշտպանական անվտանգության ապահովման, բանակաշինության զարգացման, երկրի պաշտպանական քաղաքականության մշակման ու իրագործման, պաշտպանական բյուջետային միջոցների ծախսման, բանակի ու հասարակության միջև հարաբերությունների հստակեցման և համագործակցության ամրապնդման հարցերի վերաբերյալ:

Հասարակական փոխհամաձայնության մթնոլորտի ձևավորման հարցում էական նշանակություն են ձեռք բերում ուժային կառույցների ժողովրդավարացման գործընթացը, հասարակությունում ուժային կառույցների ինտեգրումը:

Բանակի նկատմամբ հասարակական վերահսկողության հաստատման, ուժային կառույցների ժողովրդավարացման, հասարակությանն ինտեգրման հարցերում զգալի է առաջին հերթին ԶԼՄ-ի, հատկապես հեռուստատեսության և ռադիոյի, ինչպես նաև անկախ, չքաղաքականացված հանրային խորհուրդների դերակատարությունը, որոնք կարող են իրենց էական դերն ու ազդեցությունն ունենալ պաշտպանական ոլորտում գոյացած արատավոր կարծրատիպերի հաղթահարման ու հասարակություն-զինված ուժեր համագործակցությունում նոր մոտեցումների, նոր մշակույթի ձևավորման ուղղությամբ:

ԶՈՒ-ի նկատմամբ հասարակական վերահսկողության արևմտյան մոդելները

Արևմտյան երկրների և, առաջին հերթին, Միացյալ Նահանգների զինված ուժերի նկատմամբ հասարակական վերահսկողության հաստատման հիմ-

քում դրված են հեղինակավոր քաղաքագետ Սամյուել Հանթինգթոնի քաղաքացիական-պաշտպանական հարաբերությունների տեսության դրույթները [1]: Բանակի նկատմամբ հանրության վերահսկողության հաստատման ժողովրդավարացման մեխանիզմների վերաբերյալ բավական ուսանելի են նաև հետազոտողներ Գ.Ալմոնդի և Բ.Փաուելի տեսությունները: Նրանք հստակ ձևակերպում են այն տեսակետը, ըստ որի՝ «վերահսկվողների վերահսկողությունը վերահսկողների նկատմամբ առավել ազդեցիկ ու արդյունավետ է, քան վերահսկողների վերահսկումը վերահսկվողների նկատմամբ» [2]:

Վերոնշյալ տեսությունների կարևոր կետերից մեկն ազգային կամ հասարակական փոխհամաձայնության մթնոլորտի ձևավորումն է: Ըստ այդ տեսությունների, պաշտպանության ինստիտուտների նկատմամբ հասարակական վերահսկողության հաստատումը ենթադրում է պետության և հասարակության միջև այնպիսի փոխգործակցության ձևավորում, որով փոխհամաձայնեցման սկզբունքների հիման վրա կանխորոշվում են տվյալ հասարակարգում պաշտպանական կառույցի կամ կառույցների դերն ու նշանակությունը: Այս փոխգործակցության նպատակներից մեկն էլ այն է, որպեսզի բացառվեն հանրությունում զինված ուժերի ինքնուրույնության աստիճանի չարաշահման կամ պետության քաղաքականությունում նրանց ներգրավման ու դերի բարձրացման հնարավորության նախադրյալները:

Միացյալ Նահանգներում պաշտպանական համակարգի նկատմամբ քաղաքացիական կամ ժողովրդավարական (արևմտյան երկրներում ընդունված է «քաղաքացիական» եզրը փոխարինել «ժողովրդավարական» եզրով, *civil-democratic*) վերահսկողության հաստատման անհրաժեշտությունը ծագել է ԱՄՆ պրոֆեսիոնալ զինված ուժերի ձևավորմանը նախորդած ժամանակաշրջանում, երբ հարցի շուրջ գաղափարական տարբերակներ էին առաջարկում երկրի պետական ու քաղաքական գործիչները: 18-րդ դարի ԱՄՆ պետական գործիչ Ալ.Համիլթոնը, որը հետագայում դարձավ ԱՄՆ ֆինանսների առաջին նախարարը, հստակեցնում էր, որ «ենթադրվող կառավարությունում ողջ իշխանությունը պետք է գտնվի ժողովրդի ներկայացուցիչների ձեռքում»[1]:

Բանակի նկատմամբ հանրության վերահսկողության հիմնահարցերի սահմանումները տեղ են գտել ԱՄՆ 1789թ. Սահմանադրությունում, որտեղ հստակեցվում է զինված ուժերի ձևավորման և աջակցման հարցում երկրի

[1] *Кайро М.Ф.,* Гражданский контроль над вооруженными силами, www.umk.virmk.ru/study/U-DISCIPLINA/pol-upravlenie/U-posobie/demo-USA/g-12.htm

Կոնգրեսին վերապահվող պատասխանատվությունը՝ խուսափելով ոլորտում երկրի նախագահի իշխանության ու լիազորությունների ընդլայնման հնարավորությունից: Արդյունքում՝ հենց ԱՄՆ Կոնգրեսն է իրավասու պատերազմ հայտարարել, այլ ոչ թե երկրի գործադիր իշխանությունը: Միևնույն ժամանակ, ԱՄՆ Սահմանադրությամբ երկրի նախագահը զինված ուժերի գլխավոր հրամանատարն է, ինչն էական հնարավորություններ ու լիազորություններ է ընձեռում նրան օտարերկրյա երկրների կողմից հնարավոր ռազմական հարձակումներին արձագանքելու և դրանք զսպելու հարցերում[1]:

ԱՄՆ զինված ուժերի նկատմամբ հասարակական վերահսկողության հարցի հիմքում դրված էր հենց «քաղաքացի-զինվոր» կամ «անհատ-զինվոր» սկզբունքը: Այդ սկզբունքի բուն էությունն այն էր, որ ամերիկյան հանրության յուրաքանչյուր անհատ, լինելով երկրի քաղաքացի, միևնույն ժամանակ նաև զինվորական է և պատրաստ է պաշտպանել իր երկրի ու հանրության անվտանգությունը և ազատությունը:

Երկրի պետական և քաղաքական գործիչները միահամուռ էին այն հարցում, որ ԱՄՆ ԶՈՒ-ն պետք է առաջ մղի ժողովրդավարական սկզբունքները և նպաստի պաշտպանական համակարգում և հասարակության տարբեր շերտերում «քաղաքացի-զինվորական» մոդելի արմատավորմանը և առկա կարծրատիպերի վերացմանը: ԱՄՆ-ում բանակի նկատմամբ հասարակության հսկողության հիմնահարցերի շուրջ հետագայում առավել հայեցակարգային և գաղափարական համակարգային մոտեցումներ առաջարկեց, ինչպես նշեցինք, Սամյուել Հանթինգթոնն իր 1957թ. հրապարակած «Զինվորը և պետությունը. ռազմական-քաղաքացիական հարաբերությունների տեսությունն ու քաղաքականությունը» աշխատությունում:

Ս.Հանթինգթոնի հայեցակարգային մոտեցումներում սահմանվում էր պաշտպանական ոլորտի ներկայացուցիչների և քաղաքացիական ղեկավարության (հանրություն) միջև հավասարակշռության համակարգ, որը հանրային հսկողության կազմակերպման բավական արդյունավետ մեխանիզմների ամբողջություն էր: Հանթինգթոնն առաջարկում էր մի սկզբունք, որով տակտիկական և օպերատիվ զինվորական կամ պաշտպանական հարցերում (մարտական պատրաստվածություն, սպառազինությունների և ռազմական տեխնիկայի կիրառություն ու դրանց տիրապետում և այլն) զինվորականությանը տրվում էին «ինքնավար» լիազորություններ, իսկ պաշտպանական

[1] Նույն տեղում:

քաղաքականության վարման և ռազմավարական հիմնահարցերում նախատեսվում էր լիակատար քաղաքացիական հսկողություն սահմանել պաշտպանական կառույցների և զինվորականության նկատմամբ [1]։

Հանթինգթոնի առաջարկած մոդելը ենթադրում էր պաշտպանական համակարգի ապաքաղաքականացում, քանի որ հասարակության վերահսկողության թուլացման միտումներն ուղղակիորեն փոխկապակցված են և ուղիղ համեմատական են պաշտպանական կառույցների ու բանակի՝ քաղաքականությունում ներգրավվելու և քաղաքականացվելու հնարավորությունների մեծացման հետ։

Հանթինգթոնը հստակեցնում էր զինվորական հրամանատարության կողմից նախատեսվող երեք հիմնական գործառույթ.

1. երկրի անվտանգության ապահովումը երաշխավորելու համար անհրաժեշտ ռազմական պոտենցիալի ձևակերպում և այդ մասին տեղեկացում պետական-քաղաքական առաջնորդներին,
2. ռազմական տեսանկյունից միջազգային իրադրության վերլուծություն և տեղեկացում պետական-քաղաքական ղեկավարությանը,
3. երկրի քաղաքական վերնախավի կողմից ընդունված որոշումների կատարում, եթե նույնիսկ դրանք չեն համընկնում կամ մասնակի հակասում են պաշտպանական կառույցի զինվորական հրամանատարության հայացքներին ու դիրքորոշումներին [1]։

Հանթինգթոնի տեսության համաձայն, պետության անվտանգության ռազմական կամ այլ բնույթի սպառնալիքների քննարկումներին ու վերլուծություններին զինվորական բարձրագույն հրամանատարության անմիջական մասնակցությունը, ինչպես նաև վերջիններիս արտահայտած դիրքորոշումների հետ հաշվի նստելը համարվում են պարտադիր պայման, սակայն պաշտպանական ոլորտի փորձագետների ու զինվորականության գնահատականները կամ կանխատեսումները կրում են բացառապես խորհրդատվական բնույթ։

Ինչպես նշեցինք, պաշտպանական-քաղաքացիական հարաբերությունների կարգավորման ամերիկյան մոդելի համաձայն՝ երկրի նախագահը զինված ուժերի գերագույն հրամանատարն է և Կոնգրեսի համաձայնությամբ նշանակվող պաշտպանության նախարարի միջոցով իրականացնում է զինված ուժերի կառավարման գործընթացը։ Պաշտպանության նախարարն

իր հերթին պատասխանատու է զինված ուժերի կազմակերպման, բանակաշինության, զինված ուժերի մոբիլիզացման և մարտական պատրաստության, նյութատեխնիկական ապահովման հարցերի համար։

Պենտագոնի ղեկավար կազմը բաղկացած է ինչպես զինվորականներից, այնպես էլ քաղաքացիական պաշտոնյաներից, ինչպես, օրինակ, երկրի ցամաքային ուժերը, ռազմաօդային և ռազմածովային ուժերը ղեկավարում են քաղաքացիական անձինք։ Ասել է թե՝ ԱՄՆ զինված ուժերի գերագույն հրամանատարական կազմը ղեկավարում են քաղաքական գործիչներ, իսկ զինված ուժերի կառավարման համակարգն առհասարակ ապակենտրոնացված մեխանիզմ է, որը հնարավորություն չի տալիս կառավարումն իրականացնել մեկ կենտրոնից, հետևաբար չի նպաստում պաշտպանական կառույցների ազդեցության մեծացմանն ու հնարավոր քաղաքականացմանը։ Այս հայեցակարգային մոտեցման հիմքում դրված է «քաղաքացի-զինվորականի» մոդելը, որով երկրում զինվորական վերնախավ ձևավորելու հնարավորություններ չեն տրվում։

Պաշտպանական ինստիտուտի նկատմամբ հասարակական վերահսկողության գործիքակազմի կիրառման արդյունավետության մասին է խոսում պետության ներսում քաղաքական-պաշտպանական հարաբերությունների բրիտանական տեսություն-մոդելը, որի համաձայն՝ տեսականորեն երկրի զինված ուժերը պատասխանատվություն են կրում բրիտանական թագավորության առջև և պաշտպանության նախարարության միջոցով ենթակա են պետության քաղաքական վերնախավին՝ վարչապետին ու կառավարությանը։

Պաշտպանական ինստիտուտների նկատմամբ «քաղաքացիական վերահսկողության» ձևավորման անհրաժեշտությունն Անգլիայում առաջացել էր դեռևս 17-րդ դարում՝ որպես բանակի նկատմամբ ազդեցության տարածման հարցում միապետի դեմ պառլամենտի պայքարի ձև։ Ի դեպ, այդ մասին գրում է նաև Ս.Հանթինգթոնը, որի համաձայն՝ ԱՄՆ-ում բանակի նկատմամբ ազդեցության տարածման՝ ԱՄՆ նախագահի և Կոնգրեսի միջև տարվող պայքարը բավական քիչ է տարբերվում այդ համատեքստում նախորդ դարերում միապետական իշխանությունների ու պառլամենտների միջև պայքարի ձևից։

Պաշտպանական-քաղաքացիական հարաբերությունների կանոնակարգման ուսանելի օրինակ է նաև Կանադայի փորձը։ Այստեղ նման բարեփոխումներ իրականացվեցին 1970-ականների սկզբներին։ 1972թ. համապատասխան իրավական հիմքերի ընդունման արդյունքում Օտտավայի պաշտ-

պանության ռազմական և քաղաքացիական շտաբները միավորվեցին: Դրա արդյունքում հրամկազմը ներկայացնում էր հիմնականում քաղաքացիական անձ, որի անմիջական ենթականերն արդեն զինվորականներ էին [3]:

Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական հսկողության սահմանման, պաշտպանական-քաղաքացիական հարաբերությունների հաստատման և համագործակցության զարգացման արդյունավետության ապահովման համատեքստում (առաջին հերթին արևմտյան երկրներում) էական նշանակություն սկսեցին ձեռք բերել տվյալ երկրի նախագահին կամ վարչապետին կից ազգային անվտանգության ու պաշտպանության հարցերով զբաղվող ինստիտուտները:

1903թ. Մեծ Բրիտանիայում ստեղծվեց Պաշտպանության միջնախարարական կոմիտե, որը լիազորված էր համակարգել բոլոր նախարարությունների ու դեպարտամենտների գործունեությունը զինված ուժերի գործառույթներին վերաբերող հիմնահարցերի շրջանակներում:

Նման խորհրդատվական կենտրոն՝ Ազգային անվտանգության խորհուրդ, հիմնվել է ԱՄՆ-ում 1947թ., որը ղեկավարում է ԱՄՆ նախագահը: Խորհրդի հիմնական նպատակն է խորհուրդներ տալ երկրի նախագահին ներքին, արտաքին և պաշտպանական քաղաքականության վերաբերյալ՝ ազգային անվտանգության խնդիրները լուծելու նպատակներով:

Նմանատիպ խորհրդատվական կենտրոններ գործում են նաև Գերմանիայի կանցլերի, Ֆրանսիայի վարչապետի ենթակայության ներքո, որոնք, հանդիսանալով քաղաքական-վարչարարական խորհրդատվական ինստիտուտներ՝ կարևոր դեր են կատարում նաև զինված ուժերի նկատմամբ հասարակության հսկողության գործընթացի, պաշտպանական-քաղաքացիական հարաբերությունների կանոնակարգման առումներով:

Հետագայում արևմտյան երկրներում, այդ թվում և ԱՄՆ-ում, պաշտպանության և անվտանգության ոլորտի նկատմամբ հասարակական վերահսկողության վրա իրենց ազդեցությունը թողեցին 20-րդ դարի միջազգային հարաբերություններում տեղի ունեցած աշխարհաքաղաքական, ռազմաքաղաքական վերադասավորումները՝ ՄԱԿ, ԵԱՀԿ ինստիտուտների ձևավորման ու զարգացման գործընթացները: Այս առումով առանցքային նշանակություն ունեցավ նաև սառըպատերազմյան ժամանակաշրջանի ավարտը, ինչը նպաստեց միջազգային հարաբերություններում ռազմաքաղաքական համագործակցության (միջազգային և տարածաշրջանային ռազմաքաղաքական

դաշինքների ձևավորում, երկկողմ ձևաչափով համագործակցության հաստատում) ինստիտուցիոնալացմանը:

Հատկապես հիշարժան է 1992-1994թթ. ԵԱՀԿ անդամ պետությունների անվտանգային համագործակցության ֆորումի շրջանակներում մշակված ԵԱՀԿ «Անվտանգության ռազմաքաղաքական ասպեկտների վարքականոնը» ուղեցույցը, որտեղ նշվում էին համաեվրոպական անվտանգային նորաստեղծ համակարգի շրջանակներում պետությունների ներքին և միջազգային գործունեության կարգավորման հիմնական սկզբունքներն ու ուղղությունները ռազմաքաղաքական ոլորտում [4]: Միջազգային այս իրավական-կանոնակարգային փաստաթղթի համաձայն, որն ընդունվեց Բուդապեշտում 1994թ. դեկտեմբերի 3-ին, ԵԱՀԿ անդամ յուրաքանչյուր պետություն պարտավորվում էր իր ազգային օրենսդրությունում ամրագրել «Վարքականոնի» պարտականություններն ու հիմնական սկզբունքները: «Վարքականոն»-ում տեղ գտած կարևոր դրույթներից մեկը սահմանում է, որ «անդամ պետությունները զինվորականների և ռազմականացված ուժերի, ներքին անվտանգության ուժերի, ինչպես նաև հետախուզական ծառայությունների ու ոստիկանության ուժերի նկատմամբ ժողովրդավարական քաղաքական վերահսկողությունը դիտում են որպես անվտանգության և կայունության անփոխարինելի տարր»[1]:

Այս փաստաթղթում ամրագրվում է պաշտպանական-քաղաքացիական ինստիտուտների կամ նրանց միջև փոխհարաբերությունների ու համագործակցության կարևոր մի դրույթ՝ զինված ուժերի նկատմամբ վերահսկողության մեխանիզմները, որոնք նախկինում գտնվում էին միայն պետական ապարատի վերահսկողական լիազորությունների շրջանակներում, ապակենտրոնացվում են և փոխանցվում երկրում գործող ժողովրդավարական հասարակական ինստիտուտների հսկողությանը:

Իսրայելական փորձի դիտարկում

1948թ. Իսրայել պետության կազմավորմամբ երկրի քաղաքական վերնախավն անմիջապես անցավ պաշտպանական ինստիտուտի ձևավորման իրավական, իրավաքաղաքական հիմքերի ամրագրմանը: Գտնվելով հարևան արաբական պետությունների հետ մշտական պատերազմի իրավիճակում՝ երկրի պաշտպանական ինստիտուտի իրավական արդյունավետ հիմքերի

[1] Кодекс поведения, касающийся военно-политических аспектов безопасности, http://www.mid.ru/obycnye-vooruzenia/-/asset_publisher/MlJdOT56NKIk/content/id/80370

ամրագրումը բխում էր Իսրայել պետության և հասարակության անվտանգության ապահովման առաջնահերթություններից:

Մինչ պետության հիմնումը 20-րդ դարի առաջին տասնամյակներին, հրեության քաղաքական-հասարակական գործիչները նույնպես ակտիվ աշխատանքներ են տարել պաշտպանական-քաղաքացիական հարաբերությունների կանոնակարգման ուղղությամբ: Հիմնական շեշտադրումները կատարվում էին կրկին «քաղաքացի-զինվորական» սկզբունքի վրա: Պետության հիմնադրումից հետո «քաղաքացի-զինվորական» մոդելը զգալի ազդեցություն ունեցավ երկրի պաշտպանական-քաղաքացիական հարաբերությունների կանոնակարգման տեսանկյունից, որը նախատեսում էր զինված ուժերի զարգացման գործում հասարակության ինտեգրման մեխանիզմների ներդրում:

Գտնվելով մշտական ռազմական գործողությունների և պատերազմների սպառնալիքների ներքո՝ Իսրայելի պաշտպանության բանակն ունեցել և շարունակում է ունենալ քաղաքականացվելու կամ երկիրը ռազմականացման ճանապարհով տանելու բոլոր հնարավորությունները: Սակայն երկրի քաղաքական վերնախավը գիտակցում է Իսրայելի պետական-քաղաքական կառուցվածքում զինված ուժերի հնարավոր քաղաքականացման բացասական հետևանքները, ուստի աջակցություն է ցուցաբերում պաշտպանության ոլորտում հասարակության և պետության կողմից հսկողության սահմանման, բանակաշինության գործին հասարակության ակտիվ ներգրավման հարցերին՝ դրանք պահելով իր ուշադրության կենտրոնում[1]:

Պետության հիմնադրումից հետո ժամանակ առ ժամանակ նկատվել են ցամաքային, ծովային և ռազմաօդային ուժերի միջև ազդեցության հավասարակշռությունը խախտելու և վերջիններիս որոշակի «ինքնավարություն» ընձեռելու միտումներ: Դա տեսանելի էր հատկապես պետության հիմնա-

[1] Պաշտպանական-քաղաքացիական հարաբերությունների ոչ արդյունավետ կանոնակարգման օրինակներից մեկը Թուրքիան է, որտեղ ուժային կառույցները խիստ քաղաքականացված են, ունեն էական ազդեցություն երկրի քաղաքական, ռազմաքաղաքական որոշումների ընդունման համակարգում: Թուրքիայի զինվորական բարձրագույն հրամանատարությունը բազմիցս երկրում ողջ իշխանությունը զավթելու նպատակներով հեղաշրջման փորձեր է կատարել: Թուրքիայի զինվորական բարձրագույն հրամանատարությունը և պաշտպանական ինստիտուտն առհասարակ ներկայանում է որպես պետություն պետության ներսում, որը երկրում ցանկացած քաղաքական ապակայունացման պարագայում կտրուկ ակտիվանում է, մեծացնում իր ազդեցությունը: Երկրի հասարակական, քաղաքական ոլորտներում ուժային ինստիտուտների զգալի ազդեցությունը վկայում է երկրում իրականացվող ժողովրդավարացման գործընթացների անկատարության և առկա լրջագույն խնդիրների մասին, որտեղ պաշտպանական ինստիտուտների նկատմամբ հասարակության հսկողությունը գրեթե բացակայում է:

դրումից հետո Իսրայելի վարած պատերազմական գործողություններին հաջորդած ժամանակահատվածներում, երբ գրանցած հաղթանակից հետո զգալի աճում էր հատկապես երկրի ռազմաօդային ուժերի ազդեցությունը: Սակայն վերջին շրջանում երկրի պետական-քաղաքական, ինչպես նաև զինվորական հրամանատարության քաղաքացիական ճամբարում, պայմանավորված նաև երկրի ժողովրդավարացման ակտիվ գործընթացներով, գերակշիռ են դառնում նրանք, ովքեր կողմ են հիմնական զորամիավորումների միջև հավասարակշռության պահպանմանը, հետևաբար և քաղաքացիական վերահսկողության ինստիտուտի ընդլայնմանը:

1953թ. հոկտեմբերի 18-ին Իսրայելի վարչապետ Դ. Բեն Գուրիոնը կառավարությանը ներկայացրեց երկրի պաշտպանության բանակի և պաշտպանության նախարարության միջև գործառույթների բաժանման ուղեցույցը, որի համաձայն՝ պաշտպանության բանակը պետք է զբաղվեր մարտական գործողությունների նախապատրաստման աշխատանքներով և իրականացներ բուն մարտական գործողությունները, իսկ պաշտպանության նախարարության լիազորությունների շրջանակներում էր գտնվելու ոլորտի ֆինանսական միջոցների կառավարման համակարգի ու ենթակառուցվածքների մասը, ներառյալ գնումները, սպառազինությունների արտադրությունը, զինվորականներին բժշկական ծառայությունների մատուցումը և այլն[1]: Ի դեպ, Բեն Գուրիոնի՝ պաշտպանության ոլորտում հարաբերությունների, լիազորությունների ու պարտականությունների կանոնակարգման մոդելը գործում է մինչ օրս:

Երկրի օրենսդրության համաձայն, վարչապետն է Իսրայել պետության պաշտպանության ոլորտի առանցքային դերակատարություն ունեցող քաղաքական մարմինը: Կառավարությանը կից գործում է պաշտպանական հարցերով միջնախարարական հանձնաժողով՝ երկրի վարչապետի գլխավորությամբ, ինչը նպաստում է պաշտպանական-քաղաքացիական հարաբերությունների կանոնակարգման, պաշտպանության ոլորտում քաղաքացիական հսկողության հաստատման գործընթացի զարգացմանը:

Իսրայելում պաշտպանական-քաղաքացիական հարաբերությունների կարգավորման գործիքակազմի արդյունավետության մասին է խոսում նաև այն հանգամանքը, որ պաշտպանության բանակում ներդրվում են քաղաքա-

[1] Основные характеристики израильской системы организации обороны государства, http://online-books.openu.ac.il/russian/democracy-and-national-security/volume1/article6.html#footnote-10395-33

ցիական ինստիտուտներում ընդունված և գործող քաղաքացիական աշխատանքային հարաբերությունների մոդելները: Զինված ուժերի՝ որպես փակ համակարգի վերաբերյալ նախկին կարծրատիպերի հաղթահարման լավագույն օրինակներից մեկը զինվորականության (այդ թվում և շարքային զինվորականության) շրջանում զինվորական ծառայությունը որպես քաղաքացիական աշխատանքային վարձատրվող ծառայություն ներկայացնելն է, որի աշխատանքային ժամերը կանոնակարգվում են քաղաքացիական աշխատանքային ընդունված ժամանակացույցով:

Հետևություններ

Զարգացած երկրներում պաշտպանական կառույցների նկատմամբ հասարակական հսկողության հաստատման գործիքակազմի կիրառությունը, որպես կանոն, աչքի է ընկել արդյունավետությամբ և նպաստել է այդ պետություններում պաշտպանական-քաղաքացիական հարաբերությունների կանոնակարգմանը, հասարակությունում զինված ուժերի ինտեգրմանը, զինված ուժերի նկատմամբ հասարակական կարծիքում առկա կարծրատիպերի հաղթահարմանն ու բանակի դրական իմիջի ամրապնդմանը: Վերջին տարիներին պաշտպանական ինստիտուտների նկատմամբ հասարակական վերահսկողության ինստիտուտը կիրառություն է գտնում նաև մի շարք զարգացող երկրներում: Այդ ուղղությամբ զգալի աշխատանքներ են կատարվում Ռուսաստանում, Ղազախստանում, Վրաստանում:

Զինված ուժերի նկատմամբ հասարակության հսկողության ինստիտուտի կիրառությունը անհրաժեշտություն է նաև մեր իրականությունում: Պաշտպանական ոլորտում հասարակական հսկողության մեխանիզմներն արդեն արդյունավետորեն կիրառվում են ՀՀ ԶՈՒ-ում, սակայն խնդիրը, թերևս, կարիք ունի առավել հայեցակարգային մոտեցման:

ՀՀ պաշտպանության ոլորտի հանդեպ հասարակության հսկողության գործիքակազմի հետևողական կիրառության ընդլայնման գործընթացը կնպաստի հասարակությանը բանակի ինտեգրմանը, զինված ուժերի վերաբերյալ առկա արատավոր կարծրատիպերի հաղթահարմանը, զինվորական հարաբերությունների բարելավմանը: Մյուս կողմից, պաշտպանության ոլորտի զարգացման գործին հասարակության ակտիվ ներգրավումը հնարավորություն կտա երկրում ռազմական տեխնիկայի և սպառազինությունների արտադրության գործում ներդնել նոր տեխնոլոգիաներ, վերապատրաստել

որակյալ մասնագետներ և զինվորականներ, հետևաբար և բարձրացնել զինված ուժերի մարտունակությունը:

Նոյեմբեր, 2016թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Huntington S.,* The Soldier and the State: The Theory and Politics of Civil-Military Relations. Harvard Univ. Press, 1957.
2. *Almond G.A., Powell G.B.,* Comparative Politics: A Developmental Approach, Boston, 1966.
3. *W.Harriet Critchley,* Changes in Canada's Organization for Defense, 1963–1983.
4. Кодекс поведения, касающийся военно-политических аспектов безопасности, ОБСЕ, 1994.

ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Կարեն Վերանյան

Ամփոփագիր

Հոդվածը նվիրված է պաշտպանության ոլորտում քաղաքացիական-պաշտպանական հարաբերությունների կանոնակարգման, ոլորտի նկատմամբ հասարակության վերահսկողության սահմանման հիմնահարցերի ուսումնասիրությանը: Ներկայացվում են պաշտպանական ինստիտուտների նկատմամբ հասարակական հսկողության հաստատման արևմտյան և այլ երկրների փորձը և գրանցված արդյունքները:

Հետազոտությունը կարող է նպաստել ՀՀ զինված ուժերում պաշտպանական-քաղաքացիական հարաբերությունների կարգավորման հարցերին, զինված ուժերի նկատմամբ հասարակության հսկողության իրավաքաղաքական, հայեցակարգային հիմքերի ամրագրմանը, հասարակությանը զինված ուժերի ինտեգրման գործընթացին:

ОБ УЧРЕЖДЕНИИ ОБЩЕСТВЕННОГО КОНТРОЛЯ НАД ВООРУЖЕННЫМИ СИЛАМИ

Карен Веранян

Резюме

Статья посвящена регулированию гражданско-армейских взаимоотношений в сфере обороны, изучению вопроса об учреждении общественного контроля над вооруженными силами. Представлены результаты и опыт западных и других стран в области установления общественного контроля над оборонными институциями.

Исследование может содействовать решению вопросов регулирования взаимоотношений между гражданскими и военными, фиксированию политико-правовых, концептуальных основ общественного контроля над армией, процессу интеграции общества и вооруженных сил.

REGARDING THE ISSUE OF PUBLIC CONTROL OVER THE ARMED FORCES

Karen Veranyan

Resume

The article addresses issues of civil-military relations regulation and public control over the military. The experience and results of Western and other countries in exerting public control over defense agencies is presented.

The study contributes to regulation of civil-military relations in Republic of Armenia Armed Forces, defining civil, legal and conceptual foundations of public control over the armed forces, and their integration in the society.

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՂՐԱՄՅԱՆՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Հայկարամ Նահապետյան*

Բանալի բառեր ՝Առաջին համաշխարհային, ցարական Ռուսաստան, Անդրկովկասյան երկաթուղի, գաղթականներ, զինվորական տարիներ, զինվոր, մեծ զորապետ:

Որ ապագա մարշալ Հովհաննես Բաղրամյանը մասնակցել է Առաջին համաշխարհայինին, եղել Անդրանիկի զինվորը և կռվել Սարդարապատում՝ սրանք առավելապես հանրահայտ փաստեր են: Սակայն թե ինչ է տեղի ունեցել այդ իրադարձությունների միջև ընկած ժամանակահատվածներում՝ համեմատաբար քիչ է հայտնի: Մինչդեռ արկածներով լի նրա կյանքի առաջին զինվորական տարիները ևս հարուստ էին իրադարձություններով: Կարիերայի դեռևս ստորին աստիճաններին ապագա զորապետը բախվել է իրենից աչալրջություն, քաջություն, համբերություն պահանջող բազմաթիվ վիճակների, ճակատում մենակ մնալով իր ծառայակիցների հետ և առանց վերադասի հետ կապի՝ կայացրել է որոշումներ, որոնք մի կողմից՝ առավելագույն վնաս էին հասցնում հակառակորդին, մյուս կողմից՝ անվտանգ պահում նրա ենթակայության տակ գտնվող զինվորներին:

Եթե չլինեին նրա հաջողություններն Առաջին համաշխարհայինի ընթացքում, քիչ հավանական է, որ մինչև Երկրորդ համաշխարհայինն ու հետագայում նա կարողանար աճել նման տեմպերով՝ դառնալով ԽՍՀՄ բանակի ամենահաջողակ հայ զորականը՝ 1943-ից իր հրամանի տակ ունենալով կես, իսկ 1945թ. ապրիլ-մայիսին՝ նույնիսկ միլիոնից ավելի զորք[1]:

Մեր պատմության ողջ ընթացքում, ներառյալ Տիգրան Մեծի կայսրությունը կամ Բյուզանդիայի էթնիկ հայ կառավարիչները, որևէ ուրիշ հայ նման թվաքանակով զորք երբևէ չի ղեկավարել:

---

* Հ1 հեռուստաընկերության սեփական թղթակից, ԱՄՆ:

[1] Боевые действия Красной Армии в ВОВ; 3-ий Белорусский фронт, http://bdsa.ru/фронты/890-3-723.

800 կմ՝ ոտքով մինչև Բաղդադ. 19-րդ դարի կեսերին ներկայիս ՀՀ Նոյեմբերյանի տարածաշրջանի Կոթի գյուղից Կարապետ Բայրամյանը փոխադրվեց և հաստատվեց Ղարաբաղի Չարդախլու գյուղում[1] [1, էջ 7]:

Չարդախլուում Կարապետի որդի Խաչատուր Բաղրամյանը դարձավ երկաթուղագործ, գրագիտություն սովորեց բանվորական խմբակում, աճեց մինչև բրիգադիր [2, էջ 7]: Նա ցանկանում էր, որ իր միջնեկ որդի Հովհաննեսը ևս երկաթուղային դառնար: Խաչատուր կամ Քրիստափոր Բաղրամյանի ցանկությունն իրականանում է, քանի որ 1915թ. մայիսին, ավարտելով Թիֆլիսի երկաթուղային ուսումնարանը, Հովհաննեսը ծառայության է նշանակվում Անդրկովկասյան երկաթուղու 9-րդ ուղեկալում, որը Ելիզավետպոլի, ներկայիս Գյանջայի տարածքում էր: Համաշխարհային պատերազմն արդեն սկսվել էր: 17-ամյա պատանին իր ուղեկալում տեսնում էր զինվորական ակտիվ երթևեկը, մարտիկներից տեղեկանում Սարիղամիշի կատաղի կռիվների և օսմանյան բանակի ջախջախիչ պարտության մասին: Դրա հետ մեկտեղ տեսնում էր գաղթականներով լի գնացքները…

«Կարսից եկող գնացքները դեպի երկրի խորքն էին բերում հազարավոր գաղթականների, հիմնականում հայ տարեցների, կանանց ու երեխաների: Դրանք այն քիչ թվով երջանիկներից էին, որոնք ռուսական զորքի օգնությամբ փրկվեցին թուրքական յաթաղանից»,- իր հուշերում գրում է Բաղրամյանը [3, էջ 22]:

Կարելի է պատկերացնել, թե ինչ զգացողություններ էին առաջացնում այս տեսարանները հայասեր պատանու սրտում: Զինվորագրվելու որոշումը ենթադրաբար ընդունվել է նաև 9-րդ ուղեկալի պատկերների ազդեցությամբ…

Կենսագիրները նշում են, որ Բաղրամյանը հայկական ջարդերի մասին տեղեկանում էր նաև «Թերեք» ռուսալեզու թերթից, որտեղ տպվում էին այս թեմայով հեղափոխական Սերգեյ Կիրովի հոդվածները: Ոչ բոլշևիկյան մամուլի մասին խորհրդային շրջանի կենսագիրները հասկանալի պատճառներով լռել են: «Օրավուր Թուրքահայաստանից ստացվում են միևնույն մղձավանջային լուրերը, թե ինչ են անում այնտեղ թուրքական զորքերը: Այդ մասին

[1] Ըստ մի վարկածի, Կարապետ Բայրամյանը սպանել էր էթնիկ թյուրքի և հեռացել՝ խուսափելով հետապնդումից: Այդ պատճառով Բայրամյան ազգանունը Չարդախլուում ձևափոխել է Բաղրամյան: Հանդիպում է նաև Բաղրամյանց տարբերակը: Նոյեմբերյանի տարածաշրջանում բնակվում են Բայրամյաններ, որոնք Բաղրամյանների ազգականներն են: Հովհաննես Բաղրամյանն անձնական զրույցներում Տավուշի իր հեռավոր ազգականներին կոչել է «Բայրամոնք»:

չեն կարող լրիվ պատկերացում տալ հայ կանանց ու երեխաների արցունքները»,- գրել է հեղափոխական Կիրովը [4, էջ 15]:

1915թ. դեկտեմբերին Հովհաննեսը կդառնար 18 տարեկան՝ հասնելով զորակոչային տարիքի: Ցարական Ռուսաստանում երկաթուղայինները զինծառայության չէին կանչվում, այսինքն՝ Բաղրամյանը բանակից խուսափելու օրինական հնարավորություն ուներ: Սակայն նա արդեն ուներ իր որոշումը: Ցարական բանակին միանալու դիմումը նա տվել է 1915թ. սեպտեմբերի 16-ին [4, էջ 16]: «Հաղթահարելով ծնողներիս դիմադրությունը՝ հոկտեմբերի 9-ին կամավոր միացա ռուսական բանակին: Ինձ ուղարկեցին Ախալցխա, 116-րդ պահեստային գումարտակ»,- գրում է Բաղրամյանը [3, էջ 25-26]: Իսկ 1976թ. «Ավանգարդ» թերթին տված հարցազրույցում ասել է. «Ես չէի պատրաստվում զինվորական դառնալ: Հանգամանքները ստիպեցին շինել հագնել: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, երբ իմ ժողովրդի գլխին ամպրոպ պայթեց, որոշեցի կամավոր բանակ մեկնել և նրա շարքերում մարտնչել ժողովրդիս թշնամիների դեմ» [5, էջ 73]:

Ախալցխայում եռամսյա ուսումնավարժական հավաքից հետո շարքային Բաղրամյանն ուղարկվում է ճակատ, սակայն ոչ թե Օսմանյան Թուրքիա, որտեղ նա հավանաբար կգերադասեր մեկնել, այլ հակառակ ուղղությամբ: Նախկին երկաթուղայինը երկաթուղով շարժվում է Բորժոմ-Թիֆլիս-Գյանջա-Բաքու ուղերթով: Այնտեղից «Ցեսարևիչ Ալեքսեյ» նավը Բաղրամյանին ու իր ծառայակիցներին հասցնում է պարսկական Էնզելի (այսօր՝ Բենդեր-Էնզելի) նավահանգիստը [3, էջ 27]: Այստեղից նա ոտքով անցնում է դեպի երկրի խորքը: Դեռևս 1907թ. օգոստոսին կնքված ռուս-անգլիական պայմանագրով Պարսկաստանի հյուսիսը համարվում էր ռուսական, հարավը՝ անգլիական ազդեցության գոտի [6, 18 էջ]: Պատմությունը գրեթե կրկնվեց 1941թ. օգոստոսին, երբ Հիտլերի կողմից ԽՍՀՄ-ի վրա հարձակումից հետո միանման մի պայմանագրով արդեն Սովետական Միությունն ու Անգլիան կիսեցին Իրանը: Ընդ որում՝ Բաղրամյանը մի շրջան կրկին ծառայության նշանակվեց «ռուսական ազդեցության գոտում»՝ 1946թ. սկզբին Թուրքիայի դեմ խորհրդային հնարավոր պատերազմում ղեկավար դեր ստանձնելու նպատակով ժամանելով Թավրիզ[1]: Սակայն այս դեպքում՝ որպես բանակի գեներալ:

[1] ԱՄՆ Ազգային արխիվ, Թավրիզում ԱՄՆ հյուպատոս Ռոբերտ Ռասուի գաղտնի հեռագիրը Թեհրանում ԱՄՆ դեսպանատանը, 25 փետրվարի 1946 (անգլերեն, RG 84, Records of the Foreign Service Posts of the Department of State, Iran, U.S. Legation and Embassy, Classified General Records, 1946, 000-771.9, Entry UD 2738; Box 9, Envelope 701-711.9, U.S. National Archives).

1914-ից սկսվել էր թուրքական ակտիվությունը Պարսկաստանում: Տարեվերջին նրանք մի պահ գրավեցին Թավրիզը, ապա, գերմանական ուժերի օգնությամբ՝ Քերմանշահը և Համադանը, Սպահանում սպանվեց Ռուսաստանի փոխհյուպատոսը [7, էջ 7]:

Թուրքերը ճարպկորեն շահարկում էին կրոնական խաղաթուղթը՝ թե՛ Պարսկաստանի, թե՛ Կովկասի ու անգլիական բանակի մահմեդականներին իրենց կողմը գրավելու նպատակով: Պատմաբան Աշոտ Հովհաննիսյանը ԽՍՀՄ կենտրոնական արխիվում գտել էր Կովկասյան բանակի հետախուզական տեղեկանքն այն մասին, թե օսմանցիները հույս ունեին պանիսլամական քարոզչության անվան տակ Բաղդադի արաբներին ոտքի հանել ու ռազմարշավով հասցնել մինչև Երևան[1]: Ռուսական ոստիկանությունը դեռևս 1911թ. արձանագրել էր, որ առևտրականների կամ ուխտագնացների անվան տակ Կովկաս են գալիս օսմանյան պետության գործակալներ, որոնք պանիսլամական քարոզչություն են վարում [6, էջ 42]:

Իր հերթին, Ռուսաստանն անգլիական կայսրության հետ մշակում էր Իրանով դեպի Միջագետք ռուս-անգլիական համատեղ ռազմարշավի ծրագիրը: Այս նպատակներին հասնելու համար 1915թ. հոկտեմբերի 24-ին Կովկասյան բանակի հրամանատարության որոշմամբ ձևավորվեց Կովկասյան ճակատի ռուսական էքսպեդիցիոն կորպուսը՝ հեծելազորային գեներալ Նիկոլայ Բարատովի հրամանատարությամբ [7, էջ 8]: Թե՛ Բարատովի կորպուսի և թե՛ հակառակորդի ուժերը տարբեր ժամանակահատվածներում միջինացված գնահատվում էին 15-25 հազարի սահմաններում: Մինչև նոր նշանակումը Բարատովը Կովկասյան 1-ին կազակական դիվիզիայի հրամանատարն էր, որն աչքի էր ընկել Սարիղամիշի ճակատամարտում:

Շարքային Բաղրամյանը դառնում է Բարատովի ղեկավարած էքսպեդիցիոն կորպուսի 2-րդ սահմանապահ գնդի 4-րդ գումարտակի 15-րդ հարյուրյակի (կամ վաշտի) զինվորական: Ի դեպ, նրա հետ էին ծառայում երկաթուղային ուսումնարանի համակուրսեցիները՝ Նիկոլայ Պերելիգինը և Գրիգորի Օգանեզովը: Վերջինս, հետագայում ծառայելով Կարմիր բանակում, հա-

[1] «Ժանդարմերիայի Բաթումի շրջանի բաժանմունքի պետի օգնականի զեկուցագիրը», ԽՍՀՄ Կենտրոնական պետական ռազմապատմական արխիվ (ներկայում Ռուսաստանի պետական ռազմապատմական արխիվ), ֆոնդ 1300, ցուցակ 29, գործ 158, էջ 170(շ), ըստ *Աշոտ Հարությունյան,* «Կովկասյան ճակատ 1914-1917», էջ 131 (ЦГВИА СССР (ныне Государственный военно-исторический архив РФ), фонд 1300, опись 29, дело 158, л 170(об), по *Ашот Арутюнян,* «Кавказский фронт 1914 1917», стр. 131).

սավ մինչև ԽՍՀՄ ԶՈՒ փոխգնդապետի կոչման: Նա ծագումով Վրաստանի Թելավի քաղաքից էր, ավելի ուշ հաստատվել էր Երևանում, հետագայում նամակներ էր ուղարկում արդեն մարշալ Բաղրամյանին՝ լինելով այն եզակի նամակագիրներից, որոնք ԽՍՀՄ պաշտպանության փոխնախարարին ու լեգենդար մարշալին դիմում էին «դու»-ով, անվանում «Վանյա»՝ հիմք ունենալով իրենց տասնամյակների բարեկամությունը: «Քո բազմաթիվ ընկերներից միայն ես գիտեմ, թե որքան դժվարություն ես հաղթահարել այս ընթացքում: Երբ 1915թ. թուրք բարբարոսները ցեղասպանություն իրականացրին Արևմտյան Հայաստանի բնակչության նկատմամբ, դու, ոչ զորակոչային տարիքի երիտասարդդ… կամավոր միացար Կովկասում գործող բանակին՝ հագնելով ուսադիրներ, խիզախորեն նետվելով համաշխարհային պատերազմի կրակե թոհուբոհի մեջ»,- 1978թ. մարշալի 75-ամյակի առիթով գրած նամակում նշել է Օգանեզովը[1]:

1920-ականներին Բաղրամյանը և Օգանեզովը մի շրջան կրկին միասին ծառայել են Հայկական հրաձգային դիվիզիայում [8, էջ 17]: Իսկ Հայրենական պատերազմի ավարտին Օգանեզովը մասնակցել է Վասիլևսկի-Բաղրամյանի հրամանատարությամբ իրականացված Քյոնիգսբերգի գրավման պատմական օպերացիային:

1956թ. Օգանեզովը հրատարակեց հուշեր, որոնցում մանրամասն անդրադարձավ Բաղրամյանի հետ իր բարեկամությանն Առաջին աշխարհամարտի շրջանում: Ի դեպ, ԽՍՀՄ հերոս, ավիացիայի գեներալ-լեյտենանտ Պյոտր Խոխլովը «Երեք ծովերի վրա» գիրք-հուշագրությունում գրել է Օգանեզովի մասին[2]: Նա մանրամասնում է, որ փոխգնդապետ Օգանեզովը Բեռլինին 1941թ. օգոստոսին ԽՍՀՄ օդուժի հասցրած առաջին ավիահարվածի կազմակերպիչներից էր[3]:

Առաջին մարտը, որին շարքային Բաղրամյանը մասնակցել է, պարսկական Համադան քաղաքի մոտ էր, որտեղ հաղթում են օսմանյան զինվորներից, տեղի մահմեդականներից, քրդերից ու պարսկական ժանդարմերիայից կազմված ուժերին [3, էջ 28]: Այստեղ Բաղրամյանը նաև առաջին անգամ

[1] Պաշտոնաթող փոխգնդապետ Գրիգորի Օգանեզովի շնորհավորական ուղերձը Հ.Ք. Բաղրամյանի 75-ամյակի օրը, 27.11.1972, Հայաստանի ազգային արխիվ, ֆոնդ 404, ցուցակ 1, գործ 710, 1-ին էջ, ռուսերեն (Поздравительный адрес подполковника в отставке Г.Оганезова в день 75-летия И.Х. Баграмяна).

[2] http://militera.lib.ru/memo/russian/hohlov_pi/05.html

[3] Տե՛ս գեներալ Խոխլովի հուշերը, նաև ՌԴ ՌՕՈՒ կայքը, http://www.airforce.ru/memorial/estonia/saaremaa/index.htm

վիրավորվում է: Ըստ Օգանեզովի հուշերի, Համադանում օսմանյան զորքի զինվորներից մեկը նախ հրացանի խզակոթով, ապա սվինով հարվածում է Բաղրամյանին: «Բարեբախտաբար Բաղրամյանի ուսով անցկացրած շինելի փաթթոցը խանգարել էր թուրք զինվորի սվինին»,- գրում է նա [4, էջ 17]: Թուրք զինվորին սպանում է «Սավելիչը»: Այդպես էին զինվորականները կոչում վաշտի հրամանատար, ենթասպա Բոլոտնիցկին:

Քայլելով օրական 30 կմ և ավելի՝ Բաղրամյանն ու իր ծառայակիցներն առաջանում են դեպի Քերմանշահ, որի մոտակայքում նա տեսնում է Բեհիսթունյան հայտնի արձանագրությունը: Այդ տարիքում դեռ անտեղյակ սեպագրի բովանդակությանը՝ ապագա մարշալը հետագայում իր համար պարզում է, որ Դարեհը 25 դարերի վաղեմության այս «փաստաթղթում» խոսում է նաև Արմինա-Հայաստանի մասին:

Փետրվարի 11-ին ցարական զորքը գրավում է Քերմանշահը, որի պաշտպանության ղեկավար, գերմանացի գեներալ կոմս Կանիցն ինքնասպան է լինում [7, էջ 19-20]:

Ապա կորպուսը շարժվում է դեպի Քասրի-Շիրին քաղաքը՝ քայլ առ քայլ Պարսկաստանից դուրս մղելով օսմանյան ուժերը: «Դեպի Քասրի-Շիրին մարտերով առաջխաղացումը տևեց մեկուկես ամիս: Սա Կասպից ծովից մինչև Իրաք երկարատև արշավի թերևս ամենադժվարին և բարդ մասն էր: Մեր զորքերը բախվեցին թուրքերի զորամասերի աճող դիմադրությանը, որոնց օժանդակում էին մեծաթիվ քրդական և ժանդարմական ջոկատներ»,- հիշում է ապագա մարշալը [3, էջ 30]: Քասրի-Շիրինը գրավում են 1916թ. մայիսին: Այստեղ առաջին մարտական պարգևն է ստանում ռոտմիստր Անդրանիկ Մելիք-Շահնազարովը, որն ավելի ուշ դառնալու էր Բաղրամյանի հրամանատարը ՀՀ և Կարմիր բանակի ստորաբաժանումներում: Նրա հայրը՝ ցարական բանակի գեներալ Պողոս Մելիք-Շահնազարովը, այդ օրերին գալիս է Քասրի-Շիրին: Այստեղ իրեն ներկայացնում են աչքի ընկած զինվորներին, այդ թվում և Բաղրամյանին, որը սվինամարտի մեջ էր մտել ասկյարի հետ ու հաղթող դուրս եկել [4, էջ 18-19]: Հետագա ամիսներին Բաղրամյանն ու գեներալ Մելիք-Շահնազարովն ավելի հաճախ էին շփվում:

Վերադառնանք փոխգնդապետ Օգանեզովի՝ 1972թ. մարշալին հղած նամակին, որը լրացնում է թեման. «Որքան փշոտ էր [քո] ճանապարհը: Քեզ սպասում էին փշեր, քարքարուտներ և պարսկական տափաստանների փխրուն ավազները: Այդ օրից դու երբեք չհանեցիր քո ուսադիրները, այլ միայն

փոխում էիր դրանք պաշտոնի և կոչման բարձրացումների դեպքում»: Իսկ Բաղրամյանը, իրեն հատուկ համեստությամբ, պատասխանում նշում է. «Գրի-շա, ինձ թվում է, դու չափից շատ ուշադրություն ես դարձնում իմ անձի վրա»[1]:

Ներկայացնենք, թե ինչպիսին էր ավելի ընդհանուր ռազմական դրությունը Միջագետքում: Հարավից Բարատովի կորպուսին ընդառաջ գալիս էր անգլիական շուրջ 20 հազարանոց զորքը: Անգլիացիները Պարսից ծոցի կողմից ափ ելան 1914թ. նոյեմբերին ու շարժվեցին Բաղդադի ուղղությամբ՝ մոտ 400 կմ: Սկզբնական շրջանում առանց շոշափելի դիմադրության առաջանալով՝ անգլո-հնդկական *«D Force»* կոչվող ստորաբաժանումն, այնուհանդերձ, թերագնահատեց թուրքերի ներուժը: Երբ ներկայիս Իրաքի մայրաքաղաքին մնացել էր 40 կմ, օսմանյան 6-րդ բանակը նախ *«D force»*-ին պարտության մատնեց բաց ճակատամարտում, ապա, երբ անգլիացի գեներալ Թաունսենդը նահանջելով փակվեց Քութ քաղաքում՝ շրջապատեց ու գրավեց այն [9, էջ 42]:

Թուրքերը Բաղդադում տպում և օդանավերից թռուցիկներ էին տարածում բրիտանական զորքի՝ Հնդկաստանից զորակոչված մահմեդականների շրջանում, որոնցում կոչ էին անում «հեռանալ անհավատների բանակից»: Նրանք հիշեցնում էին, որ Բաղդադի մոտակայքում, ուր առաջանում էին անգլիացիները, թաղված էր Մուհամեդ մարգարեն: Ջանքերն ապարդյուն չէին: Բրիտանացի պատմաբան Յուջին Ռոգանը բերում է մի քանի օրինակ, երբ հնդիկ մահմեդականները լքել են դիրքերը՝ որոշ դեպքերում մինչև այդ սպանելով անգլիացի վերադասներին [10, էջ 232]:

Անգլիացիների դեմ օսմանյան զորքը ղեկավարում էին գերմանացի ֆելդմարշալ Կոլմար ֆոն դեր Գոլցը և Էնվերի հորեղբայր Հալիլ փաշան: Վերջինս, ինչպես հայտնի է, ավելի ուշ տպած հուշերում հպարտացել էր, թե իրեն վստահված տարածքներում ձգտել էր մինչև վերջին հայը բոլորին կոտորել[2]: Քութի շրջափակման օրերին Գոլցը մահացավ հիվանդությունից կամ, հնարավոր է, սպանվեց Հալիլի ինտրիգների արդյունքում: Այսպիսով, 1916թ. ապրիլին Թաունսենդը անձնատուր եղավ հենց Խալիլին [11, էջ 267]: Ամերիկյան պատմաբանը նշում է, որ «Խալիլը խոստացել էր Թաունսենդին»,

[1] Поздравительный адрес подполковника в отставке Г.Оганезова в день 75-летия И.Х. Баграмяна, 27 ноября, 1972, Հայաստանի ազգային արխիվ, ֆոնդ 404, ֆայլ 1, գործ 710, 1-ին էջ:

[2] Հալիլ Փաշա Քութ, «Չավարտվող պատերազմ» (Halil Pasa Kut, “Bitmeyen Savas”, Edited by M.T. Sorgun. Istanbul: Yedigün publications), ըստ *Վահագն Դադրյան,* «Հայոց ցեղասպանության փաստագրումը թուրքական աղբյուրներում» (*Vahagn Dadrian,* “Documentation of the Armenian Genocide in Turkish Sources”), հղումը՝ http://norkhosq.net/wp-content/uploads/2011/04/Documentation-of-the-Armenian-Genocide-in-Turkish-Sources1.pdf

թե հանձնվելու դեպքում «դուք և Ձեր ազնվազարմ զորքը կլինեք մեր անմիջական և պատվելի հյուրերը»: Մինչդեռ հայտնի է, որ հանձնված անգլիացի զինվորների մոտ 2/3-ը մինչև պատերազմի ավարտը գերության մեջ մահացավ [12, էջ 348-349; 11, էջ 295]:

Անգլիացի գերյալներին ոտքով քայլեցրին մինչև Օսմանյան կայսրության խորքերը: Նրանք, անցնելով Դեր Զորով, ականատես եղան հայկական կոտորածներին: 1916-ի հունիս-հուլիսին անգլիացի գերիները հասան Ռաս Էլ Էյն, որտեղ նրանց աշխատեցնում էին Բեռլին-Բաղդադ երկաթուղու վրա: Տեսնելով այստեղ հավաքվածներին՝ անգլիացի զինվորներն առաջին բանը, որ ասել էին. «Ձեր մեջ հայեր կա՞ն: Մեզ ուտելիք տվեք, օրերով բան չենք կերել» [13, էջ 294-298]: Ցեղասպանության ենթարկվող հայությունը, այնուամենայնիվ, շարունակում էր մնալ անգլիացի զինվորի վերջին հույսը…

Գեներալ Բարատովի կորպուսին մինչև Բաղդադ մոտ 150 կմ էր մնացել, երբ ստացվեց Քութում Թաունսենդի պարտության լուրը: Անգլիացիներին հաղթելով՝ օսմանյան բանակը հնարավորություն ստացավ Միջագետքի ուժերն ուղղել ռուսական զորքի դեմ:

Մենակ մնալով գերակշիռ ուժերի դեմ՝ Բարատովը հարձակումից անցավ պաշտպանության…

1916թ. հուլիսին այսպիսին էր կացությունը Միջագետքում, երբ Հովհաննես Բաղրամյանին կանչեց «Սավելիչը»: «Գիտես, Իվան, Թիֆլիսի ենթասպաների դպրոց ուղարկելու համար թեկնածուներ են պետք: Դու բոլոր տվյալներով համապատասխանում ես»,- ասել էր «Սավելիչը» [3, էջ 31]:

Այսպես ապագա մարշալը կատարեց իր փայլուն զինվորական կարիերայի առաջին քայլը:

Բաղրամյանից բացի նույն դպրոցի համար ընտրեցին համակուրսեցի Պերելիգինին և ոմն Ակոպովի, որը թիֆլիսահայ էր: Ամռան տապին նրանք երեքով Իրաքից նույն երթով վերադարձան Թիֆլիս: Ճանապարհին Բաղրամյանը կարողացավ այցելել Չարդախլու՝ մոտ տասն օրով տեսնելու հարազատներին:

Բյուրոկրատական քաշքշուկն ու պետական ապարատի անկատարությունը նոր երևույթներ չեն: Թիֆլիսում ենթասպաների դպրոցի վերադասները Բաղրամյանին և Պերելիգինին չընդունեցին՝ համարելով, որ նրանց երկաթուղային կրթությունը բավական չէր դպրոցում ուսանելու համար: Պակասը լրացնելու նպատակով աշնանն ու ձմռան առաջին կեսին Բաղրամ-

յանն ու Պերելիգինը ռուսաստանյան Արմավիր քաղաքում մասնակցեցին հեծելազորային դպրոցի վարժանքներին: Այսպիսով, հետևակային Բաղրամյանը դարձավ նաև հեծելազորային, թեև հայտնի է, որ նա մինչև այդ էլ վատ չէր ձիավարում: Ինչպես կենսագրական գրքում նկատել է լրագրող Միրժանովը, «բոլոր չարդախլվեցիները հիանալի ձիարշավորդներ են» [2, էջ 7]:

Հովհաննես Բաղրամյանի պատանի տարիքի ամենահայտնի նկարներից մեկը հենց Արմավիրում ուսանելու ժամանակ է արվել՝ 1916թ. վերջերին[1]: Այստեղ ապագա մարշալը նաև այցելել է տեղի հայկական գիմնազիայի դասընթացներին: Նա դառնալու էր ԽՍՀՄ բանակի ամենաուսյալ զորավարը՝ սովորելով 9 կրթական հաստատությունում[2]:

Արմավիրում Պերելիգինը չի կարողանում հանձնել ավարտական քննությունները, իսկ Բաղրամյանը, հաջողությամբ ավարտելով այն, նորից գալիս է Թիֆլիս ու 1917թ. փետրվարի 13-ին ընդունվում ենթասպաների դպրոց [4, էջ 19]: Դա ցարական Ռուսաստանի ռազմակրթական հաստատության վերջին ընդունելություններից էր: Մոտ երկու շաբաթ անց հեղափոխական Պետրոգրադում Նիկոլայ 2-րդը հրաժարվեց գահից:

Բաղրամյանը ռուսական բանակի կազմում ակտիվ ռազմական գործողությունների այլևս չի մասնակցել: 1917-ի ամռանը թիֆլիսյան դպրոցն ավարտելով՝ նա որոշ ժամանակ Ելիզավետպոլում պահեստային գնդի ենթասպա էր, որտեղ շարքայիններն իրեն ընտրում են դասակի հրամանատար: Ցարի հրաժարումից հետո Ժամանակավոր կառավարությունն ազատականացում էր սկսել: Սույն բարեփոխումների շրջանակում շարքայիններին իրավունք տրվեց ընտրել կրտսեր հրամկազմին: Շուտով նրան ծառայության են ուղարկում նորից Պարսկաստան, Ուրմիա լճի տարածք, որտեղի զինվորներն էլ նրան ընտրում են գումարտակի ղեկավար կոմիտեի անդամ [3, էջ 33-34]:

Մինչև 1917թ. տարեվերջ Ուրմիայում ակտիվ ռազմական գործողություններ այլևս չեն վարվել, և Բաղրամյանը մասնակցել է տեղական նշանակության որոշ կռիվների:

[1] «Иван Баграмян», http://arm-world.ru/ludi/8323-ivan-bagramyan.html, տե՛ս նաև «Ենթասպայից մինչև մարշալ», Բելոռուսկայա վոյեննայա գազետա, 04.12.2012 («От прапорщика до маршала», Белорусская военная газета), 04.12.2012, http://vsr.mil.by/2012/12/04/ot-praporshhika-do-marshala/

[2] Բաղրամյանը սովորել է Ելիզավետպոլի երկաթուղային դպրոցում (1907-1912), Թիֆլիսի երկաթուղային ուսումնարանում (1912-1915), Արմավիրի հեծելազորային դպրոցում (1916), Արմավիրի հայկական գիմնազիայում (1916), Թիֆլիսի ենթասպաների դպրոցում (1917), մասնակցել Լենինգրադում հեծելավորների դասընթացներին (1924-1925), ԽՍՀՄ ԶՈՒ Գլխավոր շտաբի եռամսյա կուրսերին (1931), ուսանել Մ.Ֆրունզեի անվան զինվորական ակադեմիայում (1931-1934), ԽՍՀՄ ԶՈՒ Գլխավոր շտաբի ակադեմիայում (1936-1938):

1918. լինե՞լ, թե՞ չլինել. Ցարի հրաժարումից կարճ ժամանակ անց սկիզբ առավ մի երևույթ, որն ակնհայտորեն նոր աղետ էր բերելու հայերին՝ ցարական բանակի կազմալուծումն ու զինվորների զանգվածային հեռացումը բոլոր, այդ թվում նաև Կովկասյան ճակատից: Բացի սովորական դարձած դասալքությունից, բոլշևիկյան քարոզչությունը զինվորներին կոչ էր անում զենքն ուղղել ոչ թե դիմացի խրամատների «աղքատ բանվորների և գյուղացիների», այլ սեփական սպայակազմի դեմ՝ «իմպերիալիստական պատերազմը դասակարգային պայքարի վերափոխելու նպատակով» [14, էջ 16]:

Երբ օսմանյան 3-րդ և Ռուսաստանի Կովկասյան բանակների հրամանատարությունները դեկտեմբերի 18-ին կնքեցին Երզնկայի հրադադարը, Պետրոգրադը վերահսկում էր Տրապիզոնից մինչև Երզնկա, Քեղի, Վան ու Բիթլիս ամբողջ գիծը, որը շարունակվում էր դեպի Պարսկաստան ու Միջագետք: Կովկասյան ճակատում մոբիլիզացված էր հսկայական զորք, ըստ Բաղրամյանի հուշագրության՝ «190 գումարտակ, 98 հազար սվին, 6600 սուր, 1200 գնդացիր, բոլոր տրամաչափերի 300 հրանոթ: Զորքերի ընդհանուր թիվը հասնում էր մի քանի հարյուր հազարի» [3, էջ 45]:

Թվերը փոփոխվում էին՝ կապված տեղաշարժի, մարտական կորուստների հետ: Այդ պատճառով տարբեր պատմաբաններ տարբեր ցուցանիշներ են նշում, սակայն ընդհանուր առմամբ դրանք մոտ են Բաղրամյանի ներկայացրածին[1]: Կովկասում ռուսական զորքին, երկաթուղուց բացի, մատակարարում էր 325 բեռնատար, գործում էր ռազմական ավիացիա՝ 20 օդանավից բաղկացած Սիբիրյան ավիաէսկադրոնը [9, էջ 226]: Իհարկե, նոր պայմաններում հայկական կողմը միայնակ նման ռեսուրսներ հրապարակ բերել չէր կարող: Թուրք զինվորների թիվը Կովկասում գնահատվում էր 78 հազար: Տարբեր ժամանակահատվածներում դրա մոտ 20-40 հազարը գործում էր Իրանում կամ Միջագետքում [6, էջ 164; 11, էջ 296]:

Թուրքերը թվաքանակով զիջում էին ռուսներին, սակայն վերջիններիս հեռանալու պայմաններում նրանք ավելին էին, քան կարող էին մարտադաշտ բերել հայերը: Առավել ևս, որ դարերով սեփական ազգային զինուժ չունենալով՝ մեզ համար դժվար էր նոր ձևավորվող հայկական ինքնուրույն զորքում բառացիորեն շաբաթների ընթացքում հաստատել կարևորագույնը՝ կարգապահությունը: Ըստ հեղինակի դիտարկման, կարգապահության ու

[1] Պատմաբան Աշոտ Հովհաննիսյանը 1915թ. ապրիլի 1-ի դրությամբ Կովկասում ցարական զորքի մասով հետևյալ թվերն է ներկայացնում. 119-ն ու կես գումարտակ, 212 հարյուրյակ, 364 հրանոթ: Նաև նշում է, որ ավելի ուշ զորքերի թիվն աճել է:

փոխադարձ կոորդինացիայի պակասը խիստ ճակատագրական դեր ունեցավ սկզբնական փուլում մեր անհաջողությունների, Արևմտյան Հայաստանից նահանջի համար:

Ամերիկյան դիվանագետները 1917թ. ամռանն արդեն խոսում էին Կովկասյան ճակատի անխուսափելի կազմալուծման և թուրքական նոր արշավանքի մասին: Նոյեմբերի 2-ին Թիֆլիսում ամերիկյան դիվանագետ Ֆելիքս Սմիթը հեռագրում է Պետրոգրադում ԱՄՆ դեսպան Ֆրենսիսին, որ «Տրապիզոնից մինչև Վան ռուսական 12 դիվիզիաներից մնացել են լավագույն դեպքում 4-ը», և «արտագաղթը» շարունակվում էր[1]: Հունվարի 3-ին նույն դիվանագետը գրում էր, որ մեկ կամ մեկուկես ամսում ճակատում ռուսական ստորաբաժանում չի լինի[2]: «Ռուսական կայսերական բանակը նախ դադարեց լինել կայսերական, ապա դադարեց լինել բանակ»,- նշում է ռուսական կայքը[3]:

Բաղրամյանն իր հուշերում գրում է. «Դեկտեմբերին և 1918թ. հունվարին Սարիղամիշով, Կարսով և Ալեքսանդրապոլով անցան մեծ թվով էշելոններ, որոնք ճակատից մեծ թվով զինվորների տարան դեպի Ռուսաստան: Ճակատային-զինվորականները… լավ էին հասկանում, որ թուրքական հրամանատարությունը կօգտվի առիթից, որպեսզի հարձակում սկսի՝ Անդրկովկասը գրավելու նպատակով, և հայ ժողովրդի հանդեպ կիրականացվեն նոր չարիքներ» [3, էջ 52]:

1918թ. մարտի 3-ին բոլշևիկյան կառավարությունը Բրեստ-Լիտովսկում ստորագրեց դաշնագիր, որով ճանաչվեց Օսմանյան Թուրքիայի իշխանությունը ոչ թե անգամ 1914թ. նախապատերազմական, այլ 1878թ. սահմաններում, այսինքն՝ Թուրքիային պետք է տրվեին Սարիղամիշը, Կարսը, Արդահանը, Բաթումը [14, էջ 21]:

Այս պայմաններում Կովկասում գործող Հայոց Ազգային խորհուրդն արագացրեց հայկական ազգային ստորաբաժանումների ձևավորումը: Ռուսաստանի ժամանակավոր կառավարությունը ևս, տեսնելով պահի լրջությունը, Կովկասյան ճակատի հայ կամավորական գումարտակները նախ դարձրեց երկու գումարտակից բաղկացած գնդեր, ապա ձևավորվեցին լրացուցիչ ուժեր, ինչը շարունակվում էր նաև բոլշևիկյան հեղափոխությունից

[1] RG Records of Foreign Services Tiflis USSR, Volume 10 Correspondence American Consultae Tiflis Class 711, 863 and 865-84, 1917, 1918, 1919 «Proposed plan of campaign in the Near East», p. 1.
[2] Նույն տեղում, p. 2.
[3] «Կազակները և 1-ին համաշխարհային պատերազմը», 08.01.2015 (Казаки и Первая мировая война), http://topwar.ru/66022-kazaki-i-pervaya-mirovaya-voyna-chast-v-kavkazskiy-fro«»nt.html

հետո: Եթե չլիներ այս աշխատանքը, դժվար է ասել՝ ինչպիսին կլիներ Մայիսյան հերոսամարտերի հանգուցալուծումը:

Բաղրամյանն իր հուշագրությունում այսպես է ներկայացնում հայկական նոր ձևավորված ստորաբաժանումները՝ Հայկական 1-ին և 2-րդ դիվիզիաներ (որոնց կազմում հիմնականում ցարական բանակի հայկական գնդերն էին՝ գումարած երկու նոր գունդ), Անդրանիկի առանձին հարվածող դիվիզիան, երկու գնդերից բաղկացած Հայկական հեծյալ կորպուսը, Թիֆլիսում և Կարսում ձևավորված Հատուկ հեծյալ գունդը, երզնկացիների, էրզրումցիների, խնուսցիների, ղարաքիլիսցիների, վանեցիների, մակուցիների, զեյթունցիների հեծյալ գնդերը և մի քանի այլ ստորաբաժանում [3, էջ 47-50]: 1976թ. աշնանը Հայաստանում անցկացրած երկու շաբաթների ընթացքում Բաղրամյանը սարդարապատցիների հետ հանդիպմանն ասել էր. «Լավ եմ հիշում զեյթունցի հեծելազորայինների գունդը, ընտրովի քաջեր էին: Կռվում էին անձնազոհ, ընկրկել չկար, մի քայլ հետ նահանջել չկար» [5, էջ 11]:

1917թ. նոյեմբերին Բաղրամյանը Պարսկաստանից Ջուղայով հասնում է Ղարաքիլիսա, որտեղ կարճ ժամանակ ծառայելուց հետո փոխադրվում է Դիլիջան: Ապա նրան ուղարկում են Թիֆլիս՝ իր ստորաբաժանման համար զենք բերելու: Նա թեև դժվարությամբ, բայց կատարում է հանձնարարությունը: Թիֆլիսում ուշադրություն են դարձնում, որ Բաղրամյանն ուներ նաև հեծյալի կրթություն (Արմավիրում) և որոշում են նրան ներառել ձևավորվող Հայկական հատուկ հեծյալ գնդում: Այս գնդի երկու էսկադրոնները Կարսում էին, մնացած ստորաբաժանումներն ու շտաբը՝ Թիֆլիսում: Կոռնետ Բաղրամյանին ուղարկում են Կարս: Որպես զույգ էսկադրոնների ընդհանուր հրամանատար մարշալն իր հուշերում նշում է «կապիտան Ամիրխանյանին»: Ըստ որոշ տեղեկությունների, սույն սպայի մականունը «Տաշի» է եղել: Նրան այդպես էր կոչել Անդրանիկը լավ պարելու համար: Հովհաննես Բաղրամյանը Կարսից շարժվում է դեպի Սարիղամիշ, ապա՝ Էրզրումի ուղղությամբ, որտեղ պետք է մասնակցեր Անդրանիկի հրամանատարությամբ Էրզրումի պաշտպանությանը: Անդրանիկի զինվորը լինելու մասին հայտնի փաստն այս դրվագի հետ է կապված: Սակայն… «Հազիվ էր մեր ուղեկալը բարձրացել լեռնային անցումը, երբ տեսանք դեպի մեզ շարժվող փախստականների մեծ հոսք իրենց ընտանի կենդանիներով և սայլերին բարձած կահկարասիով: Ճանապարհի երկու կողմերին, փախստականների հետ խառնված, հոգնած քայլում էին զինվորների անջատ խմբեր՝ հրացաններով»,- հիշում է մարշալը [3, էջ 56]:

Մարտի 12-ին Էրզրումն ընկել էր: Անդրանիկը, փակելով գաղթականների թիկունքը, նահանջում էր դեպի Սարիղամիշ: Աղետը, որի վտանգի մասին համառորեն խոսվում էր 1917թ. ընթացքում, իրական ուրվագծեր էր ստանում: «Այդ պահին հստակ հասկացա մեր ժողովրդին պատուհասած աղետի ողջ խորությունը»,- հետո կգրի Բաղրամյանը [3, էջ 57]: Կենսագիր Մնացականյանը նշում է, որ առնելով Էրզրումի անկման լուրը՝ Բաղրամյանը լաց է եղել [4, էջ 35]:

Էրզրումի գրավումով օսմանցի զինվորների ձեռքն անցան ահռելի պաշարներ՝ ամբարված Ռուսական կայսրության կողմից: «Դա ավելի քան բավական էր բանակը կերակրելու և դեպի 1914թ. սահմաններն առաջ շարժվելու համար»,- նշում է բրիտանացի պատմաբանը [10, էջ 371]: «Հայերն իրենց պատմութեան ընթացքին չէին տեսած այս տարողութեամբ ռազմամթերթ»,- Էրզրումի անկման նախօրեի վիճակն այսպես է բնութագրում ամերիկահայ հետազոտողը [15, էջ 395]:

Սարիղամիշի Խորասան քաղաքը ցարական ժամանակներում վարչական փոքր շրջանի (պրիստավության) կենտրոն էր[1]: Անդրանիկն այստեղ է իջևանում, ու այստեղ է պատահում լեգենդի և ապագա լեգենդի հանդիպումը: Բաղրամյանի հուշագրությունում և այլ աղբյուրներում այս դրվագը տարբեր է ներկայացվում: Ըստ մարշալի հուշագրության, Անդրանիկը Խորասանում դիտում է հայկական ստորաբաժանումները, գոհ մնում և հրահանգում, որ մի դիվիզիոն, որի կազմում նաև Բաղրամյանի դասակը, Սարիղամիշից փոքր-ինչ առաջանա Էրզրումի ուղղությամբ, դեպի Քյոփրյուքյոյ բնակավայրը և դիրքավորվելով այնտեղ՝ մեկ օրով կասեցնի թուրքական առաջապահ ուժերի հավանական շարժումը դեպի Խորասան: Բաղրամյանի դասակն առաջինն է հասնում Քյոփրյուքյոյ, ավելի ուշ գալիս են մնացած ուժերը և մարտի 14-ի առավոտյան ջարդում թուրքական 150 հոգանոց ջոկատը, որն Էրզրումից արևելք շարժվելով՝ հասել էր Քյոփրյուքյոյ: Դիրքը պահելով մինչև երեկո և այսպիսով կատարած լինելով Անդրանիկի հրամանը՝ կապիտան Ամիրխանյանի դիվիզիոնը նահանջում է Խորասանի ուղղությամբ: Անդրանիկն այդ ժամանակ այստեղից արդեն մեկնել էր Սարիղամիշ [3, էջ 59-60]: Որևէ այլ մանրամասն Անդրանիկի հետ հանդիպման մասին իր գրքում մարշալը չի գրում: Գրեթե նույն ձևով է հանդիպումը ներկայացնում կենսագիր Արամայիս Մնացականյանը:

[1] «Կարսը և Կարսի շրջանը Ռուսաստանի կազմում 1878-1918», 25.03.2015 (Карс и карская область в составе России 1878-1918), http://statehistory.ru/5016/Kars-i-Karsskaya-oblast-v-sostave-Rossii-v-1878-1918-gg/

Համացանցում առկա է «Զորավար Անդրանիկի ապտակները» խորագրով հայտնի հոդվածը, համաձայն որի՝ Բաղրամյանի և Անդրանիկի առաջին և միակ հանդիպմանը Սասնա արծիվն ապտակել է ապագա հայ զորականին: Մեծ հայդուկապետը զայրացել էր, որ Բաղրամյանի դասակում հնչում են դասալքելու կոչեր, «քանի որ «աղաների» որդիները չեն կռվում»: Ըստ հոդվածի՝ 1968թ. ԵՊՀ-ում հանդիպմանը Բաղրամյանին հարցրել էին Խորասանում Անդրանիկի հետ հանդիպման մասին, ինչին նա պատասխանել էր. «Առավոտ շուտ ինձ դուրս կանչեցին: …Զորավարը խոժոռ հայացքով նայեց ինձ ու ապտակեց.

- Կոռնետ Վանո՛, քո այդ երեսուն զինվորները իմ հույսն են… բայց ինձ լուր տվին, որ նրանց մի մասը հրաժարվում է կռվել: Սա մեր հայրենիքն է, ինչ կարևոր է, թե ովքեր են ղեկավարում… Հայրենիքը միշտ կապրի նվիրյալ չարքաշների կյանքով… Գնա կարգի բեր քո էսկադրոնը…

Զորավարի ապտակը ինձ մարշալ դարձրեց: Ոչ մի պարագայում չի կարելի հայրենիքից նեղանալ… Չէ՞ որ 1941-ին աքսորի մեջ գտնվող մեծ թվով խորհրդային գեներալներ վերադարձան պայքարելու ֆաշիզմի դեմ, ինչպես, օրինակ, մարշալ Կոնևը…»,- գրում է հոդվածագիրը[1]:

Սույն պատմությունը որոշ խոցելի կողմեր ունի. Իվան Կոնևը ոչ պատերազմից առաջ, ոչ հետագայում ռեպրեսիայի չի ենթարկվել, և Բաղրամյանը խիստ անհավանական է, որ այս մասով սխալվեր: Ըստ պատմաբան Գրիգոր Աբրահամյանի հուշերի, մարշալը ԵՊՀ է այցելել նաև 1976 և 1978թթ., և այս հանդիպումներից մեկի ժամանակ ներկաներն իրոք հետաքրքրվել են Անդրանիկի մասին մարշալի կարծիքով: «Անդրանիկը հրաշալի և քաջ հրամանատար էր, իսկական հերոս»,- հայտարարել է նա՝ չկարողանալով ավարտել խոսքը, քանի որ սրահը որոտացել է ծափերից [16, էջ 111]: Այլ տեղեկություն Աբրահամյանը չի փոխանցում:

Հայտնի հոդվածի հեղինակը, ցավոք, վախճանվել է, իսկ նրա ներկայացրած սկզբնաղբյուր-գրքերից ոչ մեկում ապտակի դրվագը չկա: Այս բոլոր փաստերը չեն բացառում, թե նշված պատմությունն իրական է, պարզապես հաստատող այլ տվյալներ գտնել առայժմ չի հաջողվել: Հայտնի է, որ 1974թ. Ֆրանսիա այցի ժամանակ Բաղրամյանն այցելել է Պեր Լաշեզ գերեզմանատուն, ծաղկեպսակ դրել Անդրանիկի շիրիմին ու զինվորական պատիվ տվել:

ՀՀ Ազգային արխիվի Բաղրամյանի ֆոնդում 4 թղթապանակ կա զորավար Անդրանիկի թեմայով: Նկատելի էր, որ մարշալը, ՀԽՍՀ մի քանի այլ

[1] Զորավարի ապտակները, 29.09.2014, http://imyerevan.com/hy/society/view/9005

պատմաբանների հետ կապ պահելով, ուշադիր հետևում էր Անդրանիկի անձը «սևացնելու» խորհրդային Ադրբեջանի մի քանի վայ-պատմաբանների ու գրողների (Իղրար Ալիև, Էյուբա Աբասովա, Մամեդ Օրդուբադի և այլն) գործունեությանը և այս թեմայով նամակներ է ուղարկել հայ պատմաբան Ծատուր Աղայանին: ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայից պարբերաբար մարշալին էին փոխանցում Անդրանիկի մասին հրապարակումների պատճենները, վերջինը 1982թ. մայիսին, մահվանից ընդամենը կես տարի առաջ [17, էջ 142, փաստաթուղթ 100]: Զորավար Անդրանիկ - Հովհաննես Բաղրամյան հարաբերությունների ընդգրկուն և կարևոր լինելու պատճառով այս թեման այլ, առանձին ուսումնասիրության առարկա կարող է լինել:

1918թ. մարտի վերջերից հայկական զորքը մոտ երկու շաբաթ կատաղի դիմադրություն է ցույց տալիս Սարիղամիշում: Այս գոյամարտն անուղղակի, բայց շատ լուրջ օգնություն էր դաշնակիցներին: Թուրքիան հայերի դեմ զորք էր ուղարկում փաստացի այլ ճակատների հաշվին՝ մասնավորապես թուլացնելով անգլիացիների դեմ Միջագետքի ուժերը: Անդրադառնալով Միջագետքի մարտերին՝ ամերիկացի պատմաբան Քրատվելը գրում է. «Թուրքերը, որոնց վերջին համալրումները Էնվերն ուղարկել էր Հայաստանի և Կովկասի ուղղությամբ, էլ ավելի էին սեղմվում դեպի հյուսիսի բարձունքները» [12, էջ 609]: Բրիտանացի մեկ այլ պատմաբան՝ Ռոգանը, հենց կովկասյան դիմադրությունն է համարում Առաջին աշխարհամարտում Թուրքիայի պարտությունն արագացրած գործոններից մեկը: Նա նշում էր, որ երբ ավելի ուշ՝ օգոստոսին, Նուրի փաշայի առաջին գրոհը Բաքվի ուղղությամբ Ստեփան Շահումյանը հետ մղեց, «Նուրին համալրում պահանջեց, և Էնվերը ևս երկու օսմանյան գունդ ուղարկեց օգնելու Բաքվի գրավմանը»: «Նրանք վերջապես քաղաքը գրավեցին սեպտեմբերի 15-ին, սակայն Բաքուն ոչ թե միացրին Օսմանյան կայսրությանը, այլ ապահովեցին, որ *նորաստեղծ Ադրբեջան պետությունը* [ընդգծումը՝ *Հ.Ն.*] իրենց հավատարիմը լինի հետցարական Կովկասում»,- գրում է հեղինակը՝ հավելելով, որ «թուրքական զորքն ուղարկելով Միջագետքից ու Պաղեստինից՝ Էնվերի Կովկասյան արշավանքը դարձավ մի հապճեպ գործ, որը նպաստեց Օսմանյան կայսրության կործանմանը» [10, էջ 373]:

Հայկական դիմադրության արդյունքում նաև հետաձգվեց Բաքվի նավթահանքերի գրավումը երիտթուրքերի կողմից, ինչի պատճառով գերմանացիները չէին կարողանում ապահովել իրենց նավթի կարիքները: «1918թ.

ամռանը գերմանացիներն ավելի քան երբևէ նավթի կարիք ունեին» [10, էջ 371 -372; 18, էջ 385]:

Նույնը նկատել է նաև Բաղրամյանը՝ ասելով, որ մայիսյան հերոսամարտերը կասեցրին զավթարարների առաջխաղացումը դեպի Բաքու [3, էջ 91-92]:

Վերադառնալով Սարիղամիշի կռիվներին՝ նշենք, որ այս ընթացքում Բաղրամյանի վաշտը պորուչիկ Գրիգորյանի ենթակայության էսկադրոնի կազմում էր, որին հանձնարարված էր պահել Կըզըլ Գայուկի լեռնանցքը, որտեղով կարող էին առաջանալ թուրքերը Սարիղամիշի մեր հիմնական զորքին հարվածելու համար: Բաղրամյանի ստորաբաժանումը տեղակայվում է Թոյգուն հունական գյուղում, որը գրեթե անմարդաբնակ էր [3, էջ 62]: Ինչպես և Քյոփրյուքյոյի դեպքում, Թոյգունում ևս, հանդիպելով թուրքական առաջապահ ուժերի, Բաղրամյանը կրակի հրաման է տալիս: «Զինվորները հրացաններից կրակ բացեցին: Կորցնելով երեք զինվոր և տալով մի քանի վիրավոր՝ թուրքերը խուճապահար փախան»,- հիշում է նա [3, էջ 64]: Մեկ շաբաթ անց պատմությունը գրեթե նույնությամբ կրկնվում է: Բաղրամյանի դասակը կրկին հրացանազարկ է անում ասկյարներին, որոնք կորուստներով հետ են քաշվում Թոյգունի մատույցներից: Երկու դեպքում էլ պորուչիկ Գրիգորյանը զեկուցում է ղեկավարությանն այս հաջողությունների մասին: Շուտով Գրիգորյանը հիվանդանում է, և Բաղրամյանը ստանձնում է ողջ դիվիզիոնի հրամանատարությունը: Այդ ընթացքում ապրիլի 5-ին թուրքերը գրավում են Սարիղամիշը: Թոյգունի մոտ Բաղրամյանի դիվիզիոնը մի վերջին անգամ գնդակահարում է թուրքական գումարտակը՝ սպանելով տասնյակների, ապա նահանջում մնացած հայկական զորքերի հետ:

Ապրիլի 7-ին ընկնում է Արդահանը, 9-ին՝ Բաթումը և առանց կռվի (Սեյմի վրացական ղեկավարության ցուցումով)՝ Կարսը, ապա, կարճատև հրադադարից հետո՝ Ալեքսանդրապոլը: Բաղրամյանի մասնակցությամբ դիմադրության հաջորդ կետը Սարդարապատն էր, որտեղ և վճռվեց լինել, թե չլինելու հարցը:

Ալեքպոլի անկումից հետո թուրքական 36-րդ «Գելիբոլու» դիվիզիան դեպի Երևան էր առաջանում երկաթուղու գծերով՝ գրավելով կայարաններ ու կիսակայարաններ: Կազմում ունենալով 3 գունդ, հրետանային դիվիզիոններ ու մի քանի գումարտակ՝ ստորաբաժանումն այդ պահին օսմանյան զինուժի ամենամարտունակներից մեկն էր: Մայիսի 20-ին նրանք գրավեցին Արաքս կայարանը: Մայիսի 21-ին թուրքական դիվիզիայի զինվորները, հանդերձա-

վորված ցարական բանակայինների համազգեստով (որ նրանք ձեռք էին գցել Էրզրումում կամ Կարսում), հաղթահարելով հայկական Ալագյազի ջոկատի դիմադրությունը, արևմտյան կողմից մտնում են Սարդարապատ գյուղը: Մոտավորապես նույն պահին գյուղի արևելքից, 5 ձիավորի գլուխ կանգնած, Սարդարապատ է մտնում Հովհաննես Բաղրամյանը, որին գնդապետ Զլոտարևը հանձնարարել էր պարզել, թե ինչ ուժեր են թուրքերը կուտակել գյուղի մատույցներում և ինչպես է ընթանում պաշտպանությունը: Այն, որ Սարդարապատում արդեն թուրք ասկյարներ են շրջում, հայկական հրամանատարությունը չգիտեր: «Որքան մեծ էր զարմանքս, երբ ձիավարելով հասանք եկեղեցի (խոսքը 19-րդ դարում կառուցված Սբ Աստվածածին եկեղեցու մասին է, որը ներկայում գործում է- *Հ.Ն.*) և անսպասելիորեն տեսանք ռուսական բանակի հանդերձանքով 20-ի չափ զինվորականների, որոնք հրացաններն առաջ պահած գալիս էին ընդառաջ: Մեզ տեսնելով՝ կանգ առան, շարունակելով հրացանները պատրաստ պահել»,- հիշում է մարշալ Բաղրամյանը [3, էջ 78-79]:

Կարծելով, թե առջևում հայ զինվորականներ են, հավանաբար Ալագյազի ջոկատից, նա իջնում է ձիուց և, ընդառաջ քայլելով, խաչակնքում՝ ցույց տալու համար, որ քրիստոնյա հայ է: Այդ պահին թուրքերը կրակում են:

«Միայն հասցրի տղաներին հրահանգել՝ «դեպի հետ» ու ինքս էլ պատի անկյունն անցա: Գնդակները սուլելով ծակոտեցին պատը»,- սարդարապատցիների հետ զրույցում ավելի ուշ հիշել է մարշալը [3, էջ 10]: Հեծելավորները վերադառնալով զեկուցում են, թե Բաղրամյանը սպանվել է: Բայց Բաղրամյանին սպանելը դյուրին չէ: Նա կարողանում է խուսափել ասկյարներից և անվնաս վերադառնում է:

Մայիսի 21-ի երեկոյան թուրքերն ամբողջովին տիրում են Սարդարապատին ու գրավում Կամըշլու, ներկայիս Եղեգնուտ գյուղը: Դա թուրքերի վերջին հաղթանակն էր: Հաջորդ օրը գեներալ Սիլիկյանը հակահարձակման հրաման է տալիս, և նրա տեղակալ, Երևանյան զորախմբի փոխհրամանատար Դանիել Բեկ-Փիրումյանի ուժերը հարվածով թուրքերին հետ են մղում այս երկու գյուղերից: Մարտերին հավանաբար մասնակցել է նաև ապագա մարշալը: «Երբ գյուղն ազատեցինք, տեսանք, թե ինչպիսի գազանություններ էին կատարել անօրենները: Ամեն ինչ քարուքանդ էր արված, փլատակների ու մոխրակույտերի էր վերածված»,- գրում է նա [3, էջ 10]: Հայտնի է նաև, որ այս ընթացքում Բաղրամյանը հետախուզական նպատակներով մեկնել է նաև Թալինի ուղղությամբ՝ «ճշտելու Արագածի լանջերով թուրքերի զորամասերի

շարժման ընթացքը» [4, էջ 30]: Թալինից վերադառնալիս՝ նա ճանապարհին շորերի մեջ փաթաթված 2-3 ամսական երեխա է գտնում, որին հետախույզները հանձնում են մոտակա որբատուն [4, էջ 28]:

Եվ սկսվում է Սարդարապատի ճակատամարտը…

Գոյամարտի սկզբում Բաղրամյանը 1-ին հատուկ հեծյալ գնդի և աջից թուրքերի վրա գրոհող Պողոս Բեկ-Փիրումյանի «Ղարաբաղցիների» գնդի միջև կապի սպայի պարտականությունն էր կատարում: Դատելով հուշագրությունից՝ հաճախ գտնվել է «Ղարաբաղցիների» գնդի հրամանատարական կետում, որտեղից դիտել է մարտը: Մայիսի 27-ին Սիլիկյանն, անսպասելի գրոհելով թուրքերի ձախ թևի ուղղությամբ, նրանց ստիպում է հետ քաշվել: Հայկական հարվածների ներքո և շրջափակումից խուսափելու համար սկսում են նահանջել մնացած թուրքական ուժերը: Թշնամուն հետապնդողների թվում էր Հովհաննես Բաղրամյանն իր հեծյալ ջոկատով: Ըստ առկա տվյալների, նա հակառակորդին կրնկակոխ հետևել է մինչև Թալին՝ զեկույցներ ուղարկելով հրամանատարությանը թուրքերի տեղաշարժի մասին: Այստեղ Բաղրամյանին նորից տեսնում ենք առաջապահ հետախուզական ստորաբաժանման հրամանատարի դերում, ինչպես նախկինում պատահել էր [3, էջ 86]:

Ըստ ապագա մարշալի հուշերի, թուրքերի նահանջը կրում էր անկանոն, երբեմն՝ խուճապային բնույթ: Հայկական բանակը նախատեսում էր հարձակվել Ալեքսանդրապոլի ուղղությամբ, սակայն հունիսի 4-ի Բաթումի դաշնագրով հիմնականում ավարտվում են ռազմական գործողությունները:

«Հայ ժողովուրդն ապացուցեց, որ ինքն ինչպես կառուցել ու շենացնել գիտի, այնպես էլ ոսոխին հարվածել գիտի: Նրանց համերաշխ ու բուռն գրոհներին թշնամին չդիմացավ, ծլկեց՝ մարտի դաշտում թողնելով անհամար դիակներ»,- ճակատամարտի մասնակիցների հետ տասնամյակներ անց զրույցում ասել է Հովհաննես Բաղրամյանը [5, էջ 11]:

Ուշագրավ է նաև, որ Սարդարապատի կռվից 60 տարի անց Բաղրամյանը, արդեն որպես մարշալ, վերլուծել է հերոսամարտի ողջ ընթացքը, ուսումնասիրել Սիլիկյանի գործողությունների հաջորդականությունը՝ հանգելով այն կարծիքին, որ զորագնդերի տեղաբաշխման, թիկունքի ու զորքի թևերի ապահովման, պաշտպանությունից հարձակման անցնելու առումներով Սիլիկյանը եղած բարդագույն կացությունում ընդունել է եզակի ճիշտ մարտավարական որոշումներ: «Կարևոր է նկատել, որ գեներալ Սիլիկովը Սարդարապատի օպերացիայի իրականացման իր որոշման հիմքում դրեց ոչ

թե պասիվ պաշտպանությունը, այլ գերազանցող ուժերի դեմ հակընդդեմ վճռական գրոհը: Հենց ակտիվությունն ու վճռականությունը հայկական զորքերը բերեցին պատմական հաղթանակի»,- գրում է մարշալը [3, էջ 91]:

Հայտնի է, որ մայիսյան հերոսամարտերից կարճ ժամանակ անց Բաղրամյանն առաջին անգամ եղել է Երևան քաղաքում: Այս մասին նա նշել է 1968թ. Երևանի 2750-ամյակի առիթով իր շնորհավորական ուղերձում[1]:

Այսպիսով, Առաջին աշխարհամարտի տարիներին Հովհաննես Բաղրամյանի գործունեությունը կարևոր է հիշել, քանի որ այն ավելի պարզորոշ է ի ցույց դնում նրա ազգային նկարագիրը: Որքան էլ Մեծ հայրենականում ու հետագա տարիներին գնդապետ, ապա գեներալ, իսկ հետո՝ մարշալ Բաղրամյանի ռազմական գործերը, ծառայելով Խորհրդային Միությանը, ըստ էության ծառայում էին նաև մեր ժողովրդին, հայերի համար ճակատագրական 1914-1918թթ. նրա կամավոր զինվորագրումն ու պայքարն Օսմանյան Թուրքիայի դեմ Բաղդադի մատույցներից մինչև Սարդարապատ, շատ ավելի ուղղակիորեն են ցույց տալիս, որ Հովհաննես Բաղրամյանը նախ և առաջ հայ էր, իր ժողովրդի անմնացորդ հայրենասերը: Այն, որ խորհրդային կարգն իր ժողովրդին ծառայելու միջոց էր և կոմունիզմ ասածը մարշալի համար երկրորդական դեր ուներ (եթե ընդհանրապես ուներ)՝ երևում է փաստից, որ Հովհաննես Բաղրամյանը Կոմունիստական կուսակցությանը բավական ուշ է միացել՝ անկուսակցական մնալով անգամ 1937-38թթ., բանակում սարսափելի զտումների ժամանակ: Այս փաստը նկատել է բրիտանացի պատմաբան Ջոֆրի Ջյուքսը: «Նա [Բաղրամյանը] Կարմիր բանակում կարիերա արեց, թեև անսովոր էր, որ իբրև ավագ սպա Կոմունիստական կուսակցությանը միացավ միայն 1939թ.»,- գրում է Ջյուքսը [19, էջ 25]: 1939թ. նա միայն դարձել է կուսակցության անդամի թեկնածու, իսկ վերջնական անդամագրվել 1941թ., 44 տարեկան հասակում, երբ արդեն 21 տարի Կարմիր բանակի կազմում էր: Համեմատության համար՝ Ժուկովը, Ռոկոսովսկին, Տիմոշենկոն կուսակցությանը միացել էին 1919թ., Կոնևը՝ 1918թ., Սանդալովը՝ 1918-ից կոմերիտական էր: Հրետանու մարշալ Կոզակովը կուսակցությանն անդամագրվել է 2 անգամ՝ 1918թ., ապա հեռացվել է ու նորից միացել 1932թ.:

Բաղրամյանի ազգային նկարագիրը ևս մեկ անգամ պարզ երևաց կյանքի մայրամուտին, երբ տպեց հուշերը: Գրքի սկզբում տասնյակ էջերով նա

[1] *И.Х. Баграмян,* статья к празднованию 2750-летии г. Еревана, октябрь 1968г., Հայաստանի ազգային արխիվ, ֆոնդ 404, ֆայլ 1:

պատմում է հայկական հարցի, համիդյան ու Ադանայի ջարդերի, Մեծ եղեռնի, հայ կամավորական շարժման, Անդրանիկի, Սիլիկյանի, Դրոյի ու Փիրումյան եղբայրների, մայիսյան հերոսամարտերի, մեծ թվով հայ սպաների մասին: Սովետական Միության տարիներին մարշալն իր կենսագրականում տպագրել է տողեր, որոնք կարող էին խնդրահարույց լինել, խոչընդոտել գրքի հրատարակմանը:

«Ի տարբերություն որոշ պատմաբանների, ես հիմնավորապես և լիակատար վստահությամբ կարող եմ ասել, որ 1918թ. ողբերգական տարում հայկական բանակն իսկական ազգային բանակ էր»,- այսպես է առավելապես դաշնակցության հետ առնչվող զինուժի մասին նախորդ դարի 70-ականներին գրել Բաղրամյանը: Իսկ մեկ այլ տեղ հիշում է Միքայել Նալբանդյանի տողերը. «Մարդ մի անգամ պիտ մեռնի, բայց երանի, որ յուր ազգի ազատության կզոհվի…»:

Առաջին Հանրապետության զինվորն, իհարկե, գիտեր, թե ինչ խոսքեր էր մեջբերում սովետական դարաշրջանում: Եվ դա, անշուշտ, գիտեին նաև պատկան մարմինները…

Նոյեմբեր, 2016թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Կլիմենտ Հարությունյան,* Մարշալ Բաղրամյան, Երևան, 1997:
2. *Մարտին Մերժանով,* Զինվոր, գեներալ, մարշալ, Երևան, 1975:
3. *Ի.Խ. Բաղրամյան,* Իմ հիշողությունները, Երևան, 1979 (*И.Х. Баграмян,* «Мои воспоминания», «Айастан», Ереван 1979):
4. *Արամայիս Մնացականյան,* Մարշալ Բաղրամյան. կյանքի և գործունեության ուրվագիծ, Երևան, 1978:
5. *Կիմ Ղալաչյան,* Տասնչորս օր մարշալ Բաղրամյանի հետ, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1978:
6. *Աշոտ Հարությունյան,* Կովկասյան ճակատ 1914-1917, Երևան, 1971 (*Ашот Арутюнян*, Кавказский фронт 1914-1917, Ереван, 1971):
7. *Պ.Ն. Ստրելյանով (Կալաբուխով)*, Գեներալ Բարատովի կորպուսը, Մոսկվա, 2002 *(П.Н. Стрелянов (Калабухов),* Корпус Генерала Баратова, Москва, 2002):
8. *Գևորգ Ղարիբջանյան,* Հայ մեծ զորավարը, Երևան, 1997:
9. *Ջոֆ Բրիջեր,* Մեծ պատերազմը. ուղեցույց Մեծ Բրիտանիա, 2013 (*Geof Bridger,* “The Great War: Handbook”, UK, 2013):
10. *Յուջին Ռոգան,* Օսմանցիների անկումը, Նյու Յորք, 2013 (*Eugene Rogan,* “The Fall of the Ottomans”, Basic Books, NY, 2013).
11. Առաջին համաշխարհային պատերազմը. պատերազմ հանուն բոլոր պատերազմները վերջացնելու, 2013 (*Peter Simkins, Geofrey Jukes, Michael Hickey,* “The First World War. The war to end All Wars”, Osprey Publishing, 2013).

12. *Չ.Քրութվել,* Մեծ պատերազմի պատմությունը. Միջագետք, Եգիպտոս և Պաղեստին, Չիկագո, 2007 (*Charles R.M.F. Cruttwell,* “A History of the Great War: Mesopotamia, Egypt and Palestine”, Academy Chicago Publisher, 2007).
13. *Գրիգորիս Բալաքյան,* Հայկական Գոլգոթա, Նյու Յորք, 2009 (*Grigoris Balakian,* “Armenian Golgotha”, New York, 2009).
14. *Ռիչարդ Հովհաննիսյան,* Հայաստանի Հանրապետություն, Կալիֆոռնիայի համալսարան, 1974 (*Richard Hovhannisian,* “The Republic of Armenia”, University of California Press – 1974).
15. *Անդրանիկ Չելեպյան,* Զորավար Անդրանիկը և հայ հեղափոխական շարժումը, Երևան, 1990:
16. *Գրիգորի Աբրահամյան,* Զորավար Բաղրամյան, Երևան, 1997 (*Григорий Абрамян,* «Полководец Баграмян», Ереван 1997).
17. Մարշալ Բաղրամյան. փաստաթղթերի և նյութերի ժողովածու (ռուսերեն), ՀՀ ԳԱԱ «Գիտելիք» հրատարակչություն, Երևան, 1997 (Маршал Баграмян. Сборник долументов и материалов).
18. *Ջոն Կիգան,* Առաջին համաշխարհային պատերազմը, Նյու Յորք, 2000 (*John Keegan,* “The First World War”; Vintage Books, 2000; NY).
19. *Ջոֆրի Ջյուքս,* Բաղրամյան. Ստալինի գեներալները գրքից (*Geofrey Jukes,* “Bagramian”, chapter from “Stalins' Generals”, edited by Harold Shukman, NY, 1993).

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՂՐԱՄՅԱՆՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Հայկարամ Նահապետյան

Ամփոփագիր

Մարշալ Հովհաննես Բաղրամյանը մասնակցել է Առաջին համաշխարհայինին, եղել Անդրանիկի զինվորը և կռվել Սարդարապատում. սրանք առավելապես հանրահայտ փաստեր են: Սակայն թե ինչ է տեղի ունեցել այդ իրադարձությունների միջև ընկած ժամանակահատվածներում՝ համեմատաբար քիչ է հայտնի: Առաջին աշխարհամարտի տարիներին Հովհաննես Բաղրամյանի գործունեությունը կարևոր է հիշել, քանի որ այն ավելի պարզորոշ է ի ցույց դնում նրա ազգային նկարագիրը: Որքան էլ Մեծ հայրենականում ու հետագա տարիներին գնդապետ, ապա գեներալ, իսկ հետո՝ մարշալ Բաղրամյանի ռազմական գործերը, ծառայելով Խորհրդային Միությանը, ըստ էության ծառայում էին նաև մեր ժողովրդին, հայերի համար ճակատագրական 1914-1918թթ. նրա կամավոր զինվորագրումն ու պայքարն Օսմանյան Թուրքիայի դեմ ավելի ուղղակիորեն են ցույց տալիս, որ Հովհաննես Բաղրամյանը նախ և առաջ հայ էր, իր ժողովրդի անմնացորդ հայրենասերը:

ОВАНЕС БАГРАМЯН В ГОДЫ ПЕРВОЙ МИРОВОЙ

Айкарам Нахапетян

Резюме

Маршал Ованес Баграмян принимал участие в Первой мировой войне, служил под командованием Андраника и участвовал в Сардарапатской битве – это наиболее известные факты. Однако о том, что произошло между этими событиями, известно сравнительно меньше. Важно помнить о деятельности Ованеса Баграмяна в годы Первой мировой, так как она яснее выявляет его национальную характеристику. Сколько бы военные успехи полковника, затем генерала, а потом и маршала Баграмяна в период Великой Отечественной войны и далее, служа Советскому Союзу, по сути, ни служили и армянскому народу, тем не менее его добровольная служба в судьбоносный для армян период 1914-1918гг. и борьба против Османской Турции более явственно демонстрируют, что Ованес Баграмян прежде всего был армянином, беззаветным патриотом.

HOVHANNES BAGHRAMYAN DURING THE WORLD WAR

Haykaram Nahapetyan

Resume

Marshal Hovhannes Baghramyan participated in World War I, has been Andranik's soldier and fought in Sardarapat battle – these are well-known facts. However, it is not widely known what happened between these events. It is important to remember Hovhannes Baghramyan's activities during the WWI, because it demonstrates his national image. It is true that serving the Soviet Union as a Colonel, then General and subsequently Marshal, Baghramyan's military activities during the World War II also served our nation, but his voluntary enlisting and fight against Ottoman Empire in fateful years for Armenians, 1914-1918, demonstrate that Hovhannes Baghramyan was an Armenian first of all and a devout patriot of his nation.

ԹՈՒՐՔԻԱ-ԱԴՐԲԵՋԱՆ. «ԴԱՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ»՝ ԱՇԽԱՐՀԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՆ

Լիա Էվոյան[*]

Բանալի բառեր ՝ Ադրբեջան-Թուրքիա հարաբերություններ, Կասպից ծովի էներգապաշարներ, նավթային պայմանագիր, օտարերկրյա կազմակերպությունների ներգրավում, «Օղակ» գործողություն, հայերի բռնի տեղահանում:

1993թ. հոկտեմբերի 3-ին Ադրբեջանի Հանրապետությունում տեղի ունեցան նախագահական ընտրություններ, որոնց արդյունքում երկրի նախագահ հռչակվեց Հեյդար Ալիևը: Թուրքիայի կողմից այդ լուրն ընդունվեց ոչ միանշանակ. կար մտավախություն, թե նախկին Ադրբեջանի ԽՍՀ Կոմկուսի առաջին քարտուղարը նախապատվությունը կտա ՌԴ-ի հետ հարաբերությունների սերտացմանը և չի շարունակի Էլչիբեյի պանթուրանական քաղաքականության գիծը: Դա էր պատճառը, որ Հ.Ալիևի նախագահության առաջին երկու տարիներին Թուրքիայի հետ հարաբերություններն ունեին որոշակի լարված բնույթ: Այդուհանդերձ, Հ.Ալիևի կառավարման ժամանակաշրջանում են Ադրբեջան-Թուրքիա հարաբերությունները թևակոխում որակական նոր փուլ՝ կայուն, ինստիտուցիոնալ համագործակցության ստեղծմամբ և զարգացմամբ: Հարկ է նշել, սակայն, որ նախագահի պաշտոնում Հ.Ալիևի առաջին և հիմնական քայլը ոչ թե Թուրքիայի, այլ Արևմուտքի հետ «դարի գործարքի» կնքումն էր, ինչը մեծապես պայմանավորում է Ադրբեջանի տեղն ու դերը աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական զարգացումներում:

Հարավային Կովկասի և Միջին Ասիայի տարածաշրջանի, մասնավորապես Ադրբեջանի շուրջ աշխարհաքաղաքական պայքարն ընթանում էր Կասպից ծովի էներգապաշարների և էներգակիրների տարանցման ուղիների վերահսկման իրավունքի համար: Սա որպես ռազմավարական խնդիր հստակ ձևակերպված է Զ.Բժեզինսկու «Շախմատային մեծ խաղատախտակ» աշխատությունում: «…Ադրբեջանն իր մեծ էներգետիկական պաշարների հետ նաև աշխարհաքաղաքական առումով ունի առանցքային նշանակու-

[*] Թուրքագետ, ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի հայցորդ:

թյուն: Այդ երկիրը կարելի է համարել Կասպից ծովի ու Միջին Ասիայի հարստություններն ամփոփող անոթի խցան: Անկախ թուրքալեզու Ադրբեջանը, որի տարածքով անցնող նավթամուղները ձգվում են ազգակից ու քաղաքական աջակցություն ցուցաբերող Թուրքիայի տարածքով, կխոչընդոտի Ռուսաստանին՝ իրագործելու տարածաշրջանում իր մոնոպոլ դերը և դրանով կզրկի նրան Միջին Ասիայի նոր պետությունների նկատմամբ գլխավոր քաղաքական ներազդման լծակներից» [1, c. 155]:

«Վերակառուցման» ժամանակաշրջանում սույն ծրագիրն իրագործելու առաջին փուլը սկսվեց իրավասու իշխանությունների հետ Կասպից ծովի պաշարների շուրջ բանակցություններ վարելու գործընթացով:

«Նավթային» պայմանագրի շուրջ բանակցությունների ժամանակագրական ընթացքը և տրամաբանությունը.- Կասպից ծովի, տվյալ պարագայում՝ ադրբեջանական հատվածի նավթային պաշարների շահագործման իրավունքի վերաբերյալ գործնական քայլեր ձեռնարկողներից առաջինը բրիտանական *Ramco Energy* կազմակերպության նախագահ և գործադիր տնօրեն Սթիվ Ռեմփն էր [2, p. 7]: 1986թ. հետո ԽՍՀՄ-ում գործունեություն սկսած ամերիկյան ծագումով գործարարը, 1989թ. ժամանելով Ադրբեջանական ԽՍՀ, սկսեց բանակցությունները երկրի ղեկավարության հետ: Համաձայնություն ձեռք բերվեց նավթահանքերի հարցում օտարերկրյա ձեռնարկությունների ներգրավման ու փայատիրոջ իրավունքով համագործակցության վերաբերյալ [3, p. 49]: 1990թ. օգոստոսին *British Petroleum/Statoil*, *Amoco* և *Unocal* ընկերությունների հետ պաշտոնական բանակցությունների արդյունքում համաձայնագիր ստորագրվեց 1978թ. ԽՍՀՄ ենթակայության «Կասպմորնեֆտեգազ» միավորման հետ՝ արևմտյան ներդրողներ ներգրավելու նպատակով [3]: 1991թ. հունվարի 18-ին ԽՍՀՄ նավթագազային մինիստրության ու Ադրբեջանական ԽՍՀ Մինիստրների խորհրդի No 25/25 համատեղ որոշումով հայտարարվեց «Ազերի» (նախկինում՝ «26 կոմիսարների») նավթահանքի հետազոտման համար «Կասպմորնեֆտեգազի» հետ համատեղ արտադրական միավորում ստեղծելու տենդեր անցկացնելու մասին: 1991թ. հունիսին տենդերին մասնակցեցին ԽՍՀՄ-ի կողմից հրավիրված 15 մասնակիցներից վերոնշյալ երեքը, որոնցից հաղթեց ամերիկյան *Amoco*-ն [4]: Հետագայում աշխատանքներին ներգրավվեցին նաև *British Petroleum/Statoil* ալյանսը, *Unocal, McDermott* և *Ramco* ընկերությունները: Արդեն 1992թ. սկզբին օրակարգում էր նավթամուղի կառուցման ուղիների ընտրության հարցը [5]:

Հարկ է նշել, որ այս իրադարձությունների ժամանակագրությունը՝ 1989-1992թթ., ներառում է ադրբեջանական նավթային գործարքի բանակցային կողմերի և քաղաքական վիճակի փոփոխության երկու փուլ։

Առաջին շրջանում (1989-90թթ.) ի դեմս «Կասպմորնեֆտեգազ» պետական արտադրական միավորման հանդես էր գալիս ԽՍՀՄ ու Ադրբեջանական ԽՍՀ ղեկավարությունը։ 1988թ. մայիսից Ադրբեջանի ղեկավարն էր Ղարաբաղի Շուշի քաղաքում ծնված, Նավթաքիմիական ինստիտուտի շրջանավարտ, Կիրովաբադի (Գյանջա) քաղկոմի նախկին ղեկավար, 1985թ. Պակիստանում ԽՍՀՄ դեսպան Աբդուլ Ռահման Վեզիրովը։ Պաշտոնի նշանակվելով ԼՂ հիմնահարցը ԽՍՀՄ քաղաքական օրակարգում արդիականացվելուց և Սումգայիթում հայերի ջարդերի ծրագրված գործողությունից հետո՝ Ա.Վեզիրովը 1989թ. սեպտեմբերի 23-ին նախաձեռնեց հանրապետությունում ինքնիշխանության մասին սահմանադրական օրենքի ընդունումը։ Նույն տարվա նոյեմբերին նա կարողացավ Մոսկվային պարտադրել ԼՂԻՄ հատուկ կառավարման կոմիտեի (ղեկ.՝ Ա.Վոլսկի) լուծարումը և կայացնել ԼՂԻՄ հարցերով հանրապետական կոմիտեի (ղեկ.՝ Վ.Պոլյանիչկո) ստեղծման որոշումը։ Ա.Վեզիրովը պաշտոնանկ արվեց 1990թ. հունվարին Բաքվում ԱԺՃ – խորհրդային բանակ զինված բախումներից հետո։

Այսպիսով, 1989-90թթ. փուլի վերաբերյալ կարելի է արձանագրել հետևյալ իրողությունները։

Նախ, նավթային գործարքի շուրջ բանակցություններում որպես կողմեր հանդես էին գալիս միջազգային նավթային ընկերությունների ներկայացուցիչը (Սթիվ Ռեմփ) և ԽՍՀՄ ու Ադրբեջանական ԽՍՀ ղեկավարությունը՝ ի դեմս Ա.Վեզիրովի։

Երկրորդ, 1989թ. սեպտեմբերին, մերձբալթյան երկրներից հետո առաջինը խորհրդային հանրապետություններում, Ա.Վեզիրովի նախաձեռնությամբ ընդունվեց «Ադրբեջանական ԽՍՀ ինքնիշխանության մասին սահմանադրական օրենքը»։ Ըստ այդմ, թիվ 6, 10, 12/3,12/11 և 14 կետերով սահմանվեցին.

ա) երկրի տարածքում հանրապետական օրենքների գերակայությունը ԽՍՀՄ օրենքների հետ հակասության պարագայում,

բ) երկրի բնական պաշարների տնօրինման ու շահագործման հանրապետության իշխանությունների ինքնիշխան իրավունքը,

գ) վարչատարածքային միավորումների կազմավորման կամ լուծարման մասին որոշումների կայացման ինքնիշխան իրավունքը,

դ) արտերկրյա պետությունների և այլ միջազգային կազմակերպությունների հետ հարաբերություններ հաստատելու հանրապետության ինքնիշխան իրավունքը:

1990-92թթ. Խորհրդային Ադրբեջանի ղեկավարի պաշտոնում Ա.Վեզիրովին փոխարինեց արմատներով Շեմախից, մասնագիտությամբ նույնպես Նավթաքիմիական ինստիտուտի սան, 1982թ. երկրի Մինիստրների խորհրդի փոխնախագահ, 1989-90թթ. Մինիստրների խորհրդի նախագահ Այազ Մութալիբովը, որը 1990թ. մայիսին խորհրդարանի կողմից ընտրվեց նախագահ, իսկ հուլիսին՝ նաև ԽՄԿԿ ԿԿ Քաղբյուրոյի անդամ: 1991թ. հունվարի 17-ին ԽՍՀՄ-ի հանդեպ Ադրբեջանի լոյալության երաշխիքի դիմաց նա կարողացավ ստանալ խորհրդային ուժային կառույցների կողմից ԼՂ-ում հատուկ ռազմական գործողություն անցկացնելու Մոսկվայի համաձայնությունը [6, c. 93]: Մարտի 17-ին Ադրբեջանը, ի տարբերություն Հայաստանի, մասնակցեց ու քվեարկեց հօգուտ ԽՍՀՄ պահպանման հարցով հանրաքվեի: Ապրիլի 10-16-ին անցկացված երկրի ուժային կառույցների նիստերում (Մութալիբովի գլխավորությամբ) ընդունվեց Ադրբեջանի հայկական բնակավայրերից բնակչության դեպորտացիայի մասին քաղաքական որոշումը: Ապրիլ-օգոստոս ամիսներին խորհրդային բանակը և ՆԳՆ զորքերը 1990թ. աշնանից Ղարաբաղում գործող նորաստեղծ Միլիցիայի հատուկ նշանակության ջոկատների (ՄՀՆՋ) հետ իրագործեցին «Օղակ» (*Кольцо*) գործողությունը, ինչի արդյունքում հայաթափվեցին 21 հայկական բնակավայրեր[1]: 1991թ. օգոստոսի 23-ին, այսպես կոչված «ԳԿՉՊ»-ի հեղաշրջման փորձից հետո, ընդունվեց «Ադրբեջանական Հանրապետության պետական անկախության վերականգնման մասին» հռչակագիրը, որի հիմքով սեպտեմբերին Մութալիբովն ընտրվեց երկրի նախագահ: Ըստ Մութալիբովի մամլո խոսնակ Ռ.Աղաևի, նախագահը ամերիկյան *Amoco* նավթային ընկերության ներկայացուցչի հետ հանդիպմանը որպես գործարքի նախապայման առաջադրել է Արևմուտքի միջամտությունը Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը հօգուտ Ադրբեջանի [7, c. 165]: Ուշագրավ է, որ ադրբեջանցի նախկին պաշտոնյան Մութալիբովի տապալման պատճառ ենթադրաբար համարում է այս բանակցությունների ընթացքը: Այս համատեքստում հատկանշական հանգամանք է *US Mega Oil* նավթային կազմակերպության կողմից վարչակարգի անվտանգության ծառայության բարեփոխման մասին համաձայնությունը՝ նավթային պայմանագրի կնքման դիմաց [8, pp. 41-42]:

[1] http://www.memo.ru/hr/hotpoints/karabah/Getashen/chapter1.htm

Այնուհանդերձ, ինչպես վերը նշվել է, նախ Շուշիի, ապա Խոջալուի անկմանը հաջորդած հեղաշրջման հետևանքով Ա.Մութալիբովը հեռացավ Մոսկվա՝ իշխանությունը թողնելով ԱԺՃ-ին:

Այսպիսով, 1990-92թթ. փուլի վերաբերյալ կարելի է արձանագրել հետևյալ իրողությունները:

Նախ, 1991թ. հունվար-հունիսին ընդունվեց և անցկացվեց վերոհիշյալ տենդերը ըստ ԽՍՀՄ ու Ադրբեջանական ԽՍՀ համատեղ No 25/25 որոշման: Այս նույն ժամանակահատվածը համապատասխանում է դեպորտացիայի մասին քաղաքական որոշումն ընդունելուն և ԽՍՀՄ ու Ադրբեջանական ԽՍՀ զորքերի կողմից «Օղակ» գործողության անցկացմանը: Սա առաջին կարևոր իրողությունն է, որը նավթային գործարքի, մասնավորապես նավթամուղի երթուղու ընտրության շուրջ զարգացումների համատեքստում ձեռք է բերում որոշակի իմաստ:

Երկրորդ, քաղաքական վիճակի փոփոխության հետ փոխվում են նաև բանակցող կողմերը: Արևմուտքն արդեն ներկայացնում են 1991թ. Բաքվում գրասենյակներ հիմնադրած ԱՄՆ (Հյուսթոն) *Amoco* և *Pennzoil*, բրիտանական *British Petrolium*, նորվեգական *Statoil*, ԱՄՆ (Նոր Օռլեան) *Unocal, McDermott International* և *Ramco* կազմակերպությունները: Միաժամանակ, մյուս կողմը, որը սկզբնապես ներկայացնում էր Մոսկվա-Բաքու տանդեմը, արդեն ներկայանում է որպես Ադրբեջանի Հանրապետություն՝ դրանից բխող հետևանքներով:

Մեկ կարևոր հանգամանք ևս: Բացի վերոնշյալ տենդերի գործարքից, հայտնի է ևս մեկ կայացած գործարք: Խոսքը *US Mega Oil* նավթային կազմակերպության կողմից պայմանագիրը ստորագրելու դիմաց վարչակարգի անվտանգության ծառայության բարեփոխման մասին համաձայնության մասին է: Սա երրորդ ուշագրավ իրողությունն է, որը ոչ միայն չի կարելի դասել տնտեսական շահագրգռությունների կարգին, այլև ընդգծում է գործարքի քաղաքական բաղադրիչը:

1992թ. հետո նախկին ԽՍՀՄ տարածքում նոր պետությունների կազմավորմամբ պայմանավորված՝ Կասպից ծովի ավազանի նավթագազային պաշարների յուրացման շուրջ ստեղծվեց որակապես նոր վիճակ: Նավթային պաշարների վերաբաշխման գործարքին ներգրավվեցին այլ երկրներ ու կազմակերպություններ:

Այս ամենը նշանակում էր, որ Ադրբեջանը հայտնվել էր մրցակցային իրավիճակում և ստիպված էր միջազգային ասպարեզում վերահաստատել

իր կարգավիճակը որպես նավթարդյունաբերող կարևոր կողմ: Ահա այս համատեքստում պետք է դիտարկել հետագա իրադարձություններն ու զարգացումները:

«Դարի պայմանագրի» բանակցությունների ավարտական փուլը՝ որպես նախադրյալ նավթային պաշարների արտահանման երթուղիների շուրջ բանակցությունների.- 1992թ. սեպտեմբերի 13-ին Ադրբեջանի նախագահ Ա.Էլչիբեյի № 200 հրամանագրով ստեղծվեց Ադրբեջանի Հանրապետության Պետական նավթային կազմակերպությունը՝ *Azerbaycan Respublikasi Devlet Neft Sirketi (State Oil Company of the Azerbaijan Republic-SOCAR)*, որը միավորեց նախկինում հանրապետական յոթ նավթագազային ձեռնարկություններ [9, p. 112]: Կազմակերպության նախագահ նշանակվեց Ա.Էլչիբեյի խորհրդատու Սաբիթ Բաղիրովը՝ ի պաշտոնե անմիջականորեն ենթարկվելով վարչապետին: *Unocal*-ի առաջարկով նոյեմբերի 9-ին *SOCAR*-ը ստորագրեց «Միասնական ծովային խողովակաշարերի ու տերմինալների համակարգի, մատակարարման միասնական բազայի մասին փոխըմբռնման հինգ հուշագիրը», ինչը դարձավ հետագա միասնական կոնսորցիումի ստեղծման հիմքը *BP*-ի գլխավորությամբ [10, p. 26]: Կարճ ժամանակ անց գործարքին միացավ *Turkish Petroleum* նավթային ընկերությունը՝ ստանալով բաժնեմաս *BP*-ից: Ըստ Ս.Բաղիրովի ու Ս.Ռեմփի, թուրքական ընկերության ներգրավումը Ադրբեջանն իրականացրել է երկրում առկա պանթուրքական տրամադրությունների ու պանթուրքական լոբբինգի արդյունքում՝ միաժամանակ մերժելով ռուսաստանյան *LUKoil*-ի և Իրանի համարժեք առաջարկները [3, p. 49]:

BP-ն, *Statoil*-ը և *Ramco*-ն սկսեցին նավթային օբյեկտների կատարելագործման և նավթային սարքավորումների արտադրության վերականգնման աշխատանքները [3]:

Զուգահեռաբար *Amoco, Pennzoil, McDermott* և մյուս կազմակերպությունները նաև փորձում էին գտնել այլ հնարավորություններ մեծածավալ մերձափնյա և ծովային բնական գազի պաշարները շահագործելու նպատակով: 1993թ. հոկտեմբերին *SOCAR*-ը և *Pennzoil*-ը ստորագրեցին գազի օգտահանման պայմանագիր՝ Գյունեշլիի արդյունահանված գազը խտացնելու և Բաքվի հարավում գտնվող վերամշակման ձեռնարկություն տեղափոխելու մասին: *McDermott*-ը ընդգրկվեց գազը *Pennzoil*-ի վերամշակման օբյեկտներ փոխադրող խողովակաշարերի կառուցման աշխատանքներում [11, p. 5]:

1993թ. հունիսի 5-ին *SOCAR*-ը արևմտյան ընկերություններին ներկայացրեց Հայտարարագիր օգտահանման մասին, որով միավորված Գյունեշլի, Չիրաղ և Ազերի հանքավայրերը նախատեսվում էր շահագործել նոր պայմաններով [12, p. 8]: Նախկինում երեք տարբեր նախագծերում ընդգրկված *Amoco, Pennzoil, Unocal, BP, Statoil, McDermott, Ramco* և *Turkiye Petrolleri Anonim Ortakligi (TPAO)* նավթային ընկերությունները ձևավորեցին կոնսորցիում՝ հետամուտ լինելու նոր համակցված գործարքին: 1993թ. հուլիսի 21-ին Լոնդոնում նշանակվեց պայմանագրի ստորագրության հանդիսավոր արարողությունը:

Ադրբեջանում պետական հեղաշրջման արդյունքում հունիսի 24-ից նախագահի պաշտոնակատարի լիազորությունները ստանձնած Հ.Ալիևը հուլիսին հրամանագիր ստորագրեց բանակցությունները կասեցնելու մասին: Ըստ նրա, 1993թ. հունիսի 6-ին հրաժարական ներկայացրած վարչապետ Փ.Հուսեյնովը ամսի 11-ին ստորագրել է պայմանագիրը կնքելու մասին կառավարության համաձայնագիրը, իսկ հաջորդ օրը Ս.Բաղիրովը կնքել է պայմանագիրը: Խորհրդարանի նախագահ ընտրվելուց հետո, Հ.Ալիևի խոսքերով, վերջինս նրան զգուշացնում է գործարքի ինչ-որ մութ կողմերի մասին և դա հիմք է դառնում պայմանագիրը չեղյալ հայտարարելու և բանակցությունները կասեցնելու որոշումն ընդունելու համար [13]: Այնուհանդերձ, չնայած երկրում տիրող անկայուն իրավիճակին, նոր իշխանություններին խրախուսելու համար 1993թ. հունիսի 21-ին կոնսորցիումի ութ ընկերություններ որպես բոնուս նախնական $81 մլն փոխանցեցին *SOCAR*-ին [14, pp. 33-34]:

Հ.Ալիևի գլխավոր նպատակներից մեկը, սակայն, ակներև դարձավ, երբ օգոստոսին նավթային ընկերությունների ղեկավարների հետ հանդիպմանը նա հայտարարեց. «Եթե զարգացած պետությունների նավթային ընկերությունները հետաքրքրվում են Ադրբեջանի նավթահանքերով… ապա այդ երկրների պետական կառույցները պետք է ուշադրություն դարձնեն հանրապետության ներկա հասարակական-քաղաքական վիճակին» [15, c. 213]:

1994թ. փետրվարի 4-ին նախագահի հաջորդ հրամանագրով *SOCAR*-ը լիազորվեց շարունակել բանակցություններն արևմտյան ընկերությունների հետ՝ հիմք ընդունելով մինչ այդ մշակված սկզբունքները [16]: *SOCAR*-ի նոր վարչակազմի նախագահ դարձավ Նաթիք Ալիևը, փոխնախագահ՝ Իլհամ Ալիևը, իսկ բանակցային խմբի ղեկավար նշանակվեց Մանաֆովը: Բանակցությունները վերսկսվեցին Բաքվում, այնուհետև շարունակվեցին Ստամբու-

լում: Ստամբուլյան բանակցություններում ձեռք բերված փոխհամաձայնության, այն է՝ Ադրբեջանին ավելի մեծ շահութաբաժին (80%) հատկացնելու, նավթահանքերի արդյունահանման ու շահութաբաժնային վճարը $500 մլն սահմանելու արդյունքում Բաքվում ստորագրվեց ստամբուլյան բանակցությունների ավարտի մասին փաստաթուղթը: Միաժամանակ, *SOCAR*-ի պատվիրակությունը Հյուսթոնում (ԱՄՆ) 45-օրյա աշխատանքի ընթացքում շահագրգիռ կողմերի հետ ավարտեց պայմանագրի նախագծի մշակումը:

Այդ ժամանակահատվածում կոնսորցիումին միացավ նաև սաուդյան *Delta Nimir Khazar Ltd* նավթային կազմակերպությունը՝ 1.68% բաժնեմասով, որը գնել էր *Unocal*-ի մասնաբաժնից: Այս ամենից հետո հրապարակվեց նախագահի հրամանագիրը պայմանագիրը ստորագրելու տեղի ու ժամկետի մասին:

Մինչ այդ, սակայն, եղան երկկողմանի մաններներ: Այսպես, 1993թ. օգոստոսին հայտնի դարձավ, որ Լոնդոնում տեղի է ունեցել առանձնակի խորհրդակցություն կոնսորցիումի մի շարք ընկերությունների մասնակցությամբ՝ առանց տեղեկացնելու ադրբեջանական ու թուրքական կողմերին [17]: Որոշ ժամանակ անց՝ դեկտեմբերին, Ադրբեջանի կառավարությունը լուծարեց բանակցային խումբը Մանաֆովի ղեկավարությամբ, ինչի հետևանքով ընթացիկ բանակցությունները կանգ առան: 1994թ. փետրվարին Հ.Ալիևը մեկնեց Լոնդոն, որտեղ ստորագրեց ադրբեջանա-բրիտանական միջկառավարական ութ, այդ թվում՝ «Նավթարդյունաբերության ոլորտում համագործակցության մասին» համաձայնագրեր: Որոշվեց, որ *BP*-ն կստանա 31% բաժնեմաս «Ազերի» և «Չիրաղ» հանքավայրերի շահագործման նախագծից: Բացի այդ, բրիտանա-նորվեգական դաշինքին (*BP/Statoil*) տրվում էր ադրբեջանական կողմի հետ «Շահ-Դենիզ» հանքավայրի գնահատման, հետազոտման և մշակման շուրջ բանակցելու բացառիկ իրավունք [18]: Դրան հաջորդեց արևմտյան ընկերությունների փաստացի վերջնագիրը ստամբուլյան հերթական հանդիպումից հետո, երբ հայտարարվեց, թե առաջիկայում պայմանագիրը չկնքելու դեպքում իրենք կհեռանան՝ «շրխկացնելով» դուռը [19, c. 2]:

Վերջապես, 1994թ. սեպտեմբերի 20-ին Բաքվի «Գյուլիստան» պալատում *SOCAR*-ը և 9 միջազգային նավթային ընկերություններ ստորագրեցին այսպես կոչված «դարի պայմանագիրը», որը նախատեսում էր $7,4 մլրդ-ի ներդրում հաջորդ 30 տարիների ընթացքում ափաշերտային (*offshore*) «Ազերի», «Չիրաղ» և «Գյունեշլի» հանքավայրերի շահագործման համար: Այդ ժա-

մանակամիջոցում նախատեսվում էր արդյունահանել 511 մլն տոննա նավթ, որից 258 մլն տոննան պատկանելու էր Ադրբեջանին [18]: Հանքավայրերի ընդհանուր նավթային պաշարները գնահատվել էին 520 մլն տոննա, իսկ բնական գազի պաշարները՝ մոտ 55 մլրդ մ³: Կառուցվելու էին նաև լրացուցիչ հարթակներ, խողովակաշարեր և տերմինալներ, իսկ $2 մլրդ առանձնացվելու էր նավթը արտարժութային շուկաներ տեղափոխող խողովակաշարեր կառուցելու համար: Ադրբեջանի կառավարությունը նաև ստանալու էր $400 մլն ստորագրման շահութաբաժին կոնսորցիումի կողմից, որից 81 մլն գումարն արդեն վճարվել էր (1993թ. հունիս), իսկ $170 մլն-ը պետք է վճարվեր Ադրբեջանի Մեջլիսի կողմից պայմանագրի վավերացումից հետո (1994թ. դեկտեմբերի 12): Մնացած գումարը պետք է հատկացվեր աստիճանաբար՝ ըստ պայմանագրի կետերի [10, p. 27]: Այդ կետերից մեկի համաձայն, վերջին $70 մլն-ը պետք է հատկացվեր հիմնական նավթը կառուցվելիք նավթամուղով արտահանելու դեպքում, իսկ որպես նավթամուղի կառուցման ժամկետ սահմանվել էր 54 ամիս [10]:

Բացի այդ, գործարքի ստորագրման արարողության ժամանակ կոնսորցիումի անդամները լրացուցիչ $5 մլն նվիրաբերեցին Ադրբեջանի նախագահ Հ.Ալիևին՝ Բաքվի հիվանդանոցի վերականգնման համար: Եվս $50 մլն հատկացվեց կառավարության սոցիալական հիմնադրամին՝ Մեջլիսի կողմից պայմանագրի վավերացումից հետո օգտագործելու պայմանով [10]: «Դարի պայմանագրի» ստորագրումից հետո կողմերը հիմնեցին աշխատանքային կառույցներ՝ Ղեկավար կոմիտե, Ադրբեջանի միջազգային օպերացիոն ընկերություն (ԱՄՕԸ, *AIOC*) և Խորհրդատվական կոմիտե, որոնք սկսեցին իրենց աշխատանքները Ադրբեջանի նախագահի հատուկ հրամանագրով իրավական լիազորություններ ստանալուց հետո: ԱՄՕԸ կազմում ընդգրկված էին 5 օտարերկրացի և 15 ադրբեջանցի, ընկերության ղեկավարն էր *BP* ներկայացուցիչ Թերի Ադամսը՝ 5 տարի ժամկետով:

«Դարի պայմանագիրը» հիմք հանդիսացավ Ադրբեջանի և 19 պետությունների 41 նավթային ընկերությունների միջև 26 այլ գործարքների կնքման համար[1]:

Վերոհիշյալ գործընթացին զուգահեռ, տեղի էին ունենում որոշակի զարգացումներ Ադրբեջան-ՌԴ հարաբերություններում: Պայմանագրով Արև-

[1] *З.Гулиев,* “Контракт Века”: Завоевание и проблемы Азербайджана”, ИА REGNUM, http://www.regnum.ru/news/1446785.html#ixzz2ScXnaHOv

մուտքը վերահսկողություն էր հաստատում Ադրբեջանի, ինչպես նաև տարածաշրջանային հիմնական էներգառեսուրսների նկատմամբ՝ զգալիորեն չեզոքացնելով տարածաշրջանում ՌԴ էներգետիկ մենաշնորհը և ազդեցությունն առհասարակ: Դեռևս 1994թ. հուլիսին Ադրբեջանում ՌԴ դեսպան Վ.Շոնիան հայտարարել էր. «Մենք 200 տարվա համագործակցության պատմություն ունենք Ադրբեջանի հետ: Որևէ քաղաքական գործիչ, ով կժխտի Ռուսաստանի ուժը, երկար չի մնա կառավարությունում: Ռուսաստանը հետաքրքրված է Արևմուտքի հետ Ադրբեջանի համագործակցությամբ, բայց եթե Ռուսաստանին հաշվի չառնելու ինչ-որ փորձեր լինեն, ապա կլինեն անցանկալի հետևանքներ» [20]:

Այնուամենայնիվ, ԱՊՀ կազմում Ադրբեջանի անդամակցության մասին փաստաթուղթը ստորագրվելուց հետո (1993թ. սեպտեմբեր), 1993թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին ռուսաստանյան *LUKoil* նավթային ընկերության հետ բանակցությունների ավարտին ստորագրվեց նաև փաստաթղթերի փաթեթ *SOCAR- LUKoil* համագործակցության վերաբերյալ: Վերջինս ստացավ 10% մասնաբաժին՝ ադրբեջանական 30% բաժնեմասի հաշվին [2, p. 10]: Ռուսաստանի կողմից փաթեթը վավերացրեց Վառելիքի և էներգետիկայի նախարար Յուրի Շաֆրանիկը: Այս նույն ժամանակահատվածում ՌԴ այլ գերատեսչություններ, օրինակ՝ ԱԳՆ-ն, ՊՆ-ն և Արտաքին հետախուզության ծառայությունը, ակտիվ քայլեր էին ձեռնարկում պայմանագիրը խափանելու համար: Ռուսաստանի միջկառավարական նման հակասությունները որոշ փորձագետների կողմից դիտվում են որպես հետխորհրդային դեռևս նոր ու չկայացած կարգի դրսևորում [10, p. 28]: Կար տեսակետ, որ ՌԴ իշխանություններում գործում էր երկու թև, որոնցից մեկը վառելիքաէներգետիկ համալիրն էր՝ կառավարության ղեկավար Վ.Չեռնոմիրդինի գլխավորությամբ [21, p. 223][1]:

Այսպիսով, նավթային գործարքի բաժնեմասային հարաբերակցությունը բաշխվեց հետևյալ կերպ. *BP*՝ 17.1267%, *Statoil*՝ 8.563%, *Amoco*՝ 17.01%,

[1] Այս համատեքստում ուշագրավ է 1998թ. հուլիսին Հ.Ալիևի Լոնդոն կատարած պաշտոնական այցի ժամանակ արձանագրված հետևյալ փաստը. «Ադրբեջանի նախագահն առավել հաճույքով ստորագրում է պայմանագրեր այն մարդկանց հետ, ովքեր իրեն զորավիգ են եղել 1993-94թթ. բարդ շրջանում, ովքեր, հակառակ ՌԴ ցանկության, ռիսկային որոշում ընդունեցին ստորագրելու նավթային գործարքը: Նրա դաշնակիցներն էին Մեծ Բրիտանիայի ու ՌԴ էներգետիկայի երկու նախարարներ Թիմ Էգզարն ու Յուրի Շաֆրանիկը: …Դառնալով նավթային ընկերությունների ղեկավարներ, նրանք որոշեցին հեռանկարային նավթահորեր ստանալ ադրբեջանական հատվածում… Շաֆրանիկն ասաց, որ իր մասնաբաժինը կազմում է 12.5%» (*Э.Ахундова,* Мгновения истины, Баку: "Дом сказки", 2003, с. 197).

Pennzoil՝ 9.8175%, *Ramco*՝ 2.0825%, *Unocal*՝ 11.2%, *McDermott*՝ 2.45%, *TPAO*՝ 1.75%, *LUKoil*՝ 10% և *SOCAR*՝ 20% [10, p. 27]:

ԱՄՆ ճնշումների արդյունքում իրանյան ընկերությունները դուրս դրվեցին գործարքի մասնակիցների շարքից:

1993-94թթ. Ադրբեջանի նոր իշխանությունները նավթային գործարքի առերևույթ տնտեսական խնդիրներից առավել փորձում էին լուծել ավելի մասշտաբային խնդիրներ: Անհրաժեշտ էր լուծել որպես պետական կազմավորում ասպարեզում մնալու և միջազգային հարաբերություններում միավոր դառնալու խնդիրը՝ Լեռնային Ղարաբաղի հետ ընթացող պատերազմի պայմաններում: Անհրաժեշտ էր հստակորեն տարբերակել ռազմավարական դաշնակիցների հետ հարաբերությունների զարգացման և այլ ուժերի միջև հավասարակշռություն պահպանելու համար տարվող քաղաքական ուղեգծերը: Ըստ էության, բանակցությունների գործընթացը վերհանեց ոչ միայն նշյալ խնդիրները, այլև դրանց լուծումների տրամաբանությունը: Այդ համատեքստում միանգամայն հատկանշական են պայմանագրի ստորագրման արարողությանը ներկա թուրքական պատվիրակության ղեկավարի խոսքերը: Թուրքիայի պետնախարար Ն.Ջովհարին, նշելով, թե պայմանագիրն ունի ոչ միայն տնտեսական կարևորություն, այլև նշանակում է եղբայրական Ադրբեջանի ճանաչումը Արևմուտքի կողմից, ընդգծեց. «Իմ ժողովրդի անունից ես դա համարում եմ Արևմուտքի խոնարհումը Ադրբեջանի և նրա դրոշի առաջ» [22]:

Նավթամուղի կառուցման երթուղիների խնդիրը և ռազմավարական նշանակությունն աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում: Թուրքիայի դերակատարումը.- Նավթային պաշարների արդյունահանման հարցով «դարի պայմանագիրը» կնքելուց հետո առաջնահերթ կարևորություն ստացավ հումքը միջազգային շուկաներ հասցնելու խնդիրը: Առաջադրվեց կառուցվելիք խողովակաշարերի հնարավոր երթուղիների ընտրության հիմնահարցը: Ըստ պայմանագրի՝ նախատեսվում էր խնդրի լուծման երկու փուլ. առաջին փուլով նախատեսվում էր 18 ամիս անց արդյունահանված վաղ նավթի, երկրորդ փուլով՝ մինչև 2000թ. հիմնական նավթի արտահանումը: Գլխավոր հարցը, սակայն, դեպի Արևմուտք կառուցվելիք նավթային խողովակաշարի երթուղու վերաբերյալ որոշման կայացումն էր: Այս հիմնահարցի լուծումը բարդ էր երթուղիների հարցում քաղաքական ու տնտեսական շահերի բախման իրողությամբ:

Նավթամուղի երթուղիների խնդիրը՝ որպես քաղաքական ու տնտեսական շահերի ցուցիչ.- Նավթամուղի երթուղիների շուրջ քննարկումներն ադրբեջանական կողմի և շահագրգիռ պետությունների ու նավթային ընկերությունների միջև սկսվել էին նավթային պաշարների վերաբերյալ բանակցություններին զուգահեռ: Տեսականորեն գերակա շահ համարվում էր նավթահորերի արդյունահանումից և նավթի արտահանումից ստացված ֆինանսատնտեսական շահույթը: Տեսականորեն դիտարկվում էին Արևմուտքի շուկաներ ադրբեջանական նավթի արտահանման աշխարհագրական երեք՝ հյուսիսային, արևմտյան և հարավային երթուղիները: Նավթամուղի կառուցման հնարավոր չորս ուղիները պետք է անցնեին սահմանակից երկրներից որևէ մեկի տարածքով: Ադրբեջանին սահմանակից էին Հայաստանը, Իրանը, Ռուսաստանը, Վրաստանը: Աշխարհագրական առումով հյուսիսային երթուղին ՌԴ տարածքն էր, արևմտյանը՝ Վրաստանն ու Հայաստանը և հարավայինը՝ Իրանը: Ինչպես դժվար չէ նկատել, աշխարհագրական այս ուղղությունները համապատասխանում են աշխարհաքաղաքական երկու՝ եվրասիականության (*Heartland*) և ատլանտյան (*Rimland*) կոնցեպցիաների, ինչպես նաև քաղաքակրթական Արևելք-Արևմուտք և Հյուսիս-Հարավ առանցքների հատման հանգույցին: Սա նշանակում էր, որ նավթամուղի երթուղու ընտրությունը ուղղակիորեն առնչվում էր աշխարհառազմավարական և աշխարհատնտեսական շահերին: Այդ իսկ պատճառով, ինչպես վերը նշվել է, ԱՄՆ քաղաքական ղեկավարությունն իր ուղղակի միջամտությամբ «դարի պայմանագրի» մասնակիցների նախնական ցանկից հեռացրեց Իրանի անունը: Միևնույն պատճառով Արևմուտքը հստակորեն արտահայտեց ՌԴ տարածքը շրջանցող որևէ երթուղու հանդեպ իր նախապատվությունը: Այնուհանդերձ, ուշադրության արժանի են այն իրողությունները, որոնք, թեկուզև քիչ հայտնի, այնուամենայնիվ, եղել են շրջանառության մեջ մեծ քաղաքականության համատեքստում:

Հայաստանյան տարբերակ: Տնտեսական առումով Հայաստանի տարածքն ամենաշահավետ երթուղին էր ինչպես Կասպից-Սև, այնպես էլ Կասպից-Միջերկրական ծովեր նավթամուղի կառուցման համար աշխարհագրականորեն առավել կարճ ճանապարհը լինելու առումով: Առաջին անգամ նավթամուղի հայաստանյան երթուղու մասին տեղեկատվություն եղել է դեռևս 1992թ. սկզբին: Ըստ *Attila Doğan Petrol* թուրքական նավթային միավորման մասնաճյուղի՝ *AD Petrosan* ընկերության նախագահ Օղուզ Կափանի, նա

ադրբեջանական ղեկավարությանն առաջարկել է Ադրբեջան-Թուրքիա խողովակաշարը կառուցել Հայաստանի տարածքով, ինչը թեև բացասական անդրադարձ է ունեցել, այնուամենայնիվ, միանշանակորեն չի մերժվել [23]։ Ի դեպ, 1993թ. *Attila Doğan Petrol* ընկերությունը և *SOCAR*-ը ստեղծեցին *Anshad Petrol* համատեղ ձեռնարկությունը, որը գործում է մինչ այժմ։

1992-93թթ. Ղազախստանի ու Թուրքմենստանի հետ դեպի Թուրքիա կառուցվելիք նավթամուղի հարցով Անկարայի ակտիվ գործողությունների համատեքստում, *BOTAS*-ի ղեկավար Մ.Գյոքնելը Լոնդոնում հայտարարեց, թե իր ընկերությունը քննում է ղազախա-թուրքմենական նավթը Կրասնովոդսկից ստորջրյա խողովակաշարով մինչև Ադրբեջան և, ապա, Հայաստան-Նախիջևան-Թուրքիա երթուղով դեպի Եվրոպա կառուցվելիք նավթամուղի նախագիծը [24]։

Վերլուծաբան Ֆրեդի դը Փաուերը նույն շրջանի մասին գրել է հետևյալը. «Քանի որ նավթամուղը պետք է անցներ Հայաստանով, ապա ավելի քան երբևէ հարկ էր վերջ տալ հակամարտությանն Անդրկովկասում։ Ուստի, Թուրքիան ճնշում գործադրեց Էլչիբեյի վրա թուրք-ռուսական խաղաղարար առաջարկն ընդունելու համար… 1993թ. օգոստոսի 3-ին Թուրքիայի ԱԳՆ-ն, նավթամուղեր կառուցող *BOTAS* և նավթային *TPAO* ընկերությունները մամլո ասուլիսում հայտարարեցին Վրաստան-Թուրքիա երթուղուն նախապատվություն տալու մասին… քանի որ տարանցումը Հայաստանով այլևս աջակցություն չունի տարածաշրջանում հայկական ռազմական գործողությունների անցկացման պատճառով» [25, c. 199-212]։

Այնուհանդերձ, ավելի ուշ ԱՄՆ նախագահ Բ.Քլինթոնը հայտարարեց, թե անհրաժեշտ է կառուցել առնվազն երկու մեծ խողովակաշար, որոնցից մեկը պետք է անցնի Հայաստանի տարածքով, ինչը միաժամանակ կնպաստեր Ղարաբաղյան հակամարտության լուծմանը [26, c. 168]։ Որպես միջնորդներ հանդես եկան ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Ս.Թելբոթը, Մեծ Բրիտանիայի ու Գերմանիայի արտգործնախարարներ Մ.Ռիքֆինդը և Կ.Կինքելը, ինչպես նաև Փ.Գոբլը, սակայն նախագիծը հաջողություն չունեցավ տվյալ պահի ռազմաքաղաքական գործընթացների պայմաններում։

Իրանյան տարբերակ։ 1993թ. մարտի 9-ին Անկարայում վարչապետ Ս.Դեմիրելը և Ադրբեջանի լիազոր ներկայացուցիչ Ս.Բաղիրովը ստորագրեցին համաձայնագիր Ադրբեջան-Թուրքիա նավթամուղի վերաբերյալ։ Ըստ այդմ, նախատեսվում էր *BOTAS*-ի միջոցով կառուցել նոր խողովակաշար

Ադրբեջանի և Ղազախստանի նավթը Բաքվից Իրան-Նախիջևան երթուղով մինչև թուրք-իրաքյան խողովակաշար և, ապա, թուրքական Յումուրթալիք տերմինալային նավահանգիստ [27, p. 605]: Այնուհանդերձ, ինչպես վերն ասվեց, իրանյան տարբերակն Արևմուտքի համար անընդունելի էր առկա աշխարհաքաղաքական շահերի հակասության պատճառով:

Ռուսաստանյան տարբերակ: Ըստ էության, խոսքը ռուսաստանյան այլընտրանքի, այլ ոչ տարբերակի մասին էր: Արդեն նախքան նավթային կոնսորցիումի կազմում ռուսաստանյան *LUKoil*-ի ներգրավումը Ռուսաստանը պայքարում էր առաջին պլան մղել գործող Բաքու-Գրոզնի-Նովոռոսիյսկ նավթամուղի տարբերակը: Առաջարկվում էր Նովոռոսիյսկից հումքը նավթատարներով Բոսֆորի նեղուցով փոխադրել Միջերկրական ծով: *AIOC*-ը մերժեց այս առաջարկը հետևյալ պատճառներով:

Առաջինն անվտանգության խնդիրն էր: 1994թ. հետո նավթամուղի տարածքում սկսվեցին ռազմական հակամարտություններ (Չեչնիա, Դաղստան), ինչպես նաև պարբերական (հակա)ահաբեկչական գործողություններ, (Կաբարդինո-Բալկարիա, Կարաչաևո-Չերքեզիա):

Երկրորդ պատճառաբանությունը նավթի որակական խնդիրն էր: Ադրբեջանական բարձր մակնիշի նավթը, նովոռոսիյսկյան նավթամուղի Տիխորեցկի հանգույցում խառնվելով ցածրորակ նավթի հետ, կստանար *Urals* մակնիշի կարգ, ինչը բացասաբար կանդրադառնար գնի վրա:

Երրորդ խնդիրը նավթը Բոսֆոր-Դարդանել նեղուցներով համաշխարհային շուկա հասցնելու երաշխիքի բացակայությունն էր: 1994թ. Թուրքիան միակողմանիորեն վերանայեց 1936թ. Մոնթրյոյի կոնվենցիան նեղուցների մասին՝ ընդունելով թուրքական նեղուցներով նավագնացության կարգավորման վերաբերյալ նոր օրենք, ինչն անհնարին դարձրեց նավթատարներով հումքի անարգել արտահանումը:

Վերջապես, նշյալ պատճառներից բացի, ռուսաստանյան երթուղու այլընտրանքի համար առկա էր, թերևս, գլխավոր մեկ այլ խոչընդոտ: 1998թ. ընդունված ԱՄՆ Ազգային անվտանգության ռազմավարության փաստաթղթում Կասպյան տարածաշրջանը պաշտոնապես հայտարարվեց ԱՄՆ ազգային շահերի գոտի[1]: Այս հիմքով տարածաշրջանը ներառվեց ամերիկյան զինուժի ռազմական ծրագրերում: Մասնավորապես, ըստ «Միացյալ հրամանատարության ծրագրի»՝ հարավկովկասյան երեք պետությունները 1998թ.

[1] A national security strategy for a new century. //www.bits.de/NRANEU/others/strategy/nss-9810.pdf

հոկտեմբերի 1-ից ներառվեցին ԱՄՆ Եվրոպական հրամանատարության (*USEVCOM*) պատասխանատվության, իսկ Միջին Ասիան՝ ԱՄՆ Կենտրոնական հրամանատարության (*USCENTCOM*) գոտիներում: Միաժամանակ, նշյալ համատեքստում տեղի ունեցավ փոխկապակցվող երկու գործընթաց.

ա) ռուսաստանյան ռազմակայանների դուրսբերում Կասպյան տարածաշրջանից,

բ) նոր ռազմաքաղաքական դաշինքների ձևավորում:

Առաջին գործընթացի արդյունքում 2001թ. հետխորհրդային այս տարածաշրջանում մնացին Գյումրիի ռուսաստանյան 102-րդ ռազմակայանը Հայաստանում, Գաբալայի ռադիոլոկացիոն համակարգն Ադրբեջանում և Բայկոնուրի տիեզերակայանը Ղազախստանում: Երկրորդ գործընթացը, որի նախաձեռնող կողմը Թուրքիայի վարչապետ Ս.Դեմիրելն էր, նպատակաուղղված էր Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղային տարանցման այս երկրների ռազմաքաղաքական դաշինքի ստեղծմանը և ստանում էր ԱՄՆ աջակցությունը [26]:

Այնուհանդերձ, Ռուսաստանը ևս փորձում էր քայլեր անել իր վերահսկողությանը ենթակա երթուղիներով Կասպյան նավթային պաշարների արտահանման վերաբերյալ իր շահերին համապատասխան որոշում կայացնելու համար: Նման քայլերից էին մասնակցությունը Կասպյան նավթամուղային կոնսորցիումի ստեղծմանը և Կասպյան ջրավազանի կարգավիճակի հարցի արծարծումը միջազգային ատյաններում:

Կասպյան նավթամուղային կոնսորցիումը՝ որպես այլընտրանք.- Կասպյան նավթի արդյունաբերման ու արտահանման մասին պայմանագիրը կնքվել էր նախքան «դարի պայմանագրի» ստորագրումը և ուներ նույնքան, եթե ոչ ավելի, ռազմավարական նշանակություն: 1992թ. հուլիսի 17-ին Օմանի թագավորության Մասկաթ քաղաքում *Oman Oil Company* և Ղազախստանի ներկայացուցիչները ստորագրեցին Կասպյան նավթամուղային կոնսորցիում (*Caspian Pipeline Consortium Limited*) ստեղծելու մասին պայմանագիրը, որին մեկ ամիս անց միացավ Ռուսաստանը, իսկ հետագայում՝ նաև խոշորագույն *Chevron, Shell, ExxonMobil, Eni, British Gas, LUKoil* և *Роснефть* միջազգային ընկերությունները: Ըստ պայմանագրի, նախատեսվում էր կառուցել Ղազախստան (Թենգիզ)-Նովոռոսիյսկ նավթամուղը: Ուշագրավ է, որ այս գործարքը, ինչպես ադրբեջանական նավթահանքերի պարագայում, սկսվել էր 1988թ. ԽՍՀՄ նավթարդյունաբերության և *Chevron* ընկերության միջև դա-

զախական Թենգիզ հանքավայրի մասին համաձայնագրով՝ առանց Ղազախական ԽՍՀ մասնակցության [28]: Նույն կերպ անցկացվել էր մրցույթ, որի հաղթող ճանաչվել էր *Chevron*-ը, և այդ հարցում գործուն մասնակցություն է ունեցել ԽՍՀՄ ԱԳՆ ղեկավար Է.Շևարդնաձեն [25, c. 199-212]: 1990-91թթ. հետո, ինչպես և Ադրբեջանը, բանակցող կողմ դարձել էր նորանկախ Ղազախստանը, որի շահերը ներկայացրել են նախագահ Ն.Նազարբաևի էներգետիկայի հարցերով խորհրդական, ամերիկյան գործարար Ջեյմս Գիֆենը և օֆշորային Բրիտանական Վիրգինյան կղզիներում գրանցված *Oman Oil Company*-ի ղեկավար, հոլանդացի Ջոն Դոյսը: Վերջինը, ի դեպ, ԽՍՀՄ նավթային ոլորտի գերատեսչությունների պատասխանատուների հետ համագործակցել է դեռևս 1977 թվականից, ունեցել սերտ հարաբերություններ Վ.Չեռնոմիրդինի՝ ՌԴ ապագա վարչապետի հետ [29]: Կոնսորցիումի անդամ ընկերությունները խողովակաշարի չորս՝ վրացական, թուրքական, իրանական ու ռուսաստանյան երթուղիների տարբերակներից նախընտրեցին վերջինը: Հատկանշական է ԱՄՆ կառավարության և ամերիկյան նավթային ընկերությունների միջև դիմակայությունը սույն հարցում: 1998թ. հոկտեմբերի 22-ին Թենգիզ-Ջեյհան նավթամուղը կառուցելու օրակարգով վերջինների ներկայացուցիչների և Ազգային անվտանգության հարցերով նախագահի օգնական Սեմյուել Բերգերի հետ հանդիպումից երկու օր առաջ *Chevron*-ի վարչության նախագահ Քենեթ Դերը հայտարարեց, թե չի կարող մասնակցել հանդիպմանը, սակայն գրավոր կհայտնի իրենց նախընտրանքի, այն է՝ Թենգիզ-Նովոռոսիյսկ երթուղու մասին, որպես տնտեսական տեսանկյունից առավել շահավետ [30]: Թենգիզ-Նովոռոսիյսկ խողովակաշարը կառուցվեց 1999թ., արդեն 2010թ. արտահանվում էր տարեկան 35 մլն տոննա նավթ, իսկ 2015թ. նախատեսված էր արդյունահանել մինչև 50 մլն տոննա նավթ[1]:

Կասպյան ջրավազանի կարգավիճակի հարցը.- «Դարի պայմանագրի» ստորագրմանը հաջորդեցին Ռուսաստանի դիվանագիտական դեմարշները: 1994թ. հոկտեմբերի 5-ին ՌԴ ԱԳՆ-ն ՄԱԿ գլխավոր քարտուղարին ուղարկեց նամակ, որում մասնավորապես ասվում էր. «Կասպից ծովին սահմանակից ոչ մի պետություն չի կարող միակողմանիորեն հավակնություններ ներկայացնել ծովի բնական ռեսուրսների նկատմամբ: Կասպյան որևէ պետության կողմից պետական պահանջների ներկայացումը ծովի և նրա բնական ռեսուրսների նկատմամբ անխուսափելիորեն վերաբերում է կասպյան մյուս

[1] http://www.cpc.ru/RU/about/Pages/chronology.aspx

պետությունների իրավունքներին և շահերին, ուստի չի կարող համարվել օրինական» [10, p. 28]: Որպես իրավական հիմք Ռուսաստանը վկայակոչում է 1921թ. փետրվարի 26-ին և 1940թ. մարտի 25-ին կնքված սովետա-իրանական համաձայնագրերը՝ հանդիսանալով ԽՍՀՄ միակ իրավահաջորդը: Ըստ 1921թ. «Բարեկամության և համագործակցության մասին» սովետա-պարսկական համաձայնագրի 11-րդ հոդվածի, միայն նշյալ կողմերն իրավունք ունեն հավասարապես օգտվել Կասպից ծովում ազատ նավարկության իրավունքից [31, с. 538]: Վեցերորդ հոդվածի համաձայն, Ռուսաստանն իրավունք է ստանում զորքեր մտցնել Իրան, եթե որևէ երրորդ պետություն փորձի օգտագործել Իրանի տարածքը որպես հենակետ սահմանն անցնելու և Ռուսաստանի կամ նրա դաշնակիցների դեմ ռազմական գործողություններ սկսելու նպատակով: Ըստ 7-րդ հոդվածի, եթե իրանական նավատորմի կազմում լինեն երրորդ պետության քաղաքացիներ, որոնք իրենց ներկայությունը նավատորմում կօգտագործեն Ռուսաստանի նկատմամբ ոչ բարյացակամ նպատակներով, Ռուսաստանի կառավարությունն իրավունք կունենա պահանջել Իրանից արտաքսել վերոնշյալ վնասակար տարրերին [31]: Այս հոդվածը փաստորեն արգելում է երրորդ պետության ծովայինների մուտքը Կասպից ծով:

ՄԱԿ գլխավոր քարտուղարին Ռուսաստանի հասցեագրած նամակում վկայակոչվող մեկ այլ՝ 1940թ. սովետա-իրանական պայմանագրով, մասնավորապես, նշվում է, որ միայն երկու պետություններին (ԽՍՀՄ և Իրան) պատկանող նավերն իրավունք ունեն նավարկել Կասպից ծովում, իսկ այդ նավերում և նավահանգիստներում աշխատող օտարերկրյա անձնակազմը պետք է սահմանափակի իր գործունեությունը համաձայնագրերով սահմանված շրջանակներում[1]:

Հարկ է նշել, որ 1991թ. դեկտեմբերի 21-ին որպես ԱՊՀ մասնակից պետություններ ստորագրելով Ալմա Աթայի հռչակագիրը՝ Ադրբեջանը, Ղազախստանը, ՌԴ-ն և Թուրքմենստանը հաստատել են այս պայմանագրերի իրավասությունը: Այնուհանդերձ, 1990-ականների սկզբին առաջ քաշվեց Կասպից ծովի կարգավիճակի հարցը, ինչի շուրջ ձևավորվեց երկու տարբեր մոտեցում: Նախ, խնդրի էության մասին:

Որևէ ջրավազանի կարգավիճակը որոշվում է ըստ ՄԱԿ ծովային իրավունքի կոնվենցիայի, համաձայն որի՝ «ծով» կամ «լիճ» սահմանումն այդ

[1] *Рустам Мамедов,* “Международно-правовой статус Каспийского моря: вчера, сегодня, завтра (теории и практики)”, “ Кавказ и Центральная Азия”, CA&CC Press, Швеция, http://www.ca-c.org/journal/cac-08-2000/24.mamedov.shtml

ջրավազանին տրվում է Համաշխարհային օվկիանոսի հետ, այն է՝ բնական ջրային ուղիներով (ծով, նեղուց) հարաբերակցության բնույթով: Ի դեպ, գետերն ու արհեստական ջրանցքները միջազգային իրավունքի օբյեկտ չեն համարվում: Ըստ այդմ, Կասպիականը չի կապվում Համաշխարհային օվկիանոսին անմիջականորեն (բաց ծով), մեկ այլ ծովի (կիսափակ ծով) կամ նեղուցի (փակ ծով) միջոցով, ուստի կարող է համարվել լիճ: Այնուհանդերձ, ի՞նչ առնչություն ունի Կասպից ծովի իրավական կարգավիճակի հարցը նավթային պաշարների խնդրի հետ:

Բանն այն է, որ ծովի կարգավիճակ ստանալու դեպքում Կասպյան ջրավազանի վերաբերմամբ կգործեն 1982թ. ՄԱԿ ծովային իրավունքի կոնվենցիայի համապատասխան հոդվածները: Դա նախ կնշանակի, որ մերձ-կասպյան պետություններն ինքնիշխան իրավունք կստանան առափնյա 12 մղոն տարածքային ջրերի և 200 մղոն բացառապես տնտեսական ջրային տարածքի նկատմամբ [32, c. 55, 76-77]: Եվ քանի որ Կասպից ծովի լայնքը 200 մղոնից ավելի չէ, ապա բացառապես տնտեսական ջրային տարածքի սահմանները կորոշվեն միջնագծով: Բացի այդ, նշյալ ջրային տարածքում ծովային ու օդային ներկայության ու գործունեության (բացի ռազմական կարգի) իրավունք են ստանում երրորդ երկրները ևս: Ըստ ՌԴ, Իրանի և Թուրքմենստանի՝ Կասպից ծովը համընդհանուր օգտագործման ջրավազան է մերձ-կասպյան երկրների համար, և նրա պաշարները պետք է բաժանվեն ծովափնյա բոլոր պետությունների միջև, Կասպիցը «փակ» ծով է երրորդ երկրների համար: Իրանը շահագրգռված էր Կասպից ծովում *status quo*-ի պահպանմամբ, քանի որ, ինչպես գրում է Կ.Մալեքին, «Բաքուն բացել է դարպասները արևմտյան պետությունների ներթափանցման առջև, և առաջիկայում Ադրբեջանում կիշխեն ԱՄՆ-ի, Անգլիայի, Թուրքիայի և մի քանի այլ պետությունների շահերը» [32]: Դա հակասում է Իրանի շահերին, որի համար Ռուսաստանը դառնում է աշխարհաքաղաքական դաշնակից, իսկ «Կասպից ծովը՝ ռուս-իրանական համագործակցության առանցքը» [33]:

Լիճը, ի տարբերություն ծովի, առափնյա պետությունների ինքնիշխան տարածք է, ուր չեն գործում միջազգային օրենքներն ըստ ներքին գործերին չմիջամտելու սկզբունքի: Սահմանային լճի իրավական կարգը հաստատվում է բացառապես ծովափնյա պետությունների միջև պայմանագրերով: Ադրբեջանը, կտրականապես մերժելով Կասպիցի համատեղ օգտագործման սկզբունքը, առաջարկեց իրավական ասպարեզում այսպես կոչված «ազգային

հատվածի» հասկացությունը, որով ծովի հատակը, ջրային շերտն ու ծովի վրայի օդային տարածքի նկատմամբ ծովափնյա պետությունը ստանում է ինքնիշխան իրավունքներ: Ուշագրավ է, որ Ադրբեջանը, մի կողմից հայտարարելով, թե ԽՍՀՄ վերացմամբ այլևս իրավական ուժը կորցրած պետք է համարել այդ պետության կողմից ստորագրված օրենքները, մյուս կողմից՝ հղումներ է անում նույն այդ պետության օրենքներին [34, c. 9]: Խոսքը, մասնավորապես, 1991թ. հունվարի 18-ին ԽՍՀՄ նավթարդյունաբերության մինիստրության և Ադրբեջանական ԽՍՀ Մինիստրների խորհրդի համատեղ որոշման մասին է, ըստ որի՝ Ադրբեջանն իրավունք էր ստանում արդյունահանել Կասպիականի հանքային պաշարները՝ համաձայն խորհրդային չորս հանրապետությունների միջև գծված վարչատարածքային սահմանների (հատվածների) միջնագծով: Մինչդեռ, ԽՍՀՄ հանրապետությունների միջև սահմանները, այս դեպքում՝ նշյալ ծովային վարչատարածքային բաժանումները, չունեին միջպետական իրավական հիմքեր, այլ միայն՝ ժողովրդատնտեսական նշանակություն [34, c. 15]:

Հետևաբար, Ադրբեջանը Կասպիականը «ազգային հատվածի» բաժանման դեպքում ստանում է հանքային պաշարների առավել մեծ մասնաբաժինը: Միևնույն ժամանակ, այդ երկիրը դառնում է միակ կասպյան պետությունը, որը պահպանում է ընդհանուր սահմանները մյուս ծովափնյա պետությունների հետ:

Այնուհանդերձ, չնայած առերևույթ իրավական այս վեճին, Ադրբեջանն ու Ղազախստանը փաստացիորեն սկսեցին Կասպիականի բաժանումն ըստ «ազգային հատվածների»՝ դա ամրագրելով իրավական փաստաթղթերում. Ադրբեջանը՝ իր 1995թ. սահմանադրությամբ, Ղազախստանը՝ «Կասպից ծովի ղազախական բաժնի նավթագազային պաշարների գնահատականի հարցով Միջազգային կոնսորցիումի մասին» նախագահի թիվ 1517 և «Նավթի մասին» թիվ 2350 հրամանագրերով[1]:

Այնուհանդերձ, ըստ փորձագետների, մասնակցելով Կասպից ծովի նավթագազային պաշարների արդյունահանման միջազգային նախագծերին և ստորագրելով համապատասխան փաստաթղթեր (նաև «դարի պայմանագիրը»), Ռուսաստանն անուղղակիորեն ճանաչեց Կասպից ծովը «ազգային հատվածների» բաժանելու սկզբունքը [34, c. 18-19]:

[1] http://kazakhstan.news-city.info/docs/sistemsi/dok_perbhb.htm
http://online.zakon.kz/Document/?doc_id=3103801&mode=p

Ի վերջո, հաշվի առնելով «դարի պայմանագիր» կոչվող գործարքի ռազմավարական ու գործառութային նշանակությունը՝ *AIOC* կոնսորցիումն արդյունավետ չէր համարում ռուսաստանյան երթուղու տարբերակը:

Թուրքական տարբերակ: Քաղաքական տեսանկյունից թուրքական Ջեյհան տերմինալը, որպես կասպյան նավթի վերջնակետային երթուղի, բացառման սկզբունքով, ի սկզբանե կանխորոշված էր: Ասվածի ապացույցն է 1993թ. մարտի 9-ին Անկարայում երկու երկրների միջև ստորագրված (Ս.Դեմիրել - Ս.Բաղիրով) համաձայնագիրը Բաքու-Ջեյհան նավթամուղի կառուցման մասին: Շինարարությունն իրականացնելու էր թուրքական *Botas*-ը, որին այդ նպատակով 1996թ. Համաշխարհային բանկը հատկացրեց $12.5 մլն: Խնդիրը միայն նավթամուղի առավել անվտանգ երթուղու ճշտումն էր, հնարավոր սպառնալիքների չեզոքացումը և տնտեսական շահավետության ապահովման հեռանկարը: *Botas*-ի և Համաշխարհային բանկի կողմից կատարվեց երթուղու տեխնիկատնտեսական ուսումնասիրությունը, կազմվեց առավել արդյունավետ երթուղու նախագիծը: Թիվ մեկ սպառնալիքը՝ Քրդական բանվորական կուսակցության հնարավոր խափանարար գործողությունները նավթամուղի տարածքում, չեզոքացվեց 1999թ. ՔԲԿ առաջնորդ Ա.Օջալանի ձերբակալությամբ: Նրան մահապատժի ենթարկելու սպառնալիքով ՔԲԿ-ն զինադադար հաստատեց, դեկտեմբերին ջոկատները հեռացվեցին Իրաքի տարածք:

1998թ. ԱՄՆ ղեկավարությունը հայտարարեց Բաքու-Ջեյհան նավթամուղը որպես Կասպյան ավազանի նավթի տարանցման փոխադրամիջոց, ինչն արմատապես փոխեց տնտեսական շահավետության գործակիցը, հետևաբար՝ նավթային ընկերությունների շահագրգռվածության աստիճանը: Արդյունքում՝ նախ 1998թ. հոկտեմբերի 22-ին Թենգիզ-Ջեյհան նավթամուղը կառուցելու օրակարգով վերջինները Ազգային անվտանգության հարցերով նախագահի օգնական Սեմյուել Բերգերի հետ հանդիպումից հետո համաձայնեցին մասնակցել նախագծին, ապա հոկտեմբերի 29-ին Անկարայում Թուրքիան, Ադրբեջանը, Վրաստանը, Ղազախստանը և Ուզբեկստանը ստորագրեցին հռչակագիր Կասպյան ավազանի և Միջինասիական նավթը Բաքու-Ջեյհան նավթամուղով համաշխարհային շուկաներ հասցնելու մասին: 1999թ. նոյեմբերի 18-ին Ստամբուլում ստորագրվեց Աքթաու (Ղազախստան) - Բաքու և Բաքու - Ջեյհան նախագծերի փաթեթային համաձայնագիրն այս անգամ նաև ԱՄՆ մասնակցությամբ:

Այսպիսով, «դարի պայմանագրի» շրջանակներում նախ գործարկվեց Բաքու-Սուփսա խողովակաշարը (1999թ.), ապա կառուցվեց Բաքու-Թբիլիսի-Ջեյհան (2005թ.) նավթամուղը, ինչպես նաև Բաքու-Թբիլիսի-Էրզրում (2006թ.) գազատարը: Հարկ է նշել, սակայն, որ Ռուսաստանի տարածքով նավթի առավել փոքր ծավալով փոխադրումը ևս շարունակվեց՝ օգտագործելով դեպի Նովոռոսիյսկի նավահանգիստ անցնող նավթամուղը:

Եվ այսպես, ակնհայտ է, որ «դարի պայմանագիրն», էներգատնտեսական գործարք լինելուց զատ, գլխավորապես աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական կարևորագույն նշանակության նախագիծ էր: Դա, ըստ էության, Ադրբեջան-Թուրքիա հարաբերություններում, ինչպես նաև արտաքին ու ներքին քաղաքականությունն ուղղորդող հիմնական գործոնն է, որը կանխորոշում է այդ երկրների տեղն ու դերն Արևմուտքի ծրագրերում: Դեռևս 19-րդ դարում *Standart Oil*-ի հիմնադիր Ջոն Ռոքֆելերն էր ասել, թե «ով վերահսկում է նավթային փոխադրամիջոցները՝ նրա ձեռքերում են և՛ նավթի արդյունահանումն ու մշակումը, և՛ աշխարհաքաղաքականությունը»:

Նոյեմբեր, 2016թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *З.Бжезинский,* Великая шахматная доска. Американское первенство в мире и геостратегические перспективы, Москва, Международные отношения, 1998.
2. *Ara Sanjian,* “The Negotiations of the “Contract of the Century” and the Political Background to the Revival of Azerbaijan’s Oil Industry”, Armenian Center of Armenian and International Studies, 1997.
3. *Klebnikov Paul,* “The Quietly Determined American”, Forbes, October 24, 1994.
4. The Wall Street Journal, October 2, 1994, p. A 4:4, The Economist, November 14, 1992, p. 85.
5. The Washington Times, March 9, 1992, p. A, 9:5.
6. *Томас де Ваал,* Черный сад. Между миром и войной, М., 2005.
7. *Ч.А. Султанов,* Нашествие, т. 2, «Нафта-пресс», Баку, 2004.
8. *Thomas Goltz,* “Oil and Civil Society Don’t Mix,” War Report: Bulletin of the Institute for War and Peace Reporting, No. 45 (September 1996).
9. Eastern Europe, Russia and Central Asia 2004 By Europa Publications Limited.
10. *N.Sagheb and M. Javadi,* “Azerbaijan's "Contract of the Century" Finally Signed with Western Oil Consortium, Azerbaijan International, Winter 1994 (2.4).
11. *Guy Chazan,* “Western Oil Firms Help Azerbaijan on the Road to Economic Recovery,” AGBU News, Vol. 2, No. 4 (December 1992).
12. Interfax Petroleum Report, December 11-18, 1992.
13. Известия, 4 августа 1993.
14. O&GJ, June 28, 1993.

15. *И.Гусейнова,* Гейдар Алиев, Баку, Тахсил, 2005.
16. Heydər Əliyev. Müstəqilliyimiz əbədidir. Bakı, 1997, II c., səh. 226; Azərbaycan: Oktyabr 94 - mart 95. Qəsd.Bakı, 1995, səh. 6-7.
17. Hurriyet, 1993, 11 August.
18. Московские новости, 25/10/1994, стр. 4; Независимая газета, 20/09/1994, Сегодня, 20/09/1994.
19. НИА Хабар-сервис, 7 июня 1994г., бюл. No 971.
20. Economist , "Russian Pressure on Azerbaijan," Foreign Report, July 14, 1994.
21. *Barylski V. Robert,* Russia, the West and the Caspian Energy Hub, Middle East Journal 49, No 2, 1995.
22. Azərbaycan, Oktyabr 94 - mart 95, Qesd. Bakı, 1995, səh. 39.
23. The Washington Times, March 9, 1992, p. A 9.
24. Oil & Gas Journal, March 22, 1993, p. 30; *Елхан Полухов,* Контракт века, Кавказские Региональные Исследования, том 2, выпуск 1, 1997.
25. *Фредди де Пау,* Политика Турции в Закавказье, Спорные границы на Кавказе: сб. ст., Москва, "Весъ мир", 1996.
26. *Гусейнов В.А.,* Каспийская нефть. Экономика и геополитика, 2002.
27. *Robins Philip,* Between Sentiment and Self-Interest: Turkey's Policy Towards Azerbaijan and the Central Asian States' in Middle East Journal 47, No 4, Autumn 1993.
28. Деловая неделя, 29 мая 1998 года, №21.
29. Известия, 24 февраля 1995, №36(24395).
30. Известия, 22 октября 1998.
31. Документы внешней политики СССР, т. III, Москва, 1959.
32. Конвенция Организации Объединенных Наций по морскому праву, Монтего-Бей, 10 декабря 1982.
33. "Iranian Parliamentary Speaker in Moscow," RFE/RL Newsline, Vol. 1, No. 9, Part I, 11 April 1997.
34. *Бутаев А.М.,* Каспий: море или озеро? Махачкала, 1998.

ԹՈՒՐՔԻԱ-ԱԴՐԲԵՋԱՆ. «ԴԱՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ»՝ ԱՇԽԱՐՀԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՆ

Լիա Էվոյան

Ամփոփագիր

Անցած դարավերջին Հարավային Կովկասի և Միջին Ասիայի տարածաշրջանի, մասնավորապես Ադրբեջանի շուրջ աշխարհաքաղաքական պայքարն ընթանում էր Կասպից ծովի էներգապաշարների և էներգակիրների տարանցման ուղիների վերահսկման իրավունքի համար: Նավթի պաշարների վերաբերյալ «դարի պայմանագիրը», էներգատնտեսական գործարք լինելուց զատ, աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական կարևորագույն նշանակության նախագիծ էր: Դա, ըստ էության, Ադրբեջան-Թուրքիա հարաբերություններում արտաքին և ներքին քաղաքականությունն ուղղորդող հիմնական գործոնն է, որը կանխորոշում է այդ երկրների տեղն ու դերն Արևմուտքի ծրագրերում:

ТУРЦИЯ-АЗЕРБАЙДЖАН: «ДОГОВОР ВЕКА» КАК ГЕОЭКОНОМИЧЕСКИЙ ФАКТОР

Лия Эвоян

Резюме

В конце прошлого века геополитическая борьба вокруг Южного Кавказа и Средней Азии, в частности Азербайджана, шла за право контроля над энергозапасами Каспийского моря и путями транспортировки энергоносителей. «Договор века» относительно запасов нефти, помимо энергоэкономической сделки, был еще и важнейшим геополитическим и геоэкономическим проектом. Он, по сути, является основным фактором, направляющим внешнюю и внутреннюю политику во взаимоотношениях Азербайджан-Турция, который предопределяет место и роль этих стран в программах Запада.

TURKEY-AZERBAIJAN "CENTENNIAL AGREEMENT" AS A GEOPOLITICAL FACTOR

Lia Evoyan

Resume

At the end of the 20th century the geopolitical struggle around South Caucasus and Central Asia, and particularly Azerbaijan, was centered on the rights for control over energy reserves and energy transit. The "centennial agreement" on oil reserves, other than an energy and economic deal, was also a critical geopolitical and geo-economic project. In essence, it is the main factor directing foreign and domestic policies in Azerbaijan-Turkey relations, which predetermines the place and role of these countries in the plans of the West.

ՊԱՆԹՅՈՒՐՔԻԶՄԸ ՈՐՊԵՍ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ

Տարոն Սաքոյան*

Բանալի բառեր՝ պանթյուրքիզմ, Եվրասիա, Մեծ Թուրան, պանթյուրքական տարրեր, Ա.Զինովև, Արևմուտք, Թուրքիա, Մոսկվա-Պեկին-Թեհրան-Երևան առանցք:

Կան պատմական իրադարձություններ, որոնց գիտական լուսաբանումն անհնար կլիներ առանց որոշ գաղափարական-քաղաքական հոսանքների պատմության ուսումնասիրության: Պատճառն այն է, որ այդ հոսանքները հաճախ գաղափարական նախապատրաստություն են հանդիսացել համապատասխան պատմական գործընթացների համար: Ասվածն առավել որոշակի պատկերացնելու համար բավական է հիշենք լուսավորական շարժումը և ֆրանսիական մեծ հեղափոխությունը, Մարտին Լյութերի «95 թեզիսները» և ռեֆորմացիոն շարժումը Եվրոպայում, սոցիալիզմի գաղափարախոսությունը և 1917թ. բոլշևիկյան հեղաշրջումը Ռուսաստանում, նացիզմի գաղափարախոսությունն ու հրեական Հոլոքոստը և այլն: Այս համատեքստում մեծ կարևորություն է ստանում նաև պանթյուրքիզմի (համաթյուրքականության) գաղափարախոսության պատմության ուսումնասիրությունը:

Ինչպես գիտենք՝ թուրքական ծավալապաշտությունը ձևավորվել է թուրք ժողովրդի հետ և մշտապես արտահայտված եղել թուրքական (Օսմանյան) կայսրության կայացման հայեցակարգում: Կարելի է ասել, որ ծավալապաշտությունը նաև թուրք էթնոսի ինքնարտահայտման որոշիչ գործոն է հանդիսանում՝ որպես ազգային երազանքի յուրօրինակ բնութագրիչ:

Պանթյուրքիզմի գաղափարախոսությունը, ըստ էության, նախատեսում է Թուրքիայի գլխավորությամբ Եվրասիայում բնակվող թյուրքալեզու ժողովուրդների (թուրքեր, ադրբեջանցիներ, ղազախներ, թուրքմեններ, ուզբեկներ,

---

* «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի Հայոց պատմություն առարկայի դասախոս:

ղրղզներ, թաթարներ, չուվաշներ, բաշկիրներ, ույղուրներ, խակասներ, յակուտներ, տուվացիներ և այլն) համախմբումը մեկ պետության՝ Մեծ Թուրանի կազմում, այն իր հավակնոտ նպատակներով հանդերձ թուրքական երազանքի հանրագումարն է և իր ծրագրերի իրագործման մեջ չի խորշել նաև հակամարդկային մեթոդներից ու մարդկության դեմ ոճիր գործելուց, ինչպիսին էր 20-րդ դարասկզբի Հայոց ցեղասպանությունը: Սակայն պանթյուրքիզմի անցած ուղու ուսումնասիրության և դրա աշխարհաքաղաքական տեսլականը կազմող ծրագրերի վերլուծության անհրաժեշտությունը չի սահմանափակվում միայն Հայոց ցեղասպանության փաստով: Ակնհայտ է, որ թուրքական իշխանություններն այս ազգայնամոլ ու հիվանդագին գաղափարներին այնքան արժեք են հաղորդել, որ դրանք փոխանցվել են սերնդեսերունդ: Եվ որքան էլ Թուրքիայի իշխանությունները փորձեն ապացուցել հակառակը, ակնհայտ է, որ պանթյուրքիզմի մոլուցքն այսօր էլ ստանում է լուրջ առարկայական դրսևորումներ նրանց քաղաքական վարքագծում [1, c. 44-45; 2, c. 25; 3, 363]:

Առաջնորդվելով «առանց անցյալի չկա ապագա» միանգամայն ճշմարիտ սկզբունքով՝ սույն հոդվածում կփորձենք համառոտ վերլուծել պանթյուրքիզմի անցած ուղին, ինչպես նաև անդրադառնալ այն խնդրին, թե ինչ վտանգներ ու սպառնալիքներ է այսօր պարունակում այս գաղափարախոսությունը, և որքանով է այն արտահայտված այժմյան աշխարհաքաղաքական գործընթացներում:

Դրա հետ մեկտեղ, անհրաժեշտ է ձևակերպել այն պարզ ճշմարտությունը, որ պատմաբանի գործառույթը միայն պատմական գործընթացների, գրանցված փաստերի, դրանց օրինաչափությունների ու պատճառահետևանքային կապերի արձանագրումը չէ (ինչը, սակայն, պակաս կարևոր չէ), այլ նաև վերը նշված տարրերի հանրագումարի և վերլուծության արդյունքում հնարավոր զարգացումների կանխատեսումն ու լուսաբանումը: Ուստի, ուսումնասիրության օբյեկտի անվանումը ճշգրիտ կերպով պետք է համապատասխան լինի դրա էությանը. արդյունքում կստեղծվեն նպաստավոր պայմաններ դրա արդյունավետ վերլուծության համար:

Նախ արձանագրենք, որ պանթյուրքիզմի օբյեկտիվ իրականություն դառնալու սպառնալիքը ներկայումս նույնպես նախատեսում է հայ ժողովրդի ոչնչացումը, ինչպես նաև այնպիսի պետությունների մասնատումը, ինչպիսիք են Ռուսաստանը, Իրանը և Չինաստանը [1, c. 44-45]:

Շարժումը, սկիզբ առնելով 20-րդ դարի 2-րդ կեսին Ռուսական կայսրության տարածքում, պարարտ հող գտավ և իր հետագա զարգացումն ստացավ Օսմանյան կայսրությունում և վերջինիս իրավահաջորդ Թուրքիայի Հանրապետությունում: Սուլթանական իշխանությունները, ապա և 1908թ. իշխանությունը բռնազավթած երիտթուրքերը, որդեգրած լինելով օսմանիզմի՝ միատարր հասարակության կառուցման մասին կեղծ առաջադիմական կարգախոսները [4, c. 109-110], փորձեցին կասեցնել կայսրության հոգեվարքը, ինչը, սակայն, ազդակ հանդիսացավ ճնշված, մասնավորապես՝ բալկանյան ժողովուրդների նոր ընդվզման համար: Արդյունքում սկիզբ առած Առաջին Բալկանյան պատերազմը (1912-1913թթ.) հանգեցրեց Օսմանյան կայսրության պարտությանը, որի հետևանքը եղավ երիտթուրքական վերնախավի կողմից նոր՝ շովինիստական պանթյուրքիզմը որպես արտաքին քաղաքական գլխավոր հայեցակարգ որդեգրելու փաստը [5, էջ 120-121]: Հարկ է արձանագրել, որ երիտթուրքերին վիճակված էր դառնալ Օսմանյան կայսրության գերեզմանափորը, քանի որ ազգայնամոլությունն ու ծավալապաշտությունը, ի դեմս պանթյուրքիզմի գաղափարախոսության, ի վերջո հանգեցրին Հայոց ցեղասպանությանն ու Առաջին աշխարհամարտում (1914-1918թթ.) Օսմանյան կայսրության սոսկալի պարտությանը: Պատմական զուգահեռ անցկացնելով՝ պետք է նշենք, որ իրենց բացասական «առաքելությամբ» երիտթուքերը, ըստ էության, Օսմանյան կայսրության, այսպես ասած, նացիստներն էին, որոնք համաշխարհային պատմության մեծագույն հանցագործների շարքում զբաղեցրին իրենց ուրույն տեղը:

Առաջին համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրության կրած պարտության ներքաղաքական ուղղակի հետևանքը եղավ երկրում սկիզբ առած և համազգային բնույթ ստացած քեմալական շարժումը, քանզի տերությունը կանգնել էր տարածքային մասնատման իրական սպառնալիքի առաջ: Քեմալականները ձեռնամուխ եղան պետության տարածքային ամբողջականության պահպանման գործին, քանի որ, մասնավորապես, միայն արևելյան վիլայեթների մի մասը, համաձայն Սևրի պայմանագրի (1920թ.), պետք է անցներ Հայաստանի Հանրապետությանը [6, էջ 363-364]: Հատկանշական է, որ քեմալականների շարքերում ևս պանթյուրքիզմի գաղափարախոսությունն ուներ զգալի ազդեցություն, մինչդեռ գլխավոր և առաջնային խնդիրը հայրենիքը կործանումից փրկելն էր, ինչի հետևանքով ժամանակավորապես երկրորդ պլան էին մղվել պանթյուրքիզմի ծրագրերը: Շարժման

առաջնորդ Մուսթաֆա Քեմալի վարած ճկուն դիվանագիտության շնորհիվ Թուրքիան, փոխհամաձայնության գալով ժամանակաշրջանի երկու բևեռների՝ Արևմուտքի (Անտանտ) և բոլշևիկյան Ռուսաստանի հետ, ոչ միայն կանխեց փոքրասիական տարածքների կորուստը, այլ նաև ամրապնդեց իր՝ պարտված երկրի միջազգային դիրքերը [2, c. 160; 7, c. 42]:

Ուշագրավ է այն փաստը, որ Հոկտեմբերյան հեղաշրջման հետևանքով Ռուսաստանում սկիզբ առած քաղաքացիական պատերազմը պայքար էր ոչ միայն ընդդեմ նորաստեղծ բոլշևիկյան իշխանության, այլ նաև ազդակ նախկին Ռուսական կայսրության թյուրքալեզու ժողովուրդների համար, որոնք, թուրքական իշխանությունների խրախուսմամբ, փորձելով օգտագործել պատեհ առիթը, ջանում էին կանխել բոլշևիզմի տարածումը նախկին Ռուսական կայսրության տարածքներում, ինչպես նաև անհրաժեշտ հող նախապատրաստել հետագայում համայուրքական տերության ստեղծման համար: Բավական է հիշատակել 1921-1922թթ. ընթացքում Միջին Ասիայի քաղաքացիական կռիվներում (բասմաչություն) Օսմանյան կայսրության նախկին ռազմական մինիստր, պանթյուրքիզմի մոլեռանդ կողմնակից ու Հայոց ցեղասպանության գլխավոր կազմակերպիչներից Ի.Էնվերի ակտիվ մասնակցության փաստը [8, էջ 304]:

Այդուհանդերձ, քաղաքացիական պատերազմում բոլշևիկների հաղթանակն ի չիք դարձրեց պանթյուրքական տարրերի և նրանց խրախուսող թուրքական իշխանությունների կայսերապաշտական ծրագրերը: ԽՍՀՄ ձևավորմամբ (1922թ.), ըստ էության, կանխվեց Եվրասիայում մեկ այլ՝ թուրանական տերության հնարավոր ստեղծումը կամ դրա համար անհրաժեշտ նպաստավոր նախադրյալների առաջացումը:

Երկրորդ համաշխարհային պատերազմը (1939-1945թթ.) և հատկապես գերմանական զորքերի հարձակումը ԽՍՀՄ-ի վրա (1941թ. հունիս) նոր հեռանկարներ բացեց պանթյուրքական շարժման առջև: Հատկանշական է, որ արդեն 1941թ. հուլիսին Թուրքիայի պանթյուրքական *«Bozkurtlar»* (գորշ գայլեր) տպագրական մարմնի կողմից լույս տեսավ Մեծ Թուրանի էթնիկ-քաղաքական քարտեզը [1, c. 44]: Նացիզմի հետ միաժամանակ մարդկության գլխին նորից կախվեց պանթյուրքիզմի սպառնալիքը: Սակայն պետք է արձանագրել, որ երկրորդի կայացումը բացառապես կախված էր առաջինի ռազմաքաղաքական լիակատար հաջողություններից, որոնք, որքան էլ որ տպավորիչ էին, սակայն, միևնույն է, հեռու էին կատարյալ լինելուց:

Պանթյուրքիզմն իր կործանարար բնույթով, թերևս, համեմատելի է նացիստական «Օստ» գլխավոր պլանի հետ [9, c. 13-14] և, ըստ էության, կոչված էր լրացնելու վերջինիս: Սակայն Կարմիր բանակի և խորհրդային ժողովուրդների անձնազոհ պայքարը կանխեց և ի չիք դարձրեց հիշյալ հրեշավոր մտահղացումների իրագործումը: Ինչպես գիտենք, «Օստ» պլանը չիրագործվեց, սակայն դեռևս իրական է վերջինիս «երկվորյակ եղբոր»՝ պանթյուրքիզմի սպառնալիքը: 1991թ. ԽՍՀՄ կործանմամբ առաջացած քաղաքական վակուումով պանթյուրքիզմի առջև բացվեց հերթական հեռանկարը: Մինչդեռ թուրք-իրանական մշտական հակամարտությունն էական հնարավորություն ընձեռեց ԽՍՀՄ իրավահաջորդ ՌԴ-ին հետխորհրդային տարածքներում, մասնավորապես՝ Անդրկովկասում ազդեցության վերականգնման համար:

Միևնույն ժամանակ, հարկավոր է արձանագրել, որ ԽՍՀՄ փլուզման պատճառների մեջ ուրույն կարևորությամբ առանձնանում է 1941թ. գերմանական հարձակումը, ինչի հետևանքով ԽՍՀՄ-ը ստացավ առաջին ու, թերևս, մահացու հարվածը: Բացի ահռելի նյութական կորուստներից, ԽՍՀՄ-ը կրեց նաև անհամարժեք մարդկային ռեսուրսների կորուստ (շուրջ 27 միլիոն [7, c. 106]), որը ցանկացած պետության և, առավել ևս, գերտերության համար գլխավոր ստրատեգիական ռեսուրսն է: Հետևապես, Երկրորդ աշխարհամարտում Գերմանիայի կրած պարտությանն ու ԽՍՀՄ հաղթանակին պետք է մոտենալ որոշակի վերապահումով, քանի որ վերջինիս համար այն, ըստ էության, «պյուռռոսյան հաղթանակ» էր:

Եվ որքան էլ որ «Սառը պատերազմում» հաղթանակած երկրները հպարտանան իրենց արձանագրած հաջողությամբ, միևնույն է, պարտավոր են ընդունել այն օբյեկտիվ իրողությունը, որ դրանում մասամբ պարտական են նացիստական Գերմանիային, որը, թեև տրոհված, սակայն արևմտյան աշխարհի ներկայացուցիչ էր: Երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո Արևմուտքը միավորվեց համաշխարհային նոր լիդերներից մեկի՝ ԱՄՆ-ի շուրջ, ինչի արդյունքը եղավ Հյուսիսատլանտյան դաշինքի ձևավորումը 1949թ., որի աշխարհաքաղաքական գլխավոր խնդիրը ԽՍՀՄ գլխավորությամբ ստեղծված սոցիալիստական ճամբարի երկրների դեմ միասնաբար պայքարելն էր:

Ըստ ռուս հռչակավոր գիտնական, սոցիոլոգ և տրամաբան Ալեքսանդր Զինովևի (1922-2006թթ.) տեսության, ԽՍՀՄ-ի՝ որպես աշխարհի զարգացման հասարակական ու տնտեսական այլ ուղի առաջարկած սուբյեկտի, փլուզու-

մից հետո Արևմուտքը՝ ԱՄՆ գլխավորությամբ, որդեգրած լինելով գլոբալիզացիայի քաղաքականությունը, ձեռնամուխ կլինի նաև «ասիական կոմունիզմի» ջախջախմանը՝ ի դեմս Չինաստանի, հանուն որի խնդիր կդրվի Ռուսաստանի մարդկային ռեսուրսների և տարածքի շահագործման անհրաժեշտությունը [10, c. 451-456, 466]: Ավելորդ չէ նշել, որ Ա.Զինովևը հայտնի է իր գիտական ճշգրիտ կանխատեսումներով [11]: Հենց այստեղ է, որ կարող է պահանջվել պանթյուրքիզմի ներուժի օգտագործման կարիքը: Չմոռանանք, որ պանթյուրքական տարրեր ու տրամադրություններ առկա են ինչպես ՌԴ-ում, Չինաստանում (ուր առկա է Արևմուտքից սատարվող թուրքամետ ույղուրական գործոնը [12]) և Իրանում (այսպես կոչված Հարավային Ադրբեջանի գործոնը), այնպես էլ եվրասիական այլ, մասնավորապես՝ միջինասիական և սիբիրյան տարածաշրջաններում [2, c. 25; 13; 7, c. 537-538]: Բավական է հիշել 2014թ. մայիսին Աստանայում կայացած Եվրասիական տնտեսական միության Բարձրագույն խորհրդի նիստի ժամանակ Ղազախստանի Հանրապետության նախագահ Ն.Նազարբաևի կողմից ալիևյան նամակի ընթերցումը, որով վերջինս, ըստ էության, ընդգծում էր իր հաստատուն դիրքորոշումը Ադրբեջանի տարածքային ամբողջականության հարցի շուրջ [14]:

Պանթյուրքիզմը, ըստ էության, եվրասիական տարածաշրջանի այն քիչ թե շատ հզոր գախափարախոսական ու աշխարհաքաղաքական ուժերից է, որն Արևմուտքի օժանդակության և ուղղորդման դեպքում ի զորու կլինի սասանել ՌԴ, ԻԻՀ և ՉԺՀ հասարակական և ռազմաքաղաքական հզորությունը: Հարկավոր է հաշվի առնել այն տեսակետը, որ պանթյուրքիզմի գաղափարներն ԱՄՆ-ի համար կարող են առավել նախընտրելի լինել փաստացի առկա աշխարհաքաղաքական հակառակորդներ ՌԴ-ից և Չինաստանից: Հետևապես, կարելի է արձանագրել, որ ներկայումս նույնպես պանթյուրքիզմի սպառնալիքը կարող է էական դառնալ: Սույն հետևությունը չի բացառում Ա.Զինովևի վերոհիշյալ հայացքները, ինչպես նաև այդ միանգամայն հնարավոր գործընթացներում Թուրքիայի՝ որպես Եվրասիայում Արևմուտքի գլխավոր հաղթաթղթի, անմիջական մասնակցությունը: Թերևս, ճշմարիտ էր գերմանական աշխարհաքաղաքականության հիմնադիր Կ.Հաուսհոֆերը (1869-1946), որը դեռևս 20-րդ դարի 1-ին կեսին՝ ի հակակշիռ անգլո-սաքսերի (Մեծ Բրիտանիա - ԱՄՆ) աճող ազդեցության՝ առաջարկել էր Բեռլին-Մոսկվա-Տոկիո առանցքով ձևավորել «Մայրցամաքային բլոկ» (եվրասիական), ինչին, սակայն, վիճակված չէր իրականանալ [15, глава 82]:

Ուստի, պատահական չէ Ռուսաստանի, Չինաստանի և Իրանի կողմից Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական դերի կարևորումը: Այն պատմականորեն մշտապես հանդիսացել է տարբեր ուժային կենտրոնների շահերի բախման հանգույց: Մասնավորապես Չինաստանի համար Հայաստանը, ըստ էության, չինական Մեծ պարսպի փոքրիկ, բայց հույժ կարևոր «մասնիկն» է հարավկովկասյան տարածաշրջանում: Նշվածը քաջ գիտակցում է նաև Իրանը (ուր բնակվում են զգալի թվով ազերիներ), որը որպես տարածաշրջանային տերություն երբևէ չի հանդուրժի պանթյուրքիզմի գլխավոր դրոշակակիր Թուրքիայի ռազմական էքսպանսիան կովկասյան տարածաշրջան և Հայաստանի Հանրապետության՝ որպես պանթյուրքական տարրերի միավորմանը խոչընդոտող գլխավոր դարպասի փլուզումը: Պատահական չէ նաև արցախյան հիմնախնդրի հարցում ԻԻՀ հավասարակշռված դիրքորոշումը, որին միանգամայն ձեռնտու է թյուրքական աշխարհի անբաժանելի մաս կազմող Ադրբեջանի հաշվին հայ-իրանական սահմանի փաստացի ընդլայնումը:

Շատ ավելի անկանխատեսելի կլինի ՌԴ ճակատագիրը, որը պանթյուրքական սպառնալիքի դեպքում կարող է զրկվել ոչ միայն իր մի շարք տարածքներից (Հյուս. Կովկաս, Սիբիր, Պովոլժիե և այլն), այլ նաև հարավկովկասյան և միջինասիական տարածաշրջաններում ունեցած ազդեցությունից, ինչը կնշանակի Ռուսաստանի Դաշնության՝ որպես գերտերության փլուզում: Հաշվի առնելով Թուրքիայի արտաքին քաղաքական նկրտումները՝ այդ երկրի պետական շահերին ձեռնտու է Ռուսաստանի ներքին և արտաքին անկայունությունը, որը կստեղծի անհրաժեշտ և նպաստավոր նախադրյալներ պանթյուրքական ծրագրերի իրագործմանը ձեռնամուխ լինելու համար: Թերևս, տեղին կլինի հիշատակել 1918թ. ապրիլ-մայիսին գրանցված պատմական նախադեպը, երբ Թուրքիան խրախուսեց Անդրկովկասի անջատումն ու անկախացումը քաղաքացիական պատերազմով տարված Ռուսաստանից, որին անմիջապես հետևեց թուրքական զորքերի ներխուժումը տարածաշրջան:

Ամփոփելով՝ փորձենք ձևակերպել սույն աշխատանքի առանցքային միտքը. ներկայումս միանգամայն պահանջված է Մոսկվա-Պեկին-Թեհրան-Երևան առանցքի ձևավորումը, ինչն, անկասկած, կաթվածի ազդեցություն կունենա Թուրքիայի և ողջ պանթյուրքական տարրերի վրա:

Մնում է հուսալ, որ չինական, ռուսական և իրանական իշխանությունները կցուցաբերեն բավարար իմաստություն ու հեռատեսություն վերոգրյալն իրապես գիտակցելու և այդ առումով անհրաժեշտ կանխարգելիչ քայլեր

ձեռնարկելու համար: Ակնհայտ է, որ թուրքական դիվանագիտությունն ու հատուկ ծառայությունները Ռուսաստանում, Իրանում, Չինաստանում և հետխորհրդային տարածաշրջանների մի քանի երկրներում ունեն դաշնակից-համախոհների զգալի բանակ, ուստի հիշյալ երկրների իշխանությունները պետք է վարեն զգուշավոր և, միևնույն ժամանակ, կենտրոնախույս էթնիկ տարրերին իրավական դաշտի շրջանակներում պահող ներքին քաղաքականություն: Հակառակ պարագայում, թուրքական քարոզչամեքենան կրկին կխոսի «թուրք եղբայրների» շահերի ոտնահարման մասին, ինչին ականատես եղանք 2015թ. «Իսլամական պետության» (ԻԼԻՊ) զինյալների դեմ Սիրիայի տարածքում ռուսական ռազմական ավիացիայի ծավալած հակահաբեկչական գործողությունների ժամանակ:

Նոյեմբեր, 2016թ.

Աղբյուրներ և գրականություն

1. Карабахский экспресс, Степанакерт, март-апрель 2013, N 2 (40).
2. *Махнач В.Л., Елишев С.О.,* Политика. Основные понятия: справочник, словарь, М., 2008.
3. *Томас де Ваал,* «Чёрный сад. Армения и Азербайджан между миром и войной», М., 2005.
4. *Сафрастян Р.А.,* Доктрина османизма в политической жизни Османской империи (50-70гг. XIXв.), Ереван, 1985.
5. Հայկական Սովետական հանրագիտարան, Երևան, 1983, հատոր 9:
6. *Հարությունյան Ա.Հ.,* Առաջին համաշխարհային պատերազմի ռազմաղիվանագիտական պատմությունից, Երևան, 1983:
7. Современная иллюстрированная энциклопедия. История зарубежных стран, М., 2008.
8. Հայկական Սովետական հանրագիտարան, Երևան, 1976, հատոր 2:
9. *Сакоян Т.А., Сакоян А.К.,* Взгляд на истоки и результаты Второй мировой войны // Инновации в современном мире: сборник статей Международной научно–практической конференции (10 сентября 2015г., г. Москва), Москва, РИО ЕФИР, 2015.
10. *Зиновьев А.А.,* Русская трагедия. Гибель утопии, М., 2002.
11. *Зиновьев А.А.,* Зияающие высоты, М., 2008 (первое издание: 1976г., Швейцария).
12. Уйгуры как символ пантюркизма, http://uyghurtoday.com/2016/09/30/uygury-kak-simvol-pantyurkizma/
13. *Գարրիելյան Հ.,* Թուրք-չինական տարաձայնությունների շուրջ, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=13740
14. Абраамян А., Для кого читал письмо Назарбаев? http://ru.aravot.am/2014/05/30/179924/
15. *Хаусхофер К.,* О геополитике: Работы разных лет, М., 2001.

ՊԱՆԹՅՈՒՐՔԻԶՄԸ ՈՐՊԵՍ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ

Տարոն Սաքոյան

Ամփոփագիր

Հոդվածում ներկայացվել են պանթյուրքիզմի գաղափարախոսության էությունն ու անցած պատմական ուղու համառոտ վերլուծությունը, ինչը սպառնալիք է նաև մեր օրերում: Ներկայացվել են նաև անվանի գիտնական Ա.Զինովևի հայացքներն Արևմուտքի աշխարհաքաղաքական ծրագրերի շուրջ, ինչի հիման վրա հեղինակի կողմից առաջ է քաշվել վարկած, որը նախատեսում է ՌԴ, ԻԻՀ և ՉԺՀ ջախջախումն ու տարածքային մասնատումը Թուրքիայի և ողջ պանթյուրքական ուժերի միջոցով: Վերջնական արդյունքում հեղինակը հանգել է այն տեսակետին, որ ներկայումս պահանջված է Մոսկվա-Պեկին-Թեհրան-Երևան առանցքի ձևավորումը, ինչը կաթվածի ազդեցություն կունենա պանթյուրքական տարրերի և նրանց սատարող ուժերի վրա:

ПАНТЮРКИЗМ КАК ГЕОПОЛИТИЧЕСКИЙ ВЫЗОВ ДЛЯ ЕВРАЗИЙСКИХ НАРОДОВ

Тарон Сакоян

Резюме

В статье кратко представлены и проанализированы суть и пройденный исторический путь идеологии пантюркизма как геополитического зла, которое и в наши дни является угрозой. Также изложена концепция знаменитого ученого А.Зиновьева в связи с геополитическими планами Запада, на основе которой автором выдвинута гипотеза о том, что для разгрома и территориального расчленения РФ, ИРИ и КНР будут приложены силы Турции и всего пантюркистского мира. В конечном итоге автор пришел к выводу, что на данном этапе необходимо создание оси Москва-Пекин-Тегеран-Ереван, которая парализовала бы все пантюркистские элементы и содействующие им силы.

PAN - TURKISM AS A GEOPOLITICAL CHALLENGE TO EURASIAN NATIONS

Taron Sakoyan

Resume

The article presents a brief analysis of the Pan-Turkism's historical path as the geopolitical evil, which still exists today and could pose a significant a danger. Renowned scholar A. Zinoviev's views related to geopolitical plans of the West are presented, which serve a starting point for the author of the article to suggest a hypothesis that the main threat of destruction and territorial disintegration of the Russian Federation, the Islamic Republic of Iran and the People's Republic of China could stem from Turkey and the rest of the Pan-Turkic world. The author concludes that there is an evident necessity to create Moscow – Beijing - Tehran - Yerevan axis, which will paralyze Pan-Turkic elements and their allies.

ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍՈՒՄ

Վարդան Աթոյան*

Բանալի բառեր՝ հանրային քաղաքականություն, ուղեղային կենտրոն, մտքի ֆաբրիկա, հանրային քաղաքականության հետազոտական հաստատություն, տիպաբանություն, փորձագիտական հանրություն, ինտելեկտուալ արտադրանք:

Հանրային քաղաքականության հետազոտական հաստատությունների կամ, ինչպես առավել ընդունված է անվանել՝ ուղեղային կենտրոնների (ՈւԿ) ուսումնասիրության կարևորագույն հարցերից է վերջիններիս տիպաբանության խնդիրը: Ակնհայտ է, որ այս խնդրի հաջող իրագործումը կապված է մի շարք դժվարությունների հետ, որոնք պայմանավորված են աշխարհում գործող շուրջ 7000 ՈւԿ-ների մասնագիտացման ուղղությունները, նրանց առջև դրված առաջնահերթ նպատակները, կառուցվածքային, իրավական կարգավիճակը, թողարկվող մտավոր արտադրանքի տեսակները, ֆինանսավորման աղբյուրները և կազմակերպությունում ընդգրկված փորձագետ-վերլուծաբանների որակավորման տարբերությունները, ինչպես նաև տարբեր երկրներում տեղական քաղաքական մշակույթի և քաղաքական որոշումների կայացման գործընթացում ձևավորված ավանդույթների առանձնահատկությունները հաշվի առնելու բարդությամբ: Բացի այդ, վերջին տասնամյակներում ամբողջ աշխարհում ՈւԿ-ների թե՛ քանակական, թե՛ տեսակների բազմազանության պարբերական ավելացումն էլ ավելի է դժվարացնում ՈւԿ-ների համապարփակ և համընդգրկուն տիպաբանության մշակումը:

Վերոնշյալ հանգամանքներով պայմանավորված՝ համապատասխան մասնագիտական գրականությունում և ՈւԿ ոլորտի ուսումնասիրությամբ զբաղվող հետազոտողների աշխատանքներում կարելի է հանդիպել ՈւԿ-ների տիպաբանության տարաբնույթ, սակայն, միաժամանակ՝ ոչ համապարփակ մոտեցումներ: Այս աշխատանքով բնավ խնդիր չի դրվում պատասխանել արտերկրի քաղաքագիտական դիսկուրսում հնչող բոլոր հարցերին, այլ առաջին անգամ հայրենական գիտական պարբերականում փորձել

* ՀՊՏՀ քաղաքագիտության ամբիոնի դոցենտ, տ.գ.թ.:

հնարավորին չափ ամբողջացնել տարբեր հետազոտողների կողմից մշակված մոտեցումները, ներկայացնել մեր տեսակետը և մասնագիտական քննարկումը տարածել նաև Հայաստանի քաղաքագիտական շրջանակներում:

Հարկ է նշել, որ, ընդհանուր առմամբ, ըստ հետազոտվող թեմաների մասշտաբի ընդգրկման՝ ՈւԿ-ները մասնագիտացված են լինում ինչպես գլոբալ հիմնախնդիրների, այնպես էլ՝ տարածաշրջանային խնդիրներում կամ ունենում են նեղ մասնագիտացված, ոլորտային ուղղվածություն: Ըստ քաղաքական, գաղափարախոսական կողմնորոշման, հատկապես Արևմուտքում, ՈւԿ-ները կարող են լինել գաղափարայնացված (որևէ քաղաքական գաղափարախոսության կամ քաղաքական հոսանքին հարող), ինչպես, օրինակ, ամերիկյան «Ժառանգություն» հիմնադրամը՝ որպես պահպանողական գաղափարախոսության թևում գործող հաստատություն, կամ Կատոնի ինստիտուտը՝ որպես լիբերտարիստական քաղաքական կողմնորոշում ունեցող կազմակերպություն: Մյուս կողմից, կարող են լինել նաև քաղաքականապես անկախ ՈւԿ-ներ, ինչպես, օրինակ, Բրուքինգսի ինստիտուտը:

Հատկանշական է, որ քաղաքագիտական գրականության մեջ առավել հաճախ կիրառվում է ՈւԿ-ների տիպաբանության իրականացման երկու հիմնական սկզբունք՝ ինստիտուցիոնալ և ըստ գործունեության ուղղությունների: Առաջին սկզբունքի համաձայն՝ հիմք են ընդունվում ՈւԿ-ների ինստիտուցիոնալ հատկանիշները՝ իրավական կարգավիճակ, ֆինանսավորման ձևաչափեր ու աղբյուրներ և այլն, երկրորդ սկզբունքի համաձայն՝ ՈւԿ գործունեության ուղղությունները (առաքելությունը, ռազմավարական նպատակներն ու ոլորտային ուղղվածությունը):

ՈւԿ-ների ուսումնասիրությանը նվիրված աշխատանքներից պարզ է դառնում, որ դրանցում առավել տարածված և ընդունելի է համարվում ամերիկացի հետազոտողներ Է.Ռիչի և Ք.Ուիվերի առաջարկած մոտեցումը, որոնք առանձնացնում են ՈւԿ-ների երեք հիմնական տեսակ.

- ակադեմիական ՈւԿ-ներ, որոնք ստացել են «համալսարաններ առանց ուսանողների» պայմանական անվանումը,
- պայմանագրային հետազոտական հաստատություններ,
- քաղաքական գաղափարախոսություն որդեգրած, դրանք քարոզող և շահապաշտպան հաստատություններ [1, c. 71]:

Վերոնշյալ տեսակի հաստատությունները տարբերվում են իրենց առջև դրված խնդիրներով, արտադրանքով, ֆինանսավորման աղբյուրներով,

ինչպես նաև աշխատակիցների կազմով և որակավորմամբ: Այսպես, «համալսարաններ առանց ուսանողների» տեսակին համապատասխանող ՈւԿ-ների (ինչպիսիք են Բրուքինգսի ինստիտուտը կամ Ռասել Սեյջի հիմնադրամը) աշխատակիցներն առավելապես համալսարանների պրոֆեսորական կազմի գիտական աստիճան ունեցող մասնագետներ են, ինչն էլ հիմք է հանդիսացել նման կազմակերպություններն անվանակոչելու «համալսարան առանց ուսանողների»: Նման հաստատությունների ներկայացուցիչներն իրենց աշխատանքում մեծ նշանակություն են տալիս ակադեմիական շրջանակներում ընդունված նորմերին և գիտական օբյեկտիվությանը: ՈւԿ-ների մյուս տեսակների համեմատ՝ օբյեկտիվության առավել մեծ չափաբաժնի պահպանմանը մեծապես նպաստում է ֆինանսավորման աղբյուրների բազմազանությունը, ինչը բնորոշ է հատկապես նման կազմակերպություններին: Վերջիններիս ֆինանսական հոսքերի գերակշիռ մասը ստացվում է մասնավոր հիմնադրամներից և նվիրատվություններից: Օրինակի համար նշենք, որ 2015թ. Բրուքինգսի ինստիտուտի տարեկան բյուջեի (ավելի քան $95 մլն) եկամտային մասի շուրջ 86%-ը ձևավորվել է նվիրատվություններից և դրամաշնորհներից, իսկ 10%-ը՝ նպատակային հիմնադրամի կողմից ստացված միջոցներից [2, pp. 42-43]:

Ի տարբերություն «համալսարաններ առանց ուսանողների» տեսակի հաստատությունների՝ պայմանագրային ՈւԿ-ները (օրինակ՝ ՌԷՆԴ կորպորացիան և Ուրբան ինստիտուտը) գործում են առավելապես պետական հաստատություններից կամ մասնավոր ընկերություններից ստացված պատվերների հիման վրա, հետևաբար ֆինանսական միջոցները ևս գոյանում են այդ պայմանագրերից: Այսպես, ՌԷՆԴ կորպորացիայի 2015թ. բյուջեի եկամտային մասը կազմել է շուրջ $310 մլն, որից շուրջ $309 մլն-ն ստացվել է պայմանագրերից և դրամաշնորհներից, այդ թվում՝ ավելի քան 80%-ը՝ ԱՄՆ կառավարությունից [3]: Հաշվի առնելով գործունեության պայմանագրային բնույթը՝ վերջիններիս հետազոտությունների օրակարգը ևս առավելապես թելադրվում է պատվիրատուների կողմից, ինչը որոշակիորեն սահմանափակում է փորձագետների ստեղծագործական ազատությունը և սեփական նախասիրությամբ հետազոտական թեմաների ընտրությունը:

Երրորդ՝ գաղափարայնացված, քարոզչական կամ շահապաշտպան բնույթի ՈւԿ-ները մեծապես քաղաքականացված են: Վերջիններս ձգտում են արձագանքել քաղաքական առաջնորդների ընթացիկ պահանջներին և ազդե-

ցություն գործել նրանց ու քաղաքական գործընթացի մեջ ներգրավված այլ դերակատարների վրա [4]: Նման ՈւԿ-ների հրապարակումները հաճախ թելադրված են իրենց գաղափարական և քաղաքական նախապատվություններով և ակադեմիական օբյեկտիվությամբ զիջում են վերոնշյալ երկու տեսակի կազմակերպություններին: Նման կազմակերպությունների համար հիմնական դոնոր են հանդիսանում անհատ գաղափարակիցները, քաղաքական համակիրները և նրանց գաղափարախոսությունը կիսող այլ հաստատությունները: Այսպես, 2015թ. «Ժառանգություն» հիմնադրամի $99,5 մլն կազմող բյուջեի շուրջ 75%-ը կամ շուրջ $74,5 մլն գոյացել է անհատների նվիրատվություններից [5, p. 49], որոնք, կարելի է ենթադրել, առավելապես ԱՄՆ Հանրապետական կուսակցության կողմնակիցներն են:

Հարկ է, սակայն, ընդգծել, որ վերոնշյալ տիպաբանությունն առավելապես բնորոշ և ընդգծված է արևմտյան (հատկապես ԱՄՆ) քաղաքական մշակույթի երկրներում: Մյուս կողմից, նույնիսկ ԱՄՆ-ում վերոնշյալ տիպաբանությանն ամբողջովին համընկնող կենտրոնները շատ չեն, և հաճախ կարելի է հանդիպել, այսպես կոչված՝ «հիբրիդային» տիպի հաստատությունների, որոնք միաժամանակ օժտված են ներկայացված մի քանի տեսակների հատկանիշներով:

ՈւԿ դաշտի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ աշխարհի բազմաթիվ այլ տարածաշրջաններում գործող ՈւԿ-ների տիպաբանությունը հաճախ էականորեն տարբերվում է: Այս համատեքստում հարկ է հիշատակել Ն.Մեդուշևսկու մոտեցումը, որն առանձնացնում է ՈւԿ-ների հետևյալ գործառնական մոդելները.

- Ամերիկյան մոդել, որտեղ առկա է բաժանում ոչ միայն կառավարականի և ոչ կառավարականի, այլ նաև կառավարական կենտրոնները բազմազանեցված են իշխանությունների տարանջատման մեխանիզմին համապատասխան:
- Եվրոպական մոդել, որտեղ ՈւԿ-ները գործառնում են տվյալ երկրի քաղաքական համակարգում գոյություն ունեցող ուժերի հարաբերակցությանը համապատասխան: Մասնավորապես, ամեն իրական գոյություն ունեցող քաղաքական ուժ (օրինակ՝ կուսակցությունները) տիրապետում է սեփական վերլուծական կառույցի՝ ՈւԿ-ի:
- Ասիական մոդել, որտեղ գոյություն ունեն անաչառ ՈւԿ-ներ, սակայն մեծ մասամբ ՈւԿ-ները գործում են կառավարության կամ անվտանգու-

թյան կառույցներին առընթեր, ինչն անհրաժեշտ է բնակչության նկատմամբ տեղեկատվական գերակայության հասնելու և միջազգային գործընթացների վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն ստանալու համար [6, c. 46-47]:

Մեր դիտարկմամբ, սակայն, միայն որոշակի վերապահումով հնարավոր է նկարագրել եվրոպական միասնական, այսպես կոչված՝ «եվրոպական մոդելի» ՈւԿ և դրա բնորոշիչ հատկությունները: Եվրոպական յուրաքանչյուր առանձին վերցրած երկրում ՈւԿ գործառնությունը, դերակատարությունը, ազդեցությունն ու տիպաբանությունը որոշակիորեն, իսկ որոշ դեպքերում՝ էականորեն տարբերվում են: Այսպես, իտալացի հետազոտողների գնահատմամբ՝ միայն Իտալիայում կարելի է հանդիպել չորս տեսակի ՈւԿ.

1. Կուսակցապատկան ՈւԿ-ներ, որոնք կապված են քաղաքական համակարգին և ունեն անկախության ցածր աստիճան:
2. Անկախության էական մակարդակ ունեցող քաղաքական և ինտելեկտուալ քննարկումներին նշանակալիորեն օժանդակող ՈւԿ-ներ: Դրանց նպատակն է երկարաժամկետ ժամանակահատվածում ազդել երկրի քաղաքական մշակույթի ձևավորման, իսկ միջնաժամկետ ժամանակահատվածում՝ քաղաքական քննարկումների վրա: Նման ՈւԿ-ները հազվադեպ են իրականացնում քաղաքականության արհեստավարժ վերլուծություններ:
3. ՈւԿ-ներ, որոնք մասնագիտացված են քաղաքականության գնահատման և ազդեցության չափման խնդիրներում:
4. Քաղաքականության ակումբներ (*Policy Clubs*), որոնք առավել մեծ չափով համախոհ քաղաքական գործիչների և ինտելեկտուալների հանդիպումների և համաժողովների համար նախատեսված հաստատություններ են, քան մշտական հիմունքներով գործող և ուսումնասիրություններ իրականացնող կազմակերպություններ [7, p. 90]:

Եվրոպական այլ երկրների ՈւԿ-ների տիպաբանության քննարկումը և գործառնության տարբերությունները կարելի է շարունակել, սակայն, ներկայացվող նյութը չծանրաբեռնելու նկատառումներից ելնելով՝ սահմանափակվենք միայն իտալական օրինակով: Այնուամենայնիվ, նշենք, որ չնայած տարբեր երկրներում ՈւԿ-ների գործունեության և ռազմավարական նպա-

տակների միջև առկա տարբերություններին՝ ՈւԿ տիպաբանության քարտեզագրման համատեքստում անհրաժեշտ է գնահատել Ն.Մեդուշևսկու մշակումը, որը փորձել է ընդհանրացնել բոլոր տիպերը միասնական «մոդելներում», ինչը լավ հիմք է ծառայում նշված մոդելների հետագա լրամշակման համար:

Վերոնշյալ թեմայի շրջանակներում հետաքրքրական է հետազոտող Հ.Ուլրիխի փորձն ընդհանրացնել Եվրամիության (ԵՄ) տարածքում գործող ՈւԿ-ների համար: Նրա դիտարկմամբ, ԵՄ ՈւԿ-ներն ունեն թե՛ նմանություններ, թե՛ տարբերություններ: Վերջինս արտահայտվում է տարբեր ՈւԿ-ների գործառնության մեթոդներով, չափերով, ֆինանսավորման աղբյուրներով, թիրախային լսարանով և քաղաքական միջավայրով, որում վերջիններս գործառնում են: Հետազոտողը ԵՄ ՈւԿ-ները բաժանում է չորս տեսակի.

1. ԵՄ ներքին ՈւԿ-ներ. քաղաքական խորհրդատուների խումբ (*The Group of Policy Advisors*), որն առավել հայտնի է իր ֆրանսիական անվանումով՝ *Cellule de Prospective*: Գործում է Եվրոպական հանձնաժողովին առընթեր և կապված է արտաքին հետազոտական հաստատություններին և ընկերակցություններին:
2. Բրյուսելում տեղակայված ԵՄ ՈւԿ-ներ. Բրյուսելում տեղակայված ՈւԿ-ները ԵՄ անդամ երկրների իրենց գործընկերների համեմատ ունեն երկու հիմնական տարբերություն: Առաջին՝ նրանց տեղաբաշխվածությունը ԵՄ սրտում հնարավորություն է տալիս հաճախակի մուտք ունենալ ԵՄ այցելող անդամ երկրների պաշտոնյաների մոտ: Երկրորդ՝ նրանց անկախությունը որևէ անդամ երկրի կառավարությունից թույլ է տալիս համեմատաբար անձեռնմխելի լինել ազգային քաղաքականության օրակարգերից, ինչը կարող է ԵՄ մակարդակին բարձրացնել դրանց օբյեկտիվությունը:
3. ԵՄ կողմնորոշմամբ անդամ երկրների ՈւԿ-ներ. այս տեսակն ընդգրկում է ԵՄ անդամ երկրների տեղական քաղաքական համակարգի բնույթով պայմանավորված՝ ԵՄ կողմնորոշումով տարբեր խնդիրներում մասնագիտացված և գործառնության առանձնահատուկ մեթոդներով ՈւԿ-ներ:
4. Համալսարանում տեղակայված եվրոպական հետազոտական հաստատություններ. համալսարաններում տեղակայված եվրոպական հետազոտական կենտրոնները չնայած փորձում են պաշտպանել իրենց հետազոտական անկախությունը, սակայն հաճախ նաև համագործակցում

են միմյանց հետ՝ ներգրավվելով որոշակի հետազոտական նախագծերում [8, p. 53]:

Ինչ վերաբերում է, այսպես կոչված՝ «Ասիական մոդելին», ապա այստեղ նույնպես, չնայած ՈւԿ-ների միջև առկա որոշ նմանություններին, տիպաբանությունը տարբեր երկրներում և տարածաշրջաններում էականորեն տարբերվում է: Այսպես, բավական բարդ է պատկերացնել, մի կողմից՝ Հեռավոր Արևելքի երկրներում (օրինակ, Ճապոնիա, Չինաստան) գործող ՈւԿ-ների, մյուս կողմից՝ Կենտրոնական Ասիայի կամ Մերձավոր Արևելքի (օրինակ, Իսրայելի) ՈւԿ-ների միասնական մոդել: Եթե Ճապոնիայում առավել տարածված են պայմանագրային ՈւԿ-ները, ապա Չինաստանի ՈւԿ-ներն առավել հաճախ բաժանում են երեք տեսակի՝ պաշտոնական, կիսապաշտոնական և քաղաքացիական (կամ անկախ): Առաջին տեսակին են դասվում կառավարության ենթակայության տակ գործող ՈւԿ-ները, ինչպիսին է, օրինակ, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության (ՉԺՀ) արտաքին գործերի նախարարությանն առընթեր Չինաստանի միջազգային ուսումնասիրությունների ինստիտուտը: Կիսապաշտոնական ՈւԿ-ների մեջ են մտնում հանրային, առավելապես ակադեմիական բնույթի ինստիտուտները: Որպես օրինակ կարելի է նշել Չինաստանի Հասարակական գիտությունների ակադեմիայի Ռուսաստանի, Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի ուսումնասիրությունների ինստիտուտը: Քաղաքացիական ՈւԿ-ներին են դասվում համալսարանական և մասնավոր կենտրոնները, որոնցից է, օրինակ, Շենսիի մանկավարժական համալսարանի Կենտրոնական Ասիայի ինստիտուտը: Հարկ է ընդգծել, որ ՉԺՀ դեպքում առավել ազդեցիկ են ՈւԿ-ների առաջին երկու տիպերը [9]: Մյուս կողմից, ի տարբերություն Չինաստանի ՈւԿ-ների՝ իսրայելական ՈւԿ-ներն առավելապես զբաղված են անվտանգության ոլորտում հետազոտությունների անցկացման ուղղությամբ և մեծ մասամբ ֆինանսավորվում են նվիրատվությունների (հաճախ արտերկրից) հաշվին [10]:

ՈւԿ-ների տիպաբանության թեմայի քննարկման համատեքստում հետաքրքրքական է նաև ռուսաստանցի հետազոտող Ա.Սիտնիկովի մշակած բավական համապարփակ տիպաբանությունը, որի համաձայն՝ ՈւԿ-ները բաժանվում են հետևյալ սկզբունքով.

- *ըստ գործունեության տեսակների (գործառույթների)՝* վերլուծություն և հետազոտություն իրականացնող ՈւԿ-ներ, կրթական ծառայություններ

մատուցող ՈւԿ-ներ, տարբեր խնդիրների վերաբերյալ քննարկումներ (սեմինարներ, համաժողովներ, կլոր սեղաններ և այլն) կազմակերպող ՈւԿ-ներ, միջնորդային գործառույթներ իրականացնող ՈւԿ-ներ և բազմոլորտ ՈւԿ-ներ,

- *ըստ գործունեության ոլորտների (ուղղությունների)* ՝քաղաքական հիմնախնդիրներով զբաղվող ՈւԿ-ներ (ժողովրդավարացում և ժողովրդավարություն, կոռուպցիայի կանխարգելում), տնտեսական հիմնախնդիրներով զբաղվող ՈւԿ-ներ (տնտեսական զարգացում, ներդրումների ներգրավում, ճգնաժամերի կանխարգելում), բնապահպանական հիմնախնդիրներով զբաղվող ՈւԿ-ներ (շրջակա միջավայրի պաշտպանություն), սոցիալական հիմնախնդիրներով զբաղվող ՈւԿ-ներ (հանրային անվտանգություն, պայքար աղքատության դեմ), իրավական հարցերով զբաղվող ՈւԿ-ներ (օրենսդրական բարեփոխումներ, իրավական ինստիտուտների հիմնում և զարգացում) և այլ (բազմոլորտ),
- *ըստ իրավական կարգավիճակի* ՝հասարակական կազմակերպություններ (ոչ կուսակցական, ոչ կոմերցիոն հասարակական կազմակերպություններ, ոչ կառավարական կազմակերպություններ), հանրային կազմակերպություններ, որոնց հիմնադիրները հանդիսանում են իշխանական, կուսակցական կամ գործարար կառույցները, կրթական հաստատությունները, իշխանական կառույցների դեպարտամենտները, կոմերցիոն կազմակերպությունները, խորհրդատվական (քոնսալթինգային) կազմակերպությունները, ընտրական տեխնոլոգիաների կենտրոնները և այլն,
- *ըստ անկախության մակարդակի* ՝ իշխանական մարմինների համար աշխատող (դաշնային, տարածաշրջանային, տեղական), քաղաքական կուսակցությունների, գործարար կառույցների համար աշխատող, անկախ կենտրոններ [11, c. 187]:

Ոլորտի մեկ այլ հետազոտող՝ Դ.Զայցևը, համադրելով մի շարք հետազոտողների, այդ թվում՝ Է.Ռիչի, Ք.Ուիվերի, Ջ.ՄաքԳանի, Դ.Էյբելսոնի մոտեցումները, խմբավորել և մշակել է ՈւԿ-ների սեփական տիպաբանությունը [12, c. 53-56]:

Ըստ Զայցևի, առաջին տիպին են պատկանում, այսպես կոչված՝ *«հիմնարար հետազոտությունների» կենտրոնները,* որոնք կողմնորոշված են գի-

տական հետազոտությունների իրականացման ուղղությամբ և բավարարում են, առաջին հերթին, սեփական հետազոտական հետաքրքրությունը: Նման տեսակի վերլուծական կենտրոնների հետազոտություններն ու մշակումներն իրենց ձևաչափով, ծավալով և ոճով «հիմնարար» են, քանի որ պատմականորեն առավել մոտիկ են ավանդական ակադեմիական կառույցներին: Միաժամանակ, նման կենտրոնների մշակումներն առավել կիրառական են, քան ավանդական ակադեմիական կազմակերպությունների գիտական հետազոտությունները: Այս տեսակի կազմակերպությունների գործունեությունը չի սահմանափակվում հետազոտությունների անցկացմամբ: Դրանք զբաղվում են, առաջին հերթին, քաղաքական վերնախավի լուսավորությամբ, կրթությամբ և գաղափարների գեներացմամբ: Վերջիններիս վերլուծական արտադրանքը ներկայացվում է «բազմահատոր հաշվետվությունների», գրքերի, մենագրությունների, գիտական հոդվածների տեսքով, որոնք ներկայացվում են գիտաժողովների, գիտական և փորձագիտական սեմինարների ընթացքում: Նման հետազոտական կառույցների կարգավիճակը մեծապես պայմանավորված է աշխատակիցների՝ ակադեմիական ոլորտից եկածների, գիտնականների կազմով: Կախված կազմակերպական ինքնուրույնությունից՝ այս կենտրոնները բաժանվում են երկու տիպի՝ *քաղաքական հետազոտությունների ինստիտուտների* և *ակադեմիական (համալսարանական) կենտրոնների*: *Քաղաքական հետազոտությունների ինստիտուտները* կազմակերպական առումով ինքնուրույն հաստատություններ են, սակայն հաճախ ունեն անուղղակի կապ ակադեմիական ինստիտուտների և ուղղակի կապ փորձագիտական հանրույթի (քաղաքական դաշտի արհեստավարժ հետազոտողների հանրության) հետ: Այդ պատճառով քաղաքական հետազոտությունների ինստիտուտների կառուցվածքը, որպես կանոն, կառուցված է ըստ «գիտելիքների ոլորտների»՝ քաղաքագիտական, սոցիալական, կորպորատիվ հետազոտություններ: Ընդգծված օբյեկտիվությունը և գիտական սկզբունքներին հետևելը թույլ չի տալիս նման կենտրոններին մշտապես հետևել որևէ գաղափարախոսական կողմնորոշման: Դրանով պայմանավորված՝ տարբեր իրավիճակներում քաղաքական հետազոտությունների ինտիտուտների ներկայացուցիչները կիսում են այս կամ այն «գաղափարախոսության» կողմնակիցների կարծիքները կամ քննարկվող հարցի վերաբերյալ մշակում են սեփական միջինացված դիրքորոշումը: Այսինքն՝ քաղաքական հետազոտությունների ինստիտուտներն, ըստ Դ.Զայցևի, պահպանում են կենտրոնամետ դիրքեր:

Օրինակ, ԱՄՆ քաղաքական հետազոտությունների ամենահին ինստիտուտները, ինչպիսիք են Քարնեգի հիմնադրամը, Միջազգային հարաբերությունների խորհուրդը, Բրուքինգսի ինստիտուտը, դասվում են կենտրոնամետ հաստատությունների շարքին: Քաղաքական հետազոտությունների ինստիտուտները գործում են հիմնականում ինստիտուցիոնալ նպատակային հիմնադրամների (*endowment*), դրամաշնորհների և մասնավոր հանգանակությունների միջոցով: *Ակադեմիական և համալսարանական կենտրոնները* գործում են ակադեմիական կառույցներին կից, ինչպիսիք են խոշոր համալսարաններն ու գիտությունների ակադեմիաները: Վերջիններս ունեն ինքնուրույնության բավարար մակարդակ և այլ վերլուծական կենտրոնների հետ հավասար մասնակցում են հանրային քաղաքականությանը: Այնուամենայնիվ, իրենց վերադաս կազմակերպության հետ կապը որոշում է այս ենթատեսակին պատկանող կազմակերպությունների քաղաքական կողմնորոշումը: Նման կազմակերպությունների գործունեության համար ֆինանսական միջոցները հիմնականում ստացվում են պետությունից կամ վերադաս կազմակերպությունից: Բացի այդ, բազմաթիվ առաջատար համալսարաններ, հատկապես ԱՄՆ-ում (և դրանց կից վերլուծական կենտրոնները) ունեն իրենց նպատակային հիմնադրամները:

Երկրորդ տեսակին են պատկանում պայմանագրի հիման վրա գործող կենտրոնները, որոնք կողմնորոշված են կիրառական հետազոտությունների և վերլուծությունների իրականացման ուղղությամբ և եկամուտ ստանալու նպատակով պայմանագրին համապատասխան մշակում են երաշխավորություններ: Այս հաստատությունների գործունեությունը կենտրոնացած է պատվիրատուների համար քաղաքական վերլուծության, խորհրդատվության և պլանավորման վրա: Կախված ֆինանսավորման հիմնական աղբյուրից և գլխավոր պատվիրատուից՝ Դ.Զայցևն առանձնացնում է պայմանագրային կենտրոնների երկու ենթատեսակ՝ *կենտրոններ, որոնք աշխատում են պետական պատվերի համար* և *կենտրոններ, որոնք աշխատում են «բաց շուկայում»*: Առաջին ենթատեսակի կենտրոնների հիմնական պատվիրատուն և ֆինանսական աղբյուրը պետական կազմակերպություններն են: Նման կենտրոնները հաճախ ստեղծվում են պետական հաստատություններին կից, սակայն, բավականաչափ ինքնուրույնություն ունեն պետությունից: Երկրորդ ենթատեսակին են պատկանում այն կազմակերպությունները, որոնք չեն կողմնորոշվում կոնկրետ պատվիրատուի ուղղությամբ և ունեն տարաբնույթ

պատվիրատուներ, ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածից և/կամ ունեն ֆինանսավորման մասնավոր աղբյուրներ՝ դրամաշնորհներ, նվիրատվություններ և առաջարկում են սեփական վերլուծական արտադրանքը «բաց շուկայում»: Ֆինանսական աղբյուրների բազմազանեցումը թույլ է տալիս վերջիններիս պահպանել համեմատական չեզոքություն:

ՈՒԿ-ների երրորդ տեսակին են պատկանում, այսպես կոչված՝ *հանրային շահերի ազդեցության կենտրոնները:* Վերջիններս կողմնորոշված են կիրառական բնույթի հետազոտություններ իրականացնելու ուղղությամբ և առաջարկում են հանրային նշանակության ու սոցիալ-քաղաքական խնդիրների լուծումներ: Այս կենտրոնների գործունեությունը չի սահմանափակվում քաղաքական վերլուծությամբ, դրանք ակտիվորեն մշակում և առաջ են մղում երաշխավորություններ, զբաղվում են որոշակի քաղաքական և սոցիալական խմբերի շահերի առաջմղմամբ, քաղաքացիների լուսավորությամբ ու կրթությամբ և համեմատաբար առավել շատ են ազդում հանրային քաղաքականության վրա: Դրանց վերլուծական արտադրանքն առավել կոնկրետ է, ոչ ծավալուն, իսկ դրանց հանրայնացմանն ու տարածմանը շատ ավելի երկար ժամանակ է հատկացվում, քան պատրաստմանը, քանի որ նման հաստատություններն առավել կենտրոնացած են *PR*-ի, հատուկ ակցիաների և իրադարձությունների կազմակերպման ուղղությամբ: Ազդեցության կենտրոնների յուրահատուկ արտադրանքն են ուսուցման բազմապիսի դասընթացների ծրագրերը, կրթաթոշակներն ու դրամաշնորհները, որոնք տրվում են այս կենտրոնների գաղափարներն առաջ մղող մարդկանց և նախագծերին: Նման կենտրոնների աշխատակիցները հաճախ ունեն քաղաքական և հասարակական գործունեության փորձառություն:

Կախված սոցիալ-քաղաքական կողմնորոշումից՝ Դ.Զայցևն ազդեցության կենտրոնները բաժանել է *գաղափարախոսական (կուսակցական)* և *քաղաքացիական կենտրոնների*: *Գաղափարախոսական (կուսակցական) կենտրոններն ունեն* որոշակի գաղափարախոսական ուղղվածություն: Դրանք հաճախ կիսում են այն քաղաքական կուսակցության գաղափարախոսությունը, որի հետ կապված են և/կամ գործում են որևիցե քաղաքական կուսակցությանը կից: Առավել պատկերավոր օրինակներից է Գերմանիայի Կոնրադ Ադենաուերի հիմնադրամը, որը գործում է Քրիստոնեա-ժողովրդավարական միությանը կից, և Հանս Շիդելի հիմնադրամը, որը գործում է Քրիստոնեա-սոցիալական միությանը կից: Այս համատեքստում պետք է

շեշտել, որ Գերմանիան կուսակցապատկան ՈւԿ-ների ամենազարգացած համակարգ ունեցող երկրներից է: Նման հաստատությունները գործում են հովանավորների՝ քաղաքական կուսակցությունների, անհատների և կորպորացիաների միջոցների հաշվին:

Հավելենք, որ կուսակցապատկան ՈւԿ աշխատակազմը հաճախ համալրվում է ներկա կամ նախկին կուսակցական պաշտոնյաներով, քաղաքական գործիչներով և կուսակցության անդամներով: Վերջիններիս օրակարգի վրա մեծապես ազդում են կուսակցության պահանջները [13, p. 7]: Բացի այդ, կուսակցապատկան ՈւԿ-ները մեծ դեր են խաղում քաղաքական սոցիալիզացիայի տեսանկյունից: Վերջիններս փորձում են քաղաքական կյանք ներգրավել քաղաքականության նկատմամբ անտարբեր քաղաքացիներին և աջակցության համախմբման նպատակով փոխակերպում են կուսակցության ծրագրահենքը (պլատֆորմ) [14, c. 22]:

Ի տարբերություն վերջիններիս՝ *քաղաքացիական կենտրոններն* իրականացնում են հանրության շահերից բխող կիրառական հետազոտություններ և մշակումներ: Նման կենտրոնների ղեկավար մարմինը հաճախ ունենում է կոլեգիալ ղեկավարման բնույթ կամ կենտրոնի ղեկավարը որոշվում է ընտրության միջոցով: Ֆինանսական միջոցները գոյանում են անդամավճարներից, հիմնադրամների դրամաշնորհներից և մասնավոր նվիրատվություններից:

ՈւԿ-ների տիպաբանության ուսումնասիրության համատեքստում ներկայացնենք նաև Մ.Գորնու մշակած աղյուսակի համառոտ տարբերակը, որում ամփոփվում են հետազոտողի առանձնացրած չորս տեսակի ՈւԿ-ներն ու դրանց առանձնահատկությունները [15] (տե՛ս *Աղյուսակ 1*):

ՈւԿ-ների տիպաբանության իրականացման բավական յուրահատուկ մոտեցում է առաջարկում Ա.Սունգուրովը, որը ՈւԿ-ները տեսակավորում է ըստ իշխանական որոշումների ընդունման գործընթացի վրա ունեցած ուղղակի և անուղղակի ազդեցության: Ըստ հետազոտողի, որոշ ՈւԿ-ներ ուղղակիորեն նպատակաուղղված են հանրային քաղաքականության այս կամ այն կողմի բարելավմանը (*advocacy-oriented groups*): Վերջիններս քննադատում են առկա քաղաքականությունը, տալիս են երաշխավորություններ իրավիճակի բարելավման և լուծմանը հասնելու տարբեր գործիքների վերաբերյալ՝ ազդելով որոշում ընդունող պատասխանատու անձանց վրա: Նման ՈւԿ-ները կարելի է անվանել բարեփոխիչ, այսինքն՝ նպատակա-

Աղյուսակ 1

Տեսակ Առանձնահատկություններ	Համալսարաններ առանց ուսանողների (ակադեմիական ՈՒԿ)	Պայմանագրային հետազոտություններ (պայմանագրային ՈՒԿ)	Որոշակի գաղափարախոսություն կրող խմբերի շահերը ներկայացնող ՈՒԿ-ներ (*Advocacy Think Tanks*)	Քաղաքական կուսակցությունների հետ առնչվող ՈՒԿ
Աշխատակազմ	Վստահելի, անկողմնակալ և ճանաչված գիտնականներ	Վստահելի, ճանաչված գիտնականներ, ապակուսակցական հետազոտություններ	Գաղափարայնացված մասնագետներ	Կուսակցականներ և համակիրներ
Ֆինանսական աղբյուրներ	Հիմնադրամներ, կորպորացիաներ, մասնավոր անձինք	Կառավարական գործակալություններ	Հիմնադրամներ, կորպորացիաներ, մասնավոր անձինք	Կուսակցություններ, կառավարության հատկացումներ
Օրակարգի որոշում	Հետազոտողների ինքնուրույն հիմնադրամներ	Կառավարական գործակալություններ	ՈՒԿ ղեկավարներ	Կուսակցական ծրագրերի հիման վրա
Արտադրանք և ոճ	Ակադեմիական մենագրություններ, հոդվածներ սմսագրերում: Ապագաղափարայնացված	Զեկույցներ կառավարական գործակալություններին: Օբյեկտիվ և ապակուսակցական	Ընթացիկ քաղաքական հիմնախնդիրների վերաբերյալ համառոտ փաստաթղթեր	Տարբեր
Ենթատեսակներ	Էլիտար քաղաքական ակումբներ, մասնագիտացված ՈՒԿ	Պայմանագրի հիման վրա աշխատող մասնագիտացված հետազոտական ՈՒԿ-ներ	Շահերի պաշտպանության մասնագիտացված ՈՒԿ-ներ	---
Աջակցության պայմաններ	Ապակուսակցական փորձագետների աջակցման մշակույթ և ավիրատվությունների ավանդույթներ	Քաղաքական հետազոտությունների պետական աջակցություն	Հնարավոր աջակցություն հիմնադրամներից, բիզնեսից և շահերի խմբերից	Քաղաքական կուսակցություններին հասանելի կառավարության ֆինանսավորում
Օրինակ	Բրուքինգսի ինստիտուտ (ԱՄՆ)	ՌԷՆԴ կորպորացիա (ԱՄՆ), Ռազմավարական մշակումների կենտրոն (ՌԴ) Ժողովրդավարության իսրայելական ինստիտուտ (Իսրայել)	«Ժառանգություն» հիմնադրամ (ԱՄՆ), Հայեկի ինստիտուտ (Ավստրիա)	Ադենաուերի հիմնադրամ (Գերմանիա), Էսֆիցենտր (ՌԴ)

ուղղված կոնկրետ ոլորտներում այս կամ այն բարեփոխման իրականացմանը: Մյուս ՈՒԿ-ները կողմնորոշված են կրթության ուղղությամբ (*educated-*

oriented groups). դրանք քաղաքականության և որոշում կայացնողների վրա ազդում են անուղղակիորեն՝ համաժողովների և սեմինարների կազմակերպման, գրքերի և հոդվածների հրատարակման և ԶԼՄ-ի հետ փոխգործակցության միջոցով: Դրանց գործունեությունն ուղղված չէ կոնկրետ լուծումների հասնելուն, այլ ավելի շուտ՝ հանրային քննարկումների օրակարգի հստակեցման և ապագա առաջնորդների շրջանում որոշակի պատկերացումների ձևավորման վրա [16, c. 100-101]:

Ոլորտի մեկ այլ հայտնի տեսաբան Դ.Սթոունն ՈւԿ-ները բաժանում է հինգ տեսակի.

1. գործարար կառույցներին առընթեր,
2. կառավարության կողմից ստեղծված կամ պետական հովանավորության ներքո գործող,
3. կուսակցապատկան,
4. քաղաքացիական հասարակության անկախ ՈւԿ, որը հիմնադրվել է որպես շահույթ չհետապնդող կազմակերպություն,
5. քաղաքականության հետազոտության ինստիտուտ, որը գտնվում է համալսարանում կամ գործում է համալսարանին առընթեր [17, pp. 4-5]:

Իր հերթին, Փենսիլվանիայի համալսարանի «Ուղեղային կենտրոններ և քաղաքացիական հասարակություն» ծրագրի ղեկավար, ՈւԿ-ների հայտնի մասնագետ Ջ.ՄաքԳանի կողմից 2016թ. ՈւԿ-ների վարկանիշավորման զեկույցում տեղ է գտել ՈւԿ-ների հետևյալ տիպաբանությունը.

- *ինքնավար և անկախ*, ինչը ենթադրում է նշանակալի ազատություն շահերի որևիցե խմբից կամ դոնորից և անկախություն իր գործունեության մեջ,
- *քվազի անկախ.* կառավարությունից անկախ, սակայն հիմնական ֆինանսավորողից և ՈւԿ գործունեության վրա նշանակալի ազդեցություն ունեցող շահերի որևէ խմբից, դոնորից կամ պայմանագրային գործակալության կողմից վերահսկվող,
- *կառավարությանն առընթեր.* կառավարությանը կից կամ որպես կառուցվածքային ստորաբաժանում գործող ՈւԿ,
- *քվազի կառավարական.* բացառապես պետական դրամաշնորհներով և պայմանագրերով ֆինանսավորվող, բայց պաշտոնապես կառավարության կառուցվածքի մեջ չմտնող,

- *համալսարանին կից.* քաղաքականության հետազոտությունների համալսարանական կենտրոն,
- *քաղաքական կուսակցությանը կից.* պաշտոնապես քաղաքական կուսակցությանը կից գործող կենտրոն,
- *կորպորատիվ (շահույթ հետապնդող).* որևիցե կորպորացիային առընթեր կամ պարզապես շահույթ հետապնդելու նպատակ ունեցող քաղաքականության ուսումնասիրությունների կենտրոն [18, p. 7]:

Ամփոփելով ՈւԿ-ների ուսումնասիրությամբ զբաղվող տարբեր հետազոտողների կարծիքները՝ անհրաժեշտ ենք համարում ներկայացնել նաև «Բրիտանիկա» համացանցային հանրագիտարանում տեղ գտած տիպաբանությունը, որը, մեր կարծիքով, ՈւԿ-ների տիպաբանության ակադեմիական նկարագրության լավագույն օրինակներից է: Ըստ հանրագիտարանում տեղ գտած բացատրության՝ գոյություն ունի ՈւԿ-ների առնվազն չորս տեսակ: Առաջինը *գաղափարայնացված կենտրոններն* են (*ideolodical tanks*), որոնք ունեն հստակ քաղաքական կամ, առավել լայն իմաստով, գաղափարախոսական փիլիսոփայական հենարան: Դրանք նմանվում են շահապաշտպան կենտրոներին (*advocacy tanks*), որոնք հիմնադրվել են խնդիրների հետազոտության ու լուծման նպատակով և օրենսդիրներին իրենց որոշումներն ընդունելու ուղղությամբ լոբբինգ են իրականացնում: Վերջիններիս օրինակներն ընդգրկում են Մեծ Բրիտանիայի Պահպանողական և Լեյբորիստական կուսակցությունների համար տնտեսական և քաղաքական ոլորտին առնչվող գաղափարներ մատակարարող, ինչպես նաև Գերմանիայի կուսակցություններին կից գործող ՈւԿ-ները: Հաջորդ տեսակը *մասնագիտացված կենտրոններն են* (*specialist tank*): Այս տեսակի մեջ են մտնում այն կենտրոնները, որոնք ունեն թեմատիկ ուղղվածություն: Առավել տարածված ուղղություններից է արտաքին և հանրային քաղաքականությունը, սակայն որոշ ՈւԿ-ներ մասնագիտացված են այնպիսի ուղղություններում, որոնցից է շրջակա միջավայրի պաշտպանությունը: Երրորդ տեսակը ներառում է ոչ թե ազգային, այլ *տարածաշրջանային կամ վերազգային մակարդակում գործող կենտրոնները*, որոնցից են ԵՄ հարաբերություններին առնչվող Բրյուսելում տեղակայված ՈւԿ-ները: Վերջին՝ չորրորդ տեսակն են, այսպես կոչված՝ *«ուղեղային և գործող կենտրոնները»* (*think and do tanks*), որոնք, բացի ավանդական հետազոտական գործունեությունից, ակտիվություն են դրսևորում նաև գործնական

հարթությունում, ինչպես, օրինակ, բարեգործական նախագծերի ֆինանսավորումն է: Այս տեսակի ՈւԿ-ները որոշակի նմանություն ունեն ոչ կառավարական կազմակերպություններին [19]:

Ինչ վերաբերում է Հայաստանի ՈւԿ ոլորտին, ապա պետք է նշել, որ մեր ուսումնասիրությունների համաձայն [20]՝ չնայած գործող ավելի քան վեց տասնյակ հաստատություններին, որոնք ավելի կամ պակաս չափով կարող են դասվել ՈւԿ-ների շարքին, այդ թվում՝ մոտ երկու տասնյակ կայացած ՈւԿ-ների առկայության, ցավոք, այս ոլորտն, ընդհանուր առմամբ, դեռևս գտնվում է ձևավորման փուլում: Վերջին հանգամանքով պայմանավորված՝ Հայաստանում հանրային քաղաքականության հետազոտական կենտրոնների տեսակները ևս բավական սահմանափակ են: Այնուամենայնիվ, հիմք ընդունելով ինստիտուցիոնալ բնորոշիչները՝ Հայաստանում առկա են երեք հստակ ընդգծված տեսակի ՈւԿ-ներ՝ պետական, համալսարանական և ոչ կառավարական (անկախ): Ամենատարածված տեսակը ոչ կառավարական (անկախ) ՈւԿ-ներն են, որոնք կազմում են Հայաստանում գործող ՈւԿ-ների 79%-ը, պետականներն ու համալսարանականները համապատասխանաբար՝ 9% և 12%:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ քաղաքագիտական շրջանակներում ՈւԿ-ների տիպաբանության վերաբերյալ միասնական մոտեցումներ դեռևս չեն ձևավորվել: Այս հանգամանքն առավելապես կապված է տարբեր երկրներում հանրային քաղաքականության մշակութային առանձնահատկությունների, ձևավորված ավանդույթների, ոլորտի կայացվածության մակարդակի հետ, ինչը բավական դժվարացնում է համապարփակ տիպաբանության մշակման աշխատանքները: Մյուս կողմից, ի տարբերություն գործառնական մոտեցման՝ առավել համապարփակ է ՈւԿ-ների ինստիտուցիոնալ բնորոշիչների հիման վրա իրականացվող տիպաբանությունը, որի դեպքում հիմք են ընդունվում, առաջին հերթին, հաստատության իրավական կարգավիճակը, ենթակայությունը, անկախության մակարդակը, ֆինանսավորման ձևաչափերն ու աղբյուրները:

Դեկտեմբեր, 2016թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Рич Э., Уивер К.,* Пропагандисты и аналитики: «мозговые центры» и политизация экспертов // Pro et contra. Том 8, № 2. М. 2003, с. 64-89.
2. Brookings Annual Report 2015. URL: https://www.brookings.edu/wp-content/uploads/2016/07/2015-annual-report.pdf

3. RAND Corporation Financial Statements, 2015. URL: http://www.rand.org/pubs/corporate_pubs/CP665.html
4. *Աթոյան Վ.*, Ազգային անվտանգության հիմնախնդիրներ. դասախոսություններ // Եր., «Տնտեսագետ» հրատ., 2014:
5. The Heritage Foundation Annual Report 2015. URL: https://thf-membership.s3.amazonaws.com/2015_AnnualReport.pdf
6. *Медушевский Н.А.,* Экспертное сообщество в политической сфере в конце XX – начале XXI века // Дис. на соиск. уч. ст. канд. пол. наук. по спец. 23.00.02 - «Политические институты, процессы технологии», М., 2011.
7. *Lucarelli S., Radaelli C.* Italy: think tanks an the political system // Think tank traditions: Policy research and the politics of ideas, edited by Stone D. and Denham A., Manchester University Press, Manchester and New York, 2004, pp. 89-104.
8. *Ullrich H.* European Union think tanks: generating ideas, analysis and debate // Think tank traditions: Policy research and the politics of ideas, edited by Stone D. and Denham A., Manchester University Press, Manchester and New York, 2004, pp. 51-68.
9. *Աթոյան Վ., Մովսիսյան Շ.*, Չինաստանի ուղեղային կենտրոնները // «Տնտեսագետ» հրատ., «Ամբերդ» մատենաշար N 29, Եր., 2016:
10. *Աթոյան Վ., Թադևոսյան Ռ.*, Իսրայելի ուղեղային կենտրոնները հանրային քաղաքականությունում // «21-րդ ԴԱՐ», N 6 (70), 2016, էջ 70-84:
11. *Ситников А.П.,* Фабрики мысли и независимые центры социально-политической деятельности: классификация и анализ // Вестник московского государственного областного университета, N 4, 2009, с. 186-192.
12. *Зайцев Д.Г.*, Аналитические центры как субъекты политического процесса // Дис. на соиск. уч. ст. канд. пол. наук., 23.00.02 – Политические институты, этнополитическая конфликтология, национальные и политические процессы и технологии, М., 2009.
13. *McGann J., Weaver K.* Think Tanks and Civil Societies: Catalysts for Ideas and Action // Transaction Publication, New Brunswick, 2000.
14. *Иванов Д.Ю.*, Формирование политической аналитики негосударственных аналитических центров в современной России // Дис. на соис. уч. ст. канд. пол. н., специальность 23.00.02 – Политические институты, процессы и технологии, Санкт-Петербург, 2013.
15. *Горный М.Б.,* Фабрики мысли и центры публичной политики в конце XX – начале XXI веков // URL: http://www.civisbook.ru/files/File/Gornyi_fabriki.pdf
16. *Сунгуров А.Ю.,* Как возникают политические инновации: «фабрики мысли» и другие институты-медиаторы // М., Политическая энциклопедия, 2015.
17. *Stone D.* Think Tanks and Policy Advice in Countries in Transition // Asian Development Bank Institutes symposium: How to Strengthen Policy Oriented Research and Training in Vietnam, 2005.
18. *McGann James.* 2015 Global Go to Think Tank Index Report (2016). URL: http://repository.upenn.edu/cgi/viewcontent.cgi?article=1009&context=think_tanks
19. Encyclopedia Britannica. URL: https://www.britannica.com/topic/think-tank
20. *Атоян В.,* Индустрия «мозговых центров» в Армении // «Проблемы национальной стратегии», N 4 (37), 2016, с. 158-176.

ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍՈՒՄ

Վարդան Աթոյան

Ամփոփագիր

Հոդվածում ներկայացվում և քննարկվում են ոլորտի հետազոտողների դիտարկումներն ու մոտեցումներն ուղեղային կենտրոնների (ՈւԿ) գործառնական և ինստիտուցիոնալ տիպաբանության վերաբերյալ: Ուսումնասիրության արդյունքում դուրս են բերվել այն հիմնախնդիրները, որոնք խոչընդոտում են բոլոր առանձնահատկություններն ամփոփող համապարփակ մոդելի մշակմանը: Հիմնավորվում է, որ ի տարբերություն գործառնական մոտեցման՝ առավել համապարփակ է ՈւԿ-ների ինստիտուցիոնալ բնորոշիչների հիման վրա իրականացվող տիպաբանությունը:

ВОПРОСЫ ТИПОЛОГИИ МОЗГОВЫХ ЦЕНТРОВ В ПОЛИТОЛОГИЧЕСКОМ ДИСКУРСЕ

Вардан Атоян

Резюме

В статье рассматриваются основные подходы исследователей к вопросу функциональной и институциональной типологии мозговых центров (МЦ). Выявлены основные проблемы, препятствующие разработке универсальной модели типологии МЦ, которая одновременно учитывает все особенности различных МЦ. Делается вывод, что, в отличие от функционального подхода, наиболее полноценной является типология, разработанная на основе институциональных характеристик МЦ.

TYPOLOGY ISSUES OF THINK TANKS IN THE DISCOURSE OF POLITICAL SCIENCES

Vardan Atoyan

Resume

The Article discusses and outlines observations and approaches with regard to operational and institutional typology of think tanks. As a result of the implemented study, the main obstacles to developing a comprehensive model with consideration of all features were uncovered. It is argued that unlike the operational approach, a typology of think tanks on the basis of institutional indicators is more comprehensive.

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ

Համլետ Զաքարյան*

Բանալի բառեր ՝ ռացիոնալ զբաղվածություն, անմրցունակություն, ներքին աշխատաշուկա, արտագնա աշխատանք, անկանոն միգրացիա, աշխատուժի պահանջարկ:

Զբաղվածությունը կարևոր սոցիալ-տնտեսական հասկացություն է: Ինչքան բարձր է բնակչության զբաղվածության աստիճանը հանրային տնտեսության մեջ, այնքան մեծ է ազգային եկամտի ծավալը և բարձր՝ ժողովրդական սպառման մակարդակը: Պետությունը մշտապես ձգտում է ավելացնել զբաղվածների թվաքանակը հանրային տնտեսության մեջ ի հաշիվ տնային և անձնական օժանդակ տնտեսությունում զբաղվածների ներգրավման՝ բարձրացնելով աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը: Զբաղվածությունը չպետք է պատկերացնել որպես հանրորեն օգտակար աշխատանքով զբաղվածների պարզ թվաբանական գումար: Որակական տեսանկյունից այն արդեն ռացիոնալ զբաղվածություն է և պիտի համապատասխանի հասարակության ու անհատի շահերին և չհանգեցնի հասարակական աշխատանքի արտադրողականության աճի անկմանը:

Այսպիսով, զբաղվածությունն ունի իրացման երկու ոլորտ՝ հանրային աշխատանքի և տնային ու անձնական օժանդակ տնտեսության: Իսկ ռացիոնալ զբաղվածություն ասելով մենք նկատի ունենք և՛ լրիվ զբաղվածությունը, և՛ զբաղվածների աշխատանքի արդյունավետ կիրառումը:

Այսպիսով, ռացիոնալ զբաղվածությունը լրիվ զբաղվածության համեմատությամբ ավելի լայն հասկացություն է: Իսկ բնակչության զբաղվածության հետագա ռացիոնալացման խնդիրները պահանջում են հետագայում ևս վարել բնակչության զբաղվածության գիտականորեն հիմնավորված քաղա-

* Հումանիտար գիտությունների Ռուսաստանյան ակադեմիայի ակադեմիկոս, պրոֆեսոր, Լրագրողների միջազգային միության անդամ:

քականություն, խորությամբ ուսումնասիրել աշխատանքային ռեսուրսների օգտագործման, բաշխման ու վերաբաշխման օրինաչափությունները:

Զբաղվածության պրոբլեմի ակունքներում կանգնած են եղել մեծ մտածողներ Վիլյամ Պետին ու Ադամ Սմիթը:

Հետագա տարիներին այդ խնդիրը նաև Դավիթ Ռիկարդոյի և ապա նաև Մալթուսի ուշադրության կենտրոնում էր: Սակայն Կարլ Մարքսը առաջինն էր, որ գիտական հիմքերի վրա դրեց բնակչության պրոբլեմների մեկնաբանումը, ցույց տվեց գործազրկության առաջացման բուն պատճառները՝ ընդգծելով, որ սոցիալական այդ սուր երևույթը հենց կապիտալիստական արտադրության հետևանքն է:

Հետագա տարիներին տնտեսագիտական գրականության մեջ «զբաղվածություն» տերմինը հաստատուն քաղաքացիություն ստացավ:

Զբաղվածությունը մարդկանց միջև արտադրական հարաբերությունների ձև է՝ հավաքական աշխատողին արտադրության միջոցների հետ միավորելու և աշխատանքի պրոցեսին մասնակից դարձնելու եղանակ:

Ներկայումս զբաղվածության տնտեսական հարաբերությունների զարգացումն իր իրավաբանական հաստատումն է ստացել «Զբաղվածության մասին» ՀՀ նոր օրենքում, որն ընդունվել է 2013թ. դեկտեմբերի 11-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից և որը նախատեսում է զբաղվածության լիակատար բարելավում մեր երկրում, արտադրության մեջ իրային և անձնական գործոնների օգտագործման բարոյական և նյութական խթանների ուժեղացում: Տվյալ օրենքը կարգավորում է նաև բնակչության զբաղվածության խթանման, տնտեսական և կազմակերպչական դրույթներն ու իրավական հիմքերը, սահմանում զբաղվածության բնագավառում քաղաքացիների իրավունքների իրացումը, պետության կողմից մատուցվող ծառայությունների տեսակները, գործազրկության դեպքում սոցիալական աջակցության ձևերը, ինչպես նաև պետական-մասնավոր համագործակցության իրավական հիմքերը:

Զբաղվածության պետական քաղաքականությունը միտված է կայուն զբաղվածության ապահովմանը, անհրաժեշտ քանակի ու որակի աշխատուժի առկայությանը և առկա աշխատուժի արդյունավետ իրացման ապահովմանը: Առանձնակի կարևորություն ունեն նաև աշխատանք փնտրող անձանց աշխատաշուկայում անմրցունակության որոշարկումն ու արդյունավետ ներառման ապահովումը, ինչպես նաև արժանապատիվ աշխատանքի միջազգայնորեն ընդունված չափանիշների երաշխավորումն ու պայմանների հետևո-

ղական ապահովումը: ՀՀ իրավասու օղակները, դրանից զատ, մշակում և իրականացնում են աշխատուժի ներքին և արտաքին տեղաշարժի միասնական կարգավորումը կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և կամ էլ ՀՀ միջազգային պայմանագրերով:

Խորհրդային համակարգում տնտեսության կառավարումը հիմնված էր վարչահրամայական մեթոդների վրա, իսկ պետությունն ամեն գնով իրականացնում էր երաշխավորված զբաղվածության քաղաքականություն: Աշխատանքը պարտադիր էր աշխատանքային տարիքի աշխատունակ բոլոր մարդկանց համար: Բուհերի և տեխնիկումների, ինչպես նաև պրոֆտեխուսումնարանների համարյա բոլոր շրջանավարտներն աշխատանքի էին տեղավորվում պետական ձեռնարկություններում ու կազմակերպություններում: 1980-ականներին Հայաստանի ԱՊԿ համակարգում ևս ստեղծվեցին աշխատանքի տեղավորման բյուրոներ, որոնք զբաղված էին դպրոցների շրջանավարտների հաշվառմամբ, մասնագիտական կոմնորոշման տրամադրմամբ, պրոֆտեխուսումնարանների համար սովորող անձնակազմի ապահովմամբ, մյուս միութենական հանրապետությունների համար աշխատուժի հավաքագրմամբ և այլն:

ՀՀ-ում աշխատաշուկայի ձևավորման կամ զբաղվածության պետական կարգավորման գործընթացների սկիզբը պիտի համարել 1992-1996 թվականները, երբ ընդունվեց «Բնակչության զբաղվածության մասին» ՀՀ օրենքը, որի նպատակը միութենական արտադրատնտեսական համալիրից անջատ գործելու հրամայականի առջև կանգնած ՀՀ զբաղվածության ոլորտի իրավահարաբերությունների կանոնակարգումն էր: Այլ կերպ ասած՝ ՀՀ-ում սկիզբ դրվեց աշխատուժի առաջարկի և պահանջարկի պետական կարգավորման գործընթացներին: Այդ շրջանում աշխատաշուկայում իրականացված ծրագրերը հիմնականում ունեցել են գործազուրկների սոցիալական հիմնախնդիրների լուծման կողմնորոշում, և իրականացվել է զբաղվածության պասիվ քաղաքականություն, քանի որ զբաղվածության պետական ծրագրերին հատկացված միջոցները համարյա ամբողջությամբ ծախսվեցին գործազրկության նպաստ և դրամական օգնություն վճարելու համար: Դա, բնականաբար, չէր կարող համահունչ լինել տնտեսական զարգացումների տրամաբանությանը, քանի որ այս ոլորտում պահանջվում էին ակտիվ ծրագրերի իրականացում և սոցիալական պասիվ քաղաքականությունից անցում ակտիվ քաղաքականության: Հետագա տարիները, ներառյալ 2005թ., բնութագրվում են որպես զբաղ-

վածության պետական կարգավորման համակարգի հստակեցման շրջան, որի մեկնարկը, ինչպես վերևում նշվեց, տվեց «Բնակչության զբաղվածության մասին» ՀՀ նոր օրենքը: Այդ տարիներին զբաղվածության քաղաքականությունն առավելապես ուղղված էր գործազրկության իրական մակարդակի բացահայտմանը, զբաղվածության համակարգի վերջնական ձևավորմանը, ինչպես նաև իրավական դաշտի կատարելագործմանը, իսկ այնուհետև նաև զբաղվածության ակտիվ քաղաքականության իրականացմանը, մասնավորապես թափուր աշխատատեղերի համալրմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանն աջակցելուն և գործող աշխատատեղերի պաշտպանությանը: Աշխատաշուկայի զարգացման հաջորդ փուլը սկզբնավորվեց «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» 2006թ. հունվարի 1-ին ընդունված օրենքում, որի նպատակը աշխատանքի խրախուսման, զբաղվածության ապահովման և գործազրկության դեպքում սոցիալական գործընկերության սկզբունքներով արդարացի սոցիալական քաղաքականության իրականացումն է:

2010թ. դեկտեմբերի 22-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց վերը նշված ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքը, որի ընդունումը պայմանավորված է աշխատաշուկայում ակտիվ որոշ նոր ծրագրերի ներդրման և գործող ծրագրերի կատարելագործման անհրաժեշտությամբ:

Անցումային տարիներին ոչ միայն զգալիորեն կրճատվեց աշխատուժի պահանջարկը և փոխվեց տնտեսության ճյուղային կառուցվածքը, այլև էական փոփոխությունների ենթարկվեցին աշխատուժին ներկայացվող մասնագիտական պահանջները:

Պիտի նկատել, որ Խորհրդային Միության փլուզումից հետո Հայաստանը բախվեց սոցիալ-տնտեսական, աշխարհաքաղաքական և ժողովրդագրական բնույթի տարբեր հիմնախնդիրների: Սոցիալ–քաղաքական ու տնտեսական համակարգերի վերափոխումների արդյունքում երևան եկան մինչ այդ անհայտ սոցիալ-տնտեսական այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են գործազրկությունն ու աղքատությունը: Գործազրկության բարձր մակարդակը՝ որպես Հայաստանի համար նախկինում համարյա թե անհայտ սոցիալ-տնտեսական խնդիր, որը միաժամանակ աղքատության առաջացման ու խորացման կարևոր գործոն է, իրողություն դարձավ Հայաստանի բնակչության մի զգալի մասի համար: Երկրում լայն տարածում ստացավ աղքատությունը, քանի որ

բնակչության առավել ակտիվ ու բարձրորակ մարդկանց զանգվածային արտագաղթը դանդաղեցրեց երկրի զարգացման ընթացքը: Բնակչության դանդաղ վերարտադրությունը չէր ապահովում անգամ բանակին անհրաժեշտ անձնակազմի, կրթական ոլորտին անհրաժեշտ սովորողների թվաքանակ՝ հանգեցնելով կրթական համակարգում թե՛ հաստատությունների և թե՛ աշխատողների թվի կրճատման, նպաստելով գործազրկության աճին:

Ներկայումս հանրապետությունում զբաղվածների թիվը կազմում է 1 մլն 72 հազ. 600 մարդ: Բնակչության թվաքանակի քաղաքային և գյուղական բաշխվածությունը կազմում է համապատասխանաբար՝ 64 և 36%, իսկ սեռային բաշխվածության առումով՝ արականը 48.5 և իգականը՝ 51.5%: Կրթական համակարգի միտումներն ապագայում կհանգեցնեն, մի կողմից, ներքին աշխատաշուկայից միջին մասնագիտական կրթություն ունեցող ու առավել տարեց աշխատուժի աստիճանական դուրսմղմանն ու նոր երիտասարդ աշխատուժով ոչ համարժեք համալրմանը, իսկ մյուս կողմից էլ՝ բուհ ավարտող մասնագետների ավելցուկին: Այդ տարիներին, բնականաբար, զբաղվածության կրճատում արձանագրվեց տնտեսության համարյա բոլոր, առանձնապես շինարարության, գիտության ու արդյունաբերության ոլորտներում, իսկ աճ արձանագրվեց գյուղատնտեսության և առևտրի ու հասարակական սննդի ոլորտներում:

Հաջորդ տարիներին Հայաստանում արդեն նկատվում էր համաշխարհային տնտեսական ճգնաժամի ազդեցությունը սոցիալ-տնտեսական համալիր զարգացումների տեսանկյունից: Պաշտոնական վիճակագրական ցուցանիշների վերլուծությունից երևում է, որ Հայաստանում գրանցվող կայուն տնտեսական աճն ապահովվել է ոչ այնքան զբաղվածության մակարդակի աճով, որքան աշխատանքի արտադրողականության աճի հաշվին: Բայց, մյուս կողմից, տնտեսական աճի արդյունքներն արտացոլվել են ոչ այնքան զբաղվածության մակարդակի, որքան աշխատավարձի բարձրացման ցուցանիշներում: Նշված ժամանակահատվածում նկատվել է նաև զբաղվածության տեղաշարժ պետականից դեպի մասնավոր ոլորտ:

2016թ. հունվարի 1-ի դրությամբ՝ ԱՎԾ տվյալներով գործազրկության պաշտոնական մակարդակը կազմել է 18%, ըստ իս՝ դրա իրական մակարդակը ավելի բարձր է: Ավելի բարձր է նաև բնակչության աղքատության ցուցանիշը: Այսօր գործազուրկների մոտ 20%-ը երիտասարդներ են, որոնցից շուրջ 16500-ը աշխատանք փնտրողներ են: Իսկ ներքին աշխատաշուկայի քրոնի-

կական անհավասարակշռության խնդիրների համակողմանի լուծումը պահանջում է, մի կողմից, կենտրոնացնել պետական և մասնավոր հատվածների ջանքերն ու ռեսուրսները՝ տնտեսության հնարավոր բոլոր ոլորտներում աշխատատեղեր ստեղծելու, առկա աշխատատեղերը պահպանելու, ինչպես նաև ՀՀ-ում առկա միգրացիոն հոսքերում ներգրավված անձանց ռեսուրսների ուղղորդում դեպի ՀՀ տնտեսության ու մարդկային զարգացման ոլորտներ, քանի որ նրանց խնայողությունների մեծ մասը պահվում է արտերկրում և գլխավորապես ներդրվում անշարժ գույքի շուկայում: Այսպիսով, զբաղվածության պետական կարգավորման քաղաքականությունն ընթացիկ և երկարաժամկետ առումով միտված պիտի լինի տարածքային զարգացման, ժողովրդագրական և միգրացիոն պետական կարգավորման շրջանակներում իրականացվող բարեփոխումների արդյունավետ ու ամբողջական ապահովմանը՝ սահմանված ռազմավարական և հայեցակարգային հիմնական ուղղություններին ու միջոցառումներին:

Ինչ վերաբերում է կրթական համակարգին, ապա նշենք, որ այն դեռևս գտնվում է կառուցվածքային, բովանդակային և կառավարչական բարեփոխումների փուլում՝միտված տնտեսության և աշխատանքային շուկայի կարիքներին համահունչ մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի ապահովմանը:

ՀՀ կրթության զարգացման 2011-2015թթ. պետական ծրագրի համաձայն՝ բարեփոխումներն ուղղված էին կրթությունը տնտեսության, գիտության և հասարակության արդի պահանջներին համապատասխանեցնելուն: Ստեղծվեցին մասնագիտական կրթական հաստատությունների ու տնտեսության համագործակցության և երկխոսության արդյունավետ մեխանիզմներ, որոնք հնարավորություն են տալիս կրթական ծրագրերը, մասնագետների պատրաստումն առավել ներդաշնակ դարձնել տնտեսության առաջնային ճյուղերի պահանջարկին:

Եվ չնայած գրանցված առաջընթացին՝ կրթության բոլոր մակարդակներում որակը շարունակում է մնալ գլխավոր հիմնախնդիրը: Այսուամենայնիվ, մեր ապագայի կրողներ երիտասարդները մեծ մասամբ լքում են հայրենիքը՝ իրենց ուժն ու գիտելիքն օգտագործելով ուրիշ երկրներում, քանի որ տասնյակ հազարավոր ուսանողներ բուհն ավարտելուց հետո կանգնում են գործազրկության խնդրի առաջ: Յուրաքանչյուր տարվա կտրվածքով մեր բուհերի 7000 շրջանավարտների միայն 20%-ն է աշխատանք գտնում, մինչդեռ հազա-

բավոր երիտասարդներ անգամ բարձրագույն կրթություն ստանալու հնարավորություն չունեն, իսկ այդ դեպքում աշխատանքի տեղավորվելն առավել մեծ ջանքեր է պահանջում:

Հաշվի առնելով, որ, այնուամենայնիվ, արտագնա աշխատանքը կարևոր դեր է կատարում բազմաթիվ ընտանիքների կենսապահովման գործում, պետությունը նպաստավոր պայմաններ է ստեղծում առանձին մասնագիտություններ ունեցող անձանց արտագնա աշխատանքների ներգրավման նպատակով: ՀՀ կառավարությունն արդեն միջպետական համաձայնագրեր է կնքել ԱՊՀ մասնակից պետությունների հետ՝ այնտեղ մեկնած ՀՀ քաղաքացիների սոցիալական երաշխիքների և նորմալ աշխատանքային պայմանագրերի կնքման համար:

Արտագնա աշխատանքի պետական կարգավորման շրջանակներում ՀՀ միգրացիոն պետական ծառայությունը կնքում է նաև միջազգային պայմանագրեր արտագնա աշխատանքի կազմակերպման, ինչպես նաև աշխատանքային միգրանտների շահերի պաշտպանության վերաբերյալ, որի նպատակը, գերակա ուղղությունները, ինչպես նաև իրականացման միջոցառումները ներկայացված են Հայաստանի Միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության, Հայաստանից սկիզբ առնող անկանոն միգրացիայի երևույթի ուսումնասիրության և դրա կանխարգելման վերաբերյալ հայեցակարգերում:

Այսպիսով, աշխատաշուկայի պետական կարգավորման առանցքային խնդիրների ինստիտուցիոնալ և իրավական լուծումները կարևոր նշանակություն կունենան զբաղվածության քաղաքականության համակարգային բարեփոխումների ապահովման համար:

Սեպտեմբեր, 2016թ.

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ

Համլետ Զաքարյան

Ամփոփագիր

Հոդվածում համառոտ անդրադարձ է կատարվել զբաղվածության հասկացության նախապատմությանը, ընդգծվել են հատկապես ռացիոնալ զբաղվածության քաղաքականության բարեփոխումների հրատապությունն ու այժմեականությունը, որակավորված և երիտասարդ աշխատուժին ՀՀ զարգացման ոլորտներ ուղղորդելու

կարևորությունը, կրթական համակարգի և ՀՀ միգրացիոն պետական ծառայության կարևոր ծրագրերը տնտեսության արդի պահանջներին համապատասխանեցնելու հրամայականը:

Շեշտադրվել է բոլոր ոլորտներում նոր աշխատատեղեր ստեղծելու, եղածը պահպանելու և ընդհանուր առմամբ աշխատաշուկայի պետական կարգավորման առաջնահերթությունը:

РЕФОРМЫ ПОЛИТИКИ ЗАНЯТОСТИ

Гамлет Закарян

Резюме

В статье вкратце представлена предыстория понятия «занятость», подчеркнута актуальность и необходимость реформирования политики рациональной занятости, важность направления квалифицированной и молодой рабочей силы в сферы развития РА, императив приведения важных программ образовательной системы и государственной миграционной службы РА в соответствие с современными требованиями. Подчеркнута необходимость создания новых и сохранения существующих рабочих мест во всех сферах и в целом государственного регулирования рынка труда.

EMPLOYMENT POLICY REFORMS

Hamlet Zakaryan

Resume

The article briefly discusses the history of the employment concept, emphasizes the urgency and contemporaneity of particularly the rational employment policy reforms, importance of directing qualified and young workforce towards Armenia's development areas and the imperative to make RoA Migration Service programs in line with the requirements of modern economy. The necessity to create new jobs in all areas, maintain the existing ones and generally the priority of government regulation of the job market are emphasized.

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՅ-ԲԵԼԱՌՈՒՍԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՏԵՂ ՊԵՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Էդիտա Գզոյան, Արամ Միրզոյան**, Սոֆյա Ալեքսանյան***, Լուսինե Հովհաննիսյան****, Սիմոն Հունանյան*****, Մարիամ Մեհրաբյան******, Շուշանիկ Մարգսյան*******

Բանալի բառեր ՝ հայ-ռուսական գիտական կապեր, հայ-բելառուսական գիտական կապեր, հայ-ռուսական երկկողմ համատեղ մրցույթներ, հայ-բելառուսական երկկողմ համատեղ մրցույթներ, գիտաչափական ցուցիչներ, գիտական հոլման հայկական ցուցիչ, AINC, RINC, WOS:

Հայ-ռուսական և հայ-բելառուսական միջպետական հարաբերությունները զարգացել են ինչպես միասնական պետության շրջանակում (ԽՍՀՄ), այնպես էլ որպես անկախ պետություններ (*Աղյուսակ 1*)։ ԽՍՀՄ փլուզումից հետո գիտության ոլորտում նախկին անդամ երկրների առջև կանգնած խնդիրներից մեկը նոր իրականության պայմաններում գիտատեխնիկական կապերի պահպանումն ու զարգացումն էր։ Անկախ Պետությունների Համագործակցություն ստեղծելու մասին համաձայանագրի 4-րդ կետով նախատեսվում էր զարգացնել համագործակցությունը նաև գիտության ոլորտում[1]։

* ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ, Գիտական տեղեկատվության վերլուծության և մոնիթորինգի կենտրոն, ավագ գիտաշխատող, պ.գ.թ.։
** Նույն կենտրոնի ավագ գիտաշխատող, պ.գ.թ.։
*** Նույն կենտրոնի կրտսեր գիտաշխատող։
**** Նույն կենտրոնի կրտսեր գիտաշխատող։
***** Նույն կենտրոնի գիտաշխատող։
****** Նույն կենտրոնի կրտսեր գիտաշխատող։
******* Նույն կենտրոնի տնօրեն, կ.գ.թ.։

[1] Գիտության զարգացման ուղղությամբ կատարված քայլերից էին 1992թ. մարտի 13-ին Մոսկվայում Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) շրջանակներում ստորագրված ԱՊՀ մասնակից պետությունների շրջանակում գիտատեխնիկական համագործակցության մասին և ԱՊՀ շրջանակներում գիտատեխնիկական ուղիղ կապերի մասին համաձայնագրերը։ Հետագայում նշված համաձայնագրերը հայտարարվել են ուժը կորցրած՝ դրանց գործողության ժամկետի սպառման և այլ համաձայնագրերի ստորագրման արդյունքում։

Աղյուսակ 1

Ընդհանուր տվյալներ Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության մասին

Երկիր	Տարածք (կմ²)	Բնակչություն (հազ.)	Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ ($)	Գիտահետազոտական ծախսերը որպես % ՀՆԱ	Գիտահետազոտական և գիտատեխնիկական գործունեությամբ զբաղվող կազմակերպությունների թիվը (1 մլն հաշվարկով)	WOS-ում հրատարակված գիտական հոդվածների քանակը (1991-2015)
ՌԴ	16,376,870	143,819.0	12,73	5,78	1.1	3,125	1112
ԲՀ	207,595	9,513.0	17,44	6,62	0.67	1,955	499
ՀՀ	29,743	3,006.0	3,62	5,08	0.3	1,927	500

2015թ. հունվարից հայ-ռուսական և հայ-բելառուսական հարաբերությունները զարգանում են նաև Եվրասիական տնտեսական միության շրջանակներում, որի հիմնական փաստաթղթում (Պայմանագիր Եվրասիական տնտեսական միության մասին) թեև ուղղակի կերպով չեն կարգավորվում գիտատեխնիկական համագործակցության հարցերը, սակայն առկա են որոշ դրույթներ. մասնավորապես, նախատեսվում է ստեղծել Տնտեսական և գիտատեխնիկական համագործակցության հիմնադրամ:

Հայ-ռուսական և հայ-բելառուսական կապերը զարգանում են նաև երկկողմ հարաբերությունների շրջանակներում: Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումից հետո իրավապայմանագրային հիմքի վրա ամրագրվել է երկկողմ հարաբերությունների բարձր մակարդակ, որը ներառում է գործնականում բոլոր ոլորտները: Կարևոր ուղղություններից է համագործակցությունը գիտական ոլորտում. Ռուսաստանն ավանդաբար եղել և հիմա էլ մնում է Հայաստանի հիմնական գիտական գործընկերներից մեկը [1, pp. 195-

212]: ԽՍՀՄ փլուզումից հետո գիտատեխնիկական ոլորտում հայ–ռուսական համագործակցության առաջին քայլերից էին միջկառավարական համաձայնագրերը, որոնք վստահելի հիմք ստեղծեցին գիտության ոլորտում երկկողմ հարաբերությունների համար[1]:

Գիտության ոլորտում հայ-ռուսական հարաբերությունների հետագա խորացմանը նպաստեց համագործակցության համաձայնագրերի ստորագրումը ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի (ԳՊԿ) և ռուսաստանյան երկու գիտական հիմնադրամների՝ Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի (ՀՀՌՀ)[2] և Ռուսաստանյան հումանիտար գիտական հիմնադրամի (ՌՀԳՀ)[3] միջև: Այս համաձայնագրերով նախատեսված համատեղ գիտական մրցույթները նպատակ են հետապնդում նպաստել երկու երկրների միջև առկա գիտական կապերի պահպանմանն ու նորերի ստեղծմանը, ինչպես նաև գիտության տարբեր բնագավառներում գիտական հետազոտությունների մակարդակի բարձրացմանը: Այս համաձայնագրերի հիման վրա արդեն անցկացվել է հինգ մրցույթ: Երկու մրցույթ իրականացվել է ՀՀՌՀ-ի հետ համատեղ՝ մաթեմատիկա, մեխանիկա և ինֆորմատիկա, ֆիզիկա և աստղագիտություն, քիմիա, կենսաբանություն և բժշկագիտություն, Երկրի մասին գիտություններ, մարդու և հասարակության մասին գիտություններ, տեղեկատվական տեխնոլոգիաներ և հաշվողական համակարգեր, ինժեներային գիտությունների ֆունդամենտալ հիմունքներ գիտական ուղղություններով: Երեք մրցույթ անցկացվել է ՌՀԳՀ-ի հետ համատեղ՝ պատմություն, հնագիտություն, ազգագրություն, բանասիրություն, փիլիսոփայություն, գիտաբանություն, արվեստագիտություն, հոգեբանություն, տնտեսագիտություն, սոցիոլոգիա, քաղաքագիտություն, իրավագիտություն, կրթության հիմնարար խնդիրներ, մարդու հետազոտության համակարգային խնդիրներ, բժշկության սոցիալական խնդիրներ և մարդու էկոլոգիա գիտական ուղղություններով:

Հայ-բելառուսական գիտատեխնիկական համագործակցության կայացման և զարգացման ուղղությամբ առաջին քայլը 2001թ. գիտատեխնիկական

[1] 1993թ. հունվարի 11-ին կնքված միջկառավարական պայմանագրերը՝ գիտատեխնիկական և բարձրագույն կրթության բնագավառում համագործակցության մասին, ապա՝ 1995թ. նոյեմբերի 13-ի համաձայնագիրը մշակույթի, գիտության ու կրթության բնագավառներում համագործակցության մասին:

[2] Համաձայնագիրը ստորագրվել է 2010թ. մայիսի 7-ին,
http://scs.am/files/hamadzaynagir_hhrh_07.05.2010.pdf

[3] Համաձայնագիրը ստորագրվել է 2011թ. փետրվարի 18-ին,
http://scs.am/files/hamadzaynagir_rgnf_18.02.2011.pdf

համագործակցության մասին միջկառավարական համաձայնագիրն էր[1]: Ավելի ուշ՝ 2010թ., համագործակցության մասին համաձայնագրեր կնքվեցին ԳՊԿ-ի և ԲՀ Գիտության և տեխնոլոգիաների պետական կոմիտեի, ինչպես նաև երկու երկրների Գիտությունների ազգային ակադեմիաների միջև[2]: Նույն թվականին ԳՊԿ և Հիմնարար հետազոտությունների բելառուսական հանրապետական հիմնադրամի (ՀՀԲՀՀ) միջև կնքվեց համագործակցության մասին համաձայնագիր, որով նախատեսվում է 2010-ից երկու տարին մեկ անգամ կազմակերպել համատեղ երկկողմ մրցույթներ՝ մաթեմատիկա, մեխանիկա և ինֆորմատիկա, ֆիզիկա և աստղագիտություն, քիմիա, կենսաբանություն և բժշկագիտություն, գիտություններ մարդու և հասարակության մասին, գիտություններ Երկրի մասին, տեղեկատվական տեխնոլոգիաներ և հաշվիչ համակարգեր, ճարտարագիտական գիտությունների հիմնարար հիմունքներ ուղղություններով[3]:

Հայ-ռուսական և հայ-բելառուսական համատեղ մրցույթների ընթացակարգը հետևյալն է. համատեղ նախագծերը ներկայացվում են միաժամանակ ԳՊԿ (հայկական կողմից) և ՀՀՌՀ կամ ՌՀԳՀ (ռուսական կողմից) և ՀՀԲՀՀ (բելառուսական կողմից): Յուրաքանչյուր կողմն անցկացնում է մրցույթին ներկայացված նախագծերի անկախ գիտական փորձաքննություն և ստացված արդյունքների հիման վրա ֆինանսավորում հաղթող խմբերի իր երկրի մասնակիցներին:

Սույն հոդվածում դիտարկվում է ՀՀ - ՌԴ և ՀՀ - ԲՀ գիտնականների համագործակցությունը՝ ԳՊԿ և ՀՀՌՀ ու ՌՀԳՀ, ԳՊԿ և ՀՀԲՀՀ-ի կողմից անցկացվող համատեղ մրցույթների շրջանակներում: Օգտագործվել են *RINC*[4] [2, c. 66 –71], *AINC*[5] [3] և *Web of Science (WOS)*[6] շտեմարանների տվյալները: Հետազո-

[1] Համաձայնագիրը կնքվել է 2001թ. հոկտեմբերի 31-ին:
[2] Համաձայնագրերը կնքվել են 2010թ. մարտի 19-ին Մինսկում և մայիսի 17-ին Երևանում:
[3] Համաձայնագիրը կնքվել է 2010թ. նոյեմբերի 4-ին, http://scs.am/files/hamadzaynagir_hhbhh_04.11.2010.pdf
[4] *Российский индекс научного цитирования*, մշակվում է Գիտական էլեկտրոնային գրադարանի կողմից: Այժմ *РИНЦ*-ում ինդեքսավորվում են ավելի քան 4600 ռուսաստանյան գիտական ամսագրեր և մոտավորապես 700 ամսագրեր այլ երկրներից: *РИНЦ*-ում ինդեքսավորված է հայկական 88 ամսագիր:
[5] Գիտական հոլման հայկական ցուցիչ, մշակվում է Գիտական տեղեկատվության վերլուծության և մոնիթորինգի կենտրոնի կողմից (ՀՀ ԳԱԱ ԻԱՊԻ): Այսօր *AINC*-ում ինդեքսավորված է 45 հայկական ամսագիր: Հոդվածների ընդհանուր թիվը 5454 է, արխիվն էլ պարունակում է 2007-2012թթ. համարները:
[6] *Web of Science*-ն ամենալիարժեք և ունիվերսալ գիտական հոդումների ինդեքսն է: *WOS*-ում ինդեքսավորված է 12.000 գիտական ամսագիր, իսկ արխիվը հասնում է մինչև 1898թ.: *WOS*-ում ինդեքսավորված է հայկական 4 ամսագիր:

տության շրջանակներում ուսումնասիրվել են հայ-ռուսական չորս[1] և հայ-բելառուսական երկու մրցույթներ:

Նյութերն ու մեթոդները

Սույն հետազոտությունն իրականացվել է 6 երկկողմ համատեղ մրցույթների հայտերի ուսումնասիրությամբ (*Աղյուսակ 2*), ինչպես նաև *RINC, AINC* և *WOS* շտեմարանների տվյալների հիման վրա: Օգտագործվել են այնպիսի մատենաչափական և գիտաչափական ցուցանիշներ, ինչպիսիք են հեղինակի հրապարակումների թիվը, հեղինակի հղումների գումարային թիվը, Հիրշի ինդեքսը, ամսագրերի ազդեցության գործոնը, ինքնահղումների թիվը, համահեղինակների կողմից արված հղումների թիվը, ինչպես նաև մեկ միավորին բաժին հասնող հղումների միջին թիվը: Հետազոտությունն իրականացվել է *WOS*-ի դեպքում 2006-2015թթ. համար, *RINC*-ի դեպքում՝ 1991-2015թթ. համար և *AINC*-ի դեպքում՝ 2007-2012թթ. համար:

Աղյուսակ 2

Հայ-ռուսական և հայ-բելառուսական համատեղ երկկողմ մրցույթների վերաբերյալ քանակական տվյալներ

Մրցույթ	Տարի	Ներկայացված հայտեր (դիտարկված)	Ֆինանսավորված հայտեր
ԳՊԿ - ՀՀՌՀ	2013-2015	127 (121)	17
ԳՊԿ - ՀՀՌՀ	2015-2017	91 (89)	25
ԳՊԿ - ՌՀԳՀ	2012-2013	7 (7)	4
ԳՊԿ - ՌՀԳՀ	2014-2015	14 (11)	8
ԳՊԿ - ՀՀԲՀՀ	2011-2013	30 (27)	17
ԳՊԿ - ՀՀԲՀՀ	2013-2015	36 (34)	17

2012-2015թթ. ընթացքում հայ-ռուսական երկկողմ համատեղ մրցույթների շրջանակներում ներկայացվել է 239 հայտ, որոնցից տեխնիկական փորձաքննություն անցել է 228-ը: Գիտական փորձաքննության արդյունքում ֆինանսավորվել է 54 նախագիծ: Ինչ վերաբերում է հայ-բելառուսական համատեղ մրցույթներին, ապա 2011-2015թթ. անցկացվել է 2 համատեղ մրցույթ, որին ընդհանուր առմամբ ներկայացվել է 66 հայտ, որոնցից 61-ն անցել է

[1] ՌՀԳՀ-ի հետ համատեղ իրականացված վերջին մրցույթը (2015թ. վերջ) դեռևս գտնվում է սկզբնական փուլում և առայժմ վաղ է խոսել դրա արդյունքների մասին:

տեխնիկական փորձաքննությունը: Գիտական փորձաքննության արդյունքում ֆինանսավորվել է 34 նախագիծ:

Մասնակիցները պայմանականորեն բաժանվել են երկու խմբի՝ հաղթողներ և չհաղթողներ: Ավելի մանրամասն տե՛ս *Աղյուսակ 3*.

Աղյուսակ 3

Տվյալներ հայ-ռուսական և հայ-բելառուսական նախագծերի մասնակիցների վերաբերյալ

Անվանում	Հայ-ռուսական			Հայ-բելառուսական		
	Ցնցման ռիսկիմաշ	Ցնցման ռիսկառուսաՍ	Միջին վտանգվող	Ցնցման ռիսկիմաշ	Ցնցման ռիսկառուսաՔելառուսաՔ	Միջին վտանգվող
Հաղթողներ	206	322	528	217	229	446
Չհաղթողներ	717	1146	1863	134	139	273
Ընդհանուր թիվը	923	1468	2391	83	90	173

Սույն հետազոտության մեջ իրականացվել է հաղթող խմբերի գիտաչափական ցուցանիշների համեմատությունը չհաղթող խմբերի համապատասխան ցուցանիշների հետ: *RINC*-ի տվյալների շտեմարանից վերցվել են հետևյալ ցուցանիշները. հեղինակի հրապարակումների թիվը *RINC*-ում, հեղինակի հղումների գումարային թիվը, Հիրշի ինդեքսը, ինքնահղումների թիվը, համահեղինակների կողմից արված ինքնահղումները: *WOS*-ի տվյալների շտեմարանից վերցվել են հետևյալ ցուցանիշները. հեղինակի հրապարակումների թիվը *WOS*-ում, հեղինակի հղումների գումարային թիվը, հեղինակի հղումների գումարային թիվն առանց ինքնահղումների, մեկ միավորին բաժին հասնող հղումների միջին թիվը, Հիրշի ինդեքսը: *AINC* տվյալների շտեմարանից վերցվել է հեղինակների հրապարակումների թիվը:

Արդյունքները և քննարկումները

Ինչպես արդեն նշվել է, հետազոտության հիմքում ընկած է պետական երկկողմ մրցույթների շրջանակներում ՀՀ և ՌԴ, ՀՀ և ԲՀ գիտնականների համագործակցությունը: Ուսումնասիրված նախագծերի ընդհանուր թիվը

կազմում է 239 հայ-ռուսական և 66՝ հայ-բելառուսական համատեղ երկկողմ մրցույթների համար (տե՛ս *Աղյուսակ 4*).

Աղյուսակ 4

Հայ-ռուսական և հայ-բելառուսական համատեղ մրցույթներում ներկայացված և ֆինանսավորված հայտերի թիվն ըստ գիտական ուղղությունների

	Հայ-ռուսական		**Հայ-բելառուսական**	
Անվանումը	*Հայտերի թիվը*	*Ֆինանսա-վորված հայ-տերի թիվը*	*Հայտերի թիվը*	*Ֆինանսա-վորված հայ-տերի թիվը*
Ընդհանուր թիվը	239	54	64	34
Բնական գիտություններ	173	36	41	24
Ինժեներիա և տեխնոլոգիաներ	35	4	12	6
Բժշկական գիտություններ	10	2	3	1
Գյուղատնտեսական գիտություններ	0	0	0	0
Հասարակական գիտություններ	12	7	7	3
Հայագիտություն և հումանիտար գիտություններ	9	5	1	0

Վերը նշված տվյալները փաստում են, որ թե՛ հայտերի ընդհանուր թվով, թե՛ ֆինանսավորում ստացած հայտերի թվով առաջատար են բնական գիտությունները (ֆիզիկա, աստղագիտություն, քիմիա, կենսաբանական գիտություններ և այլն), այն դեպքում, երբ հասարակագիտական և, հատկապես, հումանիտար գիտություններում քիչ է ոչ միայն հաղթողների, այլև ընդհանրապես մրցույթի մասնակիցների թիվը: Սա կարելի է բացատրել այն հանգամանքով, որ դեռևս խորհրդային տարիներից բնական գիտությունների դպրոցը գտնվում էր բարձր և մրցունակ մակարդակի վրա, ինչը շարունակվում է նաև ԽՍՀՄ փլուզումից հետո [4, էջ 61-79]:

Հայ-բելառուսական և հայ-ռուսական երկկողմ համատեղ մրցույթներում հաղթած և չհաղթած մասնակիցների միջին տարիքն ուսումնասիրված բոլոր մրցույթներում գրեթե նույնն է (տե՛ս *Աղյուսակ 5*).

Աղյուսակ 5

Հայ-ռուսական և հայ-բելառուսական համատեղ մրցույթների մասնակիցների միջին տարիքը

Համատեղ մրցույթներ	Հաղթողներ	Չհաղթողներ
Հայ-ռուսական	44,5	45,5
Հայ-բելառուսական	52	52

Ներկայացված աղյուսակից ակնհայտ է, որ գիտնականների համագործակցությունը հաջողությամբ անցել է սերնդափոխության փուլը, և ԽՍՀՄ ժամանակաշրջանից առկա կապերի հիման վրա զարգանում է գիտական նոր համագործակցություն:

Նույնանման պատկեր է նաև մրցույթներում հաղթած և չհաղթած մասնակիցների գիտական աստիճանների տոկոսային հարաբերակցության դեպքում: Երկու խմբում էլ առաջին տեղում են գտնվում գիտության թեկնածուները, որոնց հետևում են գիտության դոկտորները և առանց գիտական աստիճանի գիտական աշխատողները: Մասնակիցների շարքում ամենափոքր թիվը կազմում են ասպիրանտները և ուսանողները: Ընդ որում, ասպիրանտների և ուսանողների առկայությունը հետազոտական խմբում պարտադիր պայման է հայկական կողմի և ենթադրելի՝ ռուսական և բելառուսական կողմերի համար (տե՛ս *Նկար 1 և 2*).

Նկար 1

Հայ-ռուսական համատեղ ծրագրերում հաղթողների և չհաղթողների գիտական աստիճանները տոկոսային հարաբերությամբ





Նկար 2

Հայ-բելառուսական համատեղ ծրագրերում հաղթողների և չհաղթողների գիտական աստիճանները տոկոսային հարաբերությամբ



Այսպիսով, կարելի է արձանագրել, որ հաղթող և չհաղթող մասնակիցների գիտական աստիճանների տոկոսային հարաբերակցությունը շատ չի տարբերվում:

Հաշվի առնելով այն փաստը, որ տարեցտարի գիտաչափական ցուցանիշներն ավելի մեծ դեր են խաղում գիտական նախագծերի ֆինանսավորման հարցում [5, pp. 307-321, 6, pp. 2215–2222, 7, pp. 419-427], ստորև ներկայացնենք հայ-ռուսական և հայ-բելառուսական գիտական մրցույթներում հաղթող և չհաղթող խմբերի գիտաչափական տվյալների վերլուծությունը:

Նախ անդրադառնանք հայ-ռուսական ծրագրերին: *Նկար 3-ը* և *Աղյուսակ 6-ը* ներկայացնում են հայ-ռուսական համատեղ մրցույթներում հաղթող և չհաղթող խմբերի համեմատական տվյալները՝ ըստ այսօր լայնորեն կիրառվող գիտաչափական ցուցիչների, որոնք վերցվել են տվյալների տեղական, ռուսական և միջազգային շտեմարաններից:

Ստացված տվյալները ցույց են տալիս, որ մրցույթների արդյունքները հիմնականում համընկնում են *RINC*-ից վերցված գիտաչափական ցուցանիշների հետ: Ընդ որում, հայ մասնակիցների պարագայում առկա է 100 տոկոսանոց համընկնում, իսկ ռուս մասնակիցների պարագայում միայն չհաղթած մասնակիցների հրապարակումների թիվն է մի փոքր ավելի հաղթողների հրապարակումների թվից: Այս օրինաչափությունը նկատելիորեն խախտված է *WOS*-ի շտեմարանից վերցված տվյալների դեպքում: Մրցույթներում չհաղթող խմբերն ավելի շատ հրապարակումներ և հղումներ ունեն *WOS*-ում, քան հաղթողները: Ընդ որում, ռուս չհաղթած մասնակիցների գիտաչափական բոլոր ցուցանիշների միջինն ավելի բարձր է, քան հաղթողներինը, մինչդեռ

հայ չհաղթած մասնակիցների մոտ *Նկար 3*-ում պատկերված առաջին 3 գիտաչափական ցուցանիշներն ավելի բարձր են, քան հաղթողների մոտ: Պետք է արձանագրել նաև, որ վերջին երկու գիտաչափական ցուցանիշների տատանումները չնչին են:

Նկար 3

Հայ-ռուսական համատեղ ծրագրերում հաղթող և չհաղթող խմբերի գիտաչափական ցուցիչների միջին արժեքները՝ վերցված RINC-ից (ձախ) և WOS-ից (աջ)





Աղյուսակ 6

Հայ-ռուսական և հայ-բելառուսական համատեղ մրցույթների մասնակիցների հրապարակումները AINC-ում

Մրցույթներ	Հաղթողներ	Չհաղթողներ
Հայ-ռուսական	111	1139
Հայ-բելառուսական	286	47

Ըստ երկրների կատարած հետազոտությունը փաստում է, որ մրցույթների հայ մասնակիցները նախընտրում են *WOS*-ում ինդեքսավորվող ամսագրերը (5836 հոդված WOS-ում, 2727՝ *RINC*-ում), իսկ ռուս մասնակիցներն ակնհայտ առավելություն են տալիս ազգային ամսագրերին: Ստացված տվյալների համաձայն, *RINC*-ում ռուս մասնակիցների հրապարակումների թիվը վեց անգամ գերազանցում է *WOS*-ում առկա հրապարակումների թիվը:

Աղյուսակ 6-ում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ մրցույթների մասնակիցների հոդվածների թիվն *AINC*-ում անհամեմատ քիչ է: Սա պայմանավորված է նախ նրանով, որ *AINC* շտեմարանը գտնվում է ձևավորման փուլում և չի ընդգրկում համատեղ ծրագրերի մեկնարկից հետո ընկած ժամանակահատվածը: Բացի այդ, գիտության արդի մոտեցումները պահանջում են հետազոտողներից հրատարակվել միջազգային ամսագրերում, ինչն ավելի մեծ վարկանիշ և հասանելիություն է ապահովում տվյալ գիտնականի համար:

Հայ-ռուսական համատեղ մրցույթներում հաղթած մասնակիցները մի քանի անգամ ավելի քիչ հոդվածներ ունեն *AINC*-ում ինդեքսավորվող ամսագրերում, քան չհաղթած մասնակիցները: Ընդ որում, հրապարակումների թվով բնագիտության ոլորտում ակնհայտ առաջատար է Հայաստանի քիմիական հանդեսը, իսկ հասարակական և հումանիտար ոլորտում՝ «21-րդ ԴԱՐ» ամսագիրը: Ընդ որում, հումանիտար ոլորտում հայ-ռուսական մրցույթների մասնակիցների բոլոր հրապարակումները «21-րդ ԴԱՐ» ամսագրում են:

Նկար 4-ը և *Աղյուսակ 6*-ը ներկայացնում են հայ-բելառուսական համատեղ մրցույթներում հաղթած և չհաղթած խմբերի համեմատական տվյալները՝ ըստ *RINC, WOS, AINC* տվյալների շտեմարանների գիտաչափական ցուցիչների:

Վերոնշյալ տվյալները ցույց են տալիս, որ հայ-բելառուսական մրցույթների արդյունքներն ամբողջությամբ համընկնում են *RINC*-ից, *WOS*-ից և *AINC*-ից վերցված գիտաչափական ցուցիչների հետ: Ըստ մասնակից երկրների կատարած հետազոտությունը նույնպես փաստում է, որ հաղթող մասնակիցների գիտաչափական տվյալներն ավելի բարձր են, քան չհաղթողներինը:

Փաստորեն, ի տարբերություն հայ-ռուսական մրցույթների, որտեղ հատկապես ռուս չհաղթած մասնակիցների գիտաչափական տվյալներն ավելի բարձր էին հաղթածներից, հայ-բելառուսական մրցույթների դեպքում գիտաչափական տվյալները համընկնում են մրցույթների արդյունքների հետ:

Նկար 4

Հայ-բելառուսական համատեղ ծրագրերում հաղթած և չհաղթած խմբերի գիտաչափական ցուցիչների միջին արժեքները՝ վերցված RINC-ից (ձախ) և WOS-ից (աջ)





Գիտական համագործակցությունն իր արտացոլումն է գտնում համատեղ գիտական հրապարակումներում: Հայ գիտնականների համատեղ հրապարակումներն օտարերկրյա գործընկերների հետ սկիզբ են առնում դեռ անկախության առաջին օրերից: Սկսած 2011-2012-ից՝ այդ գործընթացը ծավալվում է նաև համատեղ մրցույթների շրջանակներում: Ընդ որում, հարկ է շեշտել, որ համատեղ մրցույթներն ակնհայտ խթանում են համատեղ հրապարակումների թվի աճը: Սույն հետազոտությունները վկայում են, որ մրցույթների շրջանակներում գիտական նոր կապերի թիվը գերազանցում է մինչ այդ գոյություն ունեցող գիտական կապերի թիվը: Սկսած 2010-2011-ից՝

մրցույթներում հաղթած հայ և ռուս հետազոտողների համատեղ հրապարակումների թիվն աճում է՝ հասնելով բարձրակետին 2014-2015թթ.: Հարկ է փաստել, որ մրցույթներում չհաղթած մասնակիցները նույնպես շարունակել են համագործակցությունը, ինչն արտահայտվում է նաև համատեղ հոդվածների հրապարակմամբ: Ընդ որում, այս խմբի համար *WOS*-ում համատեղ հրապարակությունների բարձրագույն կետը բաժին է ընկել 2015թ., իսկ *RINC*-ում՝ 2012թ. (տե՛ս *Աղյուսակ 7*).

Աղյուսակ 7

Մրցույթների հայ և ռուս, հայ և բելառուս հետազոտողների համատեղ հրապարակումների դինամիկան ըստ տարիների՝ վերցված WOS, RINC և AINC շտեմարաններից

	Հայ-ռուսական մրցույթներ						Հայ-բելառուսական մրցույթներ					
	հաղթողներ			*չհաղթողներ*			*հաղթողներ*			*չհաղթողներ*		
Տարի	*RINC*	*WOS*	*AINC*	*RINC*	*WOS*	*AINC*	*RINC*	*WOS*	*AINC*	*RINC*	*WOS*	*AINC*
2012	7	14	0	26	25	5	1	1	3	1	0	0
2013	10	11	0	13	15	0	6	3	1	3	0	0
2014	22	8	0	13	22	0	4	6	0	1	1	0
2015	14	31	0	8	29	1	2	3	0	1	1	0
2016	1	1	0	1	2	0	-	-	-	-	-	-

Սույն հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են նաև այն ամսագրերը, որտեղ հրապարակվել են հայ-ռուսական և հայ-բելառուսական մրցույթների մասնակիցների համատեղ հոդվածները: Ինչպես հաղթած, այնպես էլ չհաղթած խմբերի մոտ ամենացածր տոկոսը բաժին է հասնում հայաստանյան գիտական ամսագրերին (32 հոդված), որին հաջորդում են ռուսական ամսագրերը (187), իսկ առաջատար են միջազգային պարբերականները (292):

Հայ-ռուսական մրցույթների պարագայում նույնանման պատկեր է նաև *WOS*-ում ինդեքսավորվող ամսագրերի հարցում. առաջատար են *WOS*-ում ինդեքսավորված միջազգային ամսագրերը, որոնց հաջորդում են *WOS*-ում ինդեքսավորված ռուսական, և ապա՝ հայկական ամսագրերը (*Նկար 5*): Նշենք, որ *WOS*-ում ինդեքսավորվում է հայաստանյան 4 ամսագիր, որոնց ազդեցության գործոնները տատանվում են 0.232-0.735 տիրույթում, իսկ *WOS*-

ում ինդեքսավորվող ռուսաստանյան ամսագրերի թիվը 162 է, որոնց ազդեցության գործոնները գտնվում են 0.004-2.964 տիրույթում: Հաղթողների խմբի ամսագրերի 38%-ն ունի 1-ից բարձր ազդեցության գործոն, իսկ ամենաբարձր ազդեցության գործոն ունի ֆիզիկայի ոլորտի ամսագիրը՝ 6.22:

Չհաղթած մասնակիցների խմբում միջազգային ամսագրերի բաժինը մեծանում է՝ հասնելով 87%-ի: Ամսագրերի ավելի բարձր՝ 65%-ն ունի 1-ից բարձր ազդեցության գործոն և ամենաբարձրը կրկին ֆիզիկայի ոլորտի ամսագրինն է՝ 7.51:

Նկար 5

WOS-ում ինդեքսավորվող ամսագրերի տոկոսային բաշխումն ըստ երկրների, որտեղ հրատարակվել են հայ-ռուսական մրցույթներում հաղթած և չհաղթած մասնակիցների համատեղ հոդվածները



Նկար 5ա

WOS-ում ինդեքսավորվող ամսագրերի տոկոսային բաշխումն ըստ երկրների, որտեղ հրատարակվել են հայ-բելառուսական մրցույթներում հաղթած և չհաղթած մասնակիցների համատեղ հոդվածները



Հայ-բելառուսական համատեղ մրցույթների պարագայում պատկերը լիովին այլ է: Այստեղ ակնհայտ տարբերություններ կան հաղթող և չհաղթող խմբերի միջև (*Նկար 5ա*): Չհաղթող խմբերի բոլոր համատեղ հոդվածները *WOS*-ում ինդեքսավորված հայկական և բելառուսական ամսագրերում են:

WOS-ում ինդեքսավորված է բելառուսական 3 ամսագիր, որոնց ազդեցության գործոնները գտնվում են 0,400-0,930 տիրույթում: Այս խմբում բոլոր ամսագրերն ունեն 1-ից ցածր ազդեցության գործոն: Ինչ վերաբերում է հաղթողների խմբերին, ապա համատեղ հոդվածների շուրջ 70%-ը տպագրված է միջազգային ամսագրերում, որին հաջորդում են բելառուսական, ապա՝ հայկական ամսագրերը: Հաղթողների խմբի ամսագրերի 60%-ն ունի 1-ից բարձր ազդեցության գործոն, իսկ ամենաբարձր ազդեցության գործոնը կենսաքիմիայի ոլորտի ամսագրինն է՝ 4,015:

Վերջաբան

Հայ-ռուսական և հայ-բելառուսական գիտական կապերը Խորհրդային Միության փլուզումից հետո սկսեցին զարգանալ առավելապես անհատական մակարդակում: Սակայն ժամանակի ընթացքում գործընթացն ավելի ինստիտուցիոնալ բնույթ ստացավ, որին մեծապես նպաստեցին նաև երկկողմ համատեղ մրցույթները, որոնք անցկացվում են ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի և Ռուսաստանյան հումանիտար գիտական հիմնադրամի ու Ռուսաստանի կառավարությանն առընթեր Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի և Հիմնարար հետազոտությունների բելառուսական հանրապետական հիմնադրամի միջև կնքված համաձայնագրերի հիման վրա:

Վերոնշյալ համաձայնագրերի հիման վրա իրականացված հայ-ռուսական և հայ-բելառուսական համատեղ մրցույթների ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ տվյալ մրցույթները նպաստում են.

- հայ և ռուս, հայ և բելառուս գիտնականների միջև գոյություն ունեցող գիտական կապերի պահպանմանը,
- նոր կապերի հաստատմանը,
- հայ և ռուս, հայ և բելառուս գիտնականների համատեղ գիտական հրապարակումների թվի աճին, ընդ որում, հիմնականում *WOS*-ում ինդեքսավորվող ամսագրերում:

Հարկ է նշել, որ հաղթող և չհաղթող խմբերի միջին տարիքը, գիտության դոկտորների և թեկնածուների, ինչպես նաև առանց գիտական աստիճանի գիտաշխատողների, ասպիրանտների և ուսանողների տոկոսային հարաբերակցությունը հիմնականում համընկնում է ինչպես հայկական, այնպես էլ ռուսական և բելառուսական կողմերի համար:

Ինչ վերաբերում է մրցույթների գիտական փորձաքննության արդյունքների գիտաչափական գնահատականին, հայ-ռուսական համատեղ մրցույթներում հաղթող խմբերի գիտաչափական ցուցանիշները ոչ միշտ են բարձր չհաղթող մասնակիցների նույնանման ցուցանիշներից: Իսկ հայ-բելառուսական մրցույթներում հաղթող խմբերի գիտաչափական ցուցանիշներն ամբողջությամբ համընկնում են մրցույթների արդյունքների հետ: Սակայն հարկ է նշել, որ գիտաչափական տվյալները կազմում են հայտի վերջնական գնահատականի միայն որոշ մասը, իսկ հիմնական գնահատականը դրվում է փորձագետների կողմից՝ հայտի գիտական գնահատման արդյունքում:

Նոյեմբեր, 2016թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Gzoyan E., Hovhannisyan L., Aleksanyan S., Ghazaryan N., Hunanyan S., Bourghida A., Sargsyan Sh.* Comparative analysis of the Scientific Output of Armenia, Azerbaijan and Georgia // Scientometrics. January 2015, vol. 102, issue 1.
2. *Арефьев П.Г., Глухов В.А., Еременко Г.О.,* Российский индекс научного цитирования – инструмент для анализа науки // Библиосфера, 2012, № 5.
3. *Սարգսյան Շ., Ղազարյան Ն., Իսկանդարյան Է., Շարամբեյան Մ., Այվազյան Ն.,* Հայաստանի գիտության վիճակագրական վերլուծության համակարգի մշակումն ըստ հղման հայաստանյան ցուցչի տվյալների: Գիտական տեղեկատվության վերլուծության և մոնիթորինգի կենտրոնի տեղեկագիր, №1, Եր., 2010:
4. *Գզոյան Է., Մայիլյան Ա., Ստեփանյան Լ., Մկրտչյան Ս., Այվազյան Ն.,* Հումանիտար և հասարակական գիտությունները հետխորհրդային տարածքում // 21-րդ ԴԱՐ, 2011, #3:
5. *Coccia M.,* A scientometric model for the assessment of scientific research performance within public institutes // Scientometrics, 2005, v. 65, N3.
6. *Bornmann L., Mutz R.,* Growth rates of modern science: A bibliometric analysis based on the number of publications and cited references // Journal of the Association for Information Science and Technology, 2015, v. 66, N2.
7. *Smith D.R.,* Impact factors, scientometrics and the history of citation-based research // Scientometrics, 2012, v. 92, N2.

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՅ-ԲԵԼԱՌՈՒՍԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՏԵՂ ՊԵՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Էդիտա Գզոյան, Արամ Միրզոյան, Սոֆյա Ալեքսանյան, Լուսինե Հովհաննիսյան, Սիմոն Հունանյան, Մարիամ Մեհրաբյան, Շուշանիկ Սարգսյան

Ամփոփագիր

Սույն հոդվածում վերլուծվում են ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի և Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի, Ռուսաստանյան հումանիտար գիտական հիմնադրամի և Հիմնարար հետազոտությունների բելառուսական հանրապետական հիմնադրամի կողմից կազմակերպված հայ-ռուսական և հայ-բելառուսական համատեղ գիտական մրցույթները: Հետազոտությունն իրականացվել է 6 երկկողմ համատեղ մրցույթների (4 հայ-ռուսական և 2 հայ-բելառուսական) հայտերի ուսումնասիրության, ինչպես նաև *RINC, AINC* և *WOS* շտեմարանների տվյալների հիման վրա: Ուսումնասիրվել և համեմատվել են հաղթած և չհաղթած խմբերի գիտաչափական ցուցիչները, տարիքները, գիտական աստիճանները: Կարևորվել է համատեղ մրցույթների ազդեցությունը հայ-ռուսական և հայ-բելառուսական գիտական համագործակցության վրա:

Հայ-ռուսական համատեղ մրցույթներում հաղթած խմբերի գիտաչափական ցուցիչները ոչ միշտ են բարձր չհաղթած մասնակիցների նույնանման ցուցանիշներից, իսկ հայ-բելառուսական մրցույթներում հաղթող խմբերի գիտաչափական ցուցանիշներն ամբողջությամբ համընկնում են մրցույթների արդյունքների հետ:

ИССЛЕДОВАНИЕ АРМЯНО-РОССИЙСКИХ И АРМЯНО-БЕЛОРУССКИХ НАУЧНЫХ КОНКУРСОВ В РАМКАХ СОВМЕСТНЫХ ГОСУДАРСТВЕННЫХ ГРАНТОВ

Эдита Гзоян, Арам Миргоян, Софья Алексанян, Лусине Ованисян, Симон Унанян, Мариам Меграбян, Шушаник Саргсян

Резюме

В данной статье анализируются двусторонние конкурсы, проводимые Государственным комитетом по науке Министерства образования и науки Республики Армения с Российским фондом фундаментальных исследований, Российским гуманитарным научным фондом и Белорусским республиканским фондом фундаментальных исследований. Работа осуществлена на основе исследования заявок 6 двусторонних совместных конкурсов (4 армяно-российских и 2 армяно-белорусских), а также на основе баз данных RINC, AINC и WOS. Наукометрические показатели, возраст, а также учёные

степени участников конкурсов были проанализированы и сравнены среди групп победителей и других участников. Также отмечено влияние двусторонних конкурсов на армяно-российское и армяно-белорусское научное сотрудничество.

Было также выявлено, что библиометрические показатели группы остальных участников армяно-российских совместных конкурсов в некоторых случаях превалируют над аналогичными показатели группы победителей, в то время как в случае с армяно-белорусскими совместными конкурсами данные показатели всегда коррелируются с результатами научной экспертизы.

A STUDY OF ARMENIAN-RUSSIAN AND ARMENIAN- BELARUSIAN SCIENTIFIC CONTESTS IN THE FRAMEWORK OF JOINT GOVERNMENT GRANTS

Edita Gzoyan, Aram Mirzoyan, Sofya Aleksanyan, Lusine Hovhannisyan, Simon Hunanyan, Mariam Mehrabyan, Shushanik Sargsyan

Resume

The article analyzes Armenian-Russian and Armenian-Belarusian bilateral grant projects organized jointly by the State Committee of Sciences of the Ministry of Education and Science of the Republic of Armenia, the Russian National Foundation for Humanities and the Russian Foundation for Basic Research under the Government of the Russian Federation, and the Belarusian Republican Foundation for Fundamental Research. Six bilateral grant projects are studied (four with the Russian funds and two with the Belarusian Fund) based on their applications and databases of WOS, RINC and AINC. Scientometric indicators, ages, as well as scientific degrees of the participants were analyzed and compared among the winning and non-winning groups. The influence of the bilateral grants on the overall Armenian-Russian and Armenian-Belarusian scientific cooperation was also highlighted.

In conclusion, in the Armenian-Russian joint projects bibliometric indicators of the non-winning groups in some cases prevail over the winners' group, while in the Armenian-Belarusian joint projects bibliometric indicators always correlate with the results of the peer review.

ՀՀ-ՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ՖԻՆԱՆՍԱՒՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գրիգոր Ներսիսյան*

Բանալի բառեր ՝ պետական գնումներ, պետական պատվեր, պետական կարիք, ֆինանսական ռեսուրսներ, պետական ծախսեր:

Ռուս գիտնական Վ.Ա. Լեբեդևը դեռևս 19-րդ դարում, քննության առնելով պետական կարիքները և դրանց բավարարման խնդիրները, ուշադրություն դարձրեց այն հանգամանքին, որ պետական կարիքները կազմում են այն զանազան պահանջների շրջանակը, որոնք բխում են պետական կյանքի ընդհանուր նկարագրից [1]: Մի պետությունում կարող են գերակշռել այս կարիքները, մեկ ուրիշում՝ այլ: Սակայն զարգացման որոշակի մակարդակի հասած երկրներում կարիքների շրջանակը սովորաբար նույնն է՝ գերագույն իշխանության բովանդակությունը և պետական կառավարման համակարգը, ժողովրդի բարեկեցության նպատակով ընդունված ներքին և արտաքին անվտանգության միջոցառումների ապահովումը: Բոլոր այդ խնդիրները, որոնք կան պետության ներսում, բնականաբար, չեն կարող իրականացվել առանց միջոցների, սակայն հարցն այն է, թե այս կամ այն կարիքը ո՛ր չափով պետք է կամ կարող է բավարարվել: Ժամանակակից պայմաններում ևս պետական կարիքների, ինչպես նաև դրամական միջոցների ծավալի հիմնախնդիրը, որն առանձնացվում է այդ կարիքների բավարարման համար, մնում է հրատապ:

Ցանկացած երկրում պետական և մունիցիպալ կարիքների բավարարման համար ծախսվում են նշանակալի ծավալով ֆինանսական ռեսուրսներ: Այդ կարիքների բավարարման առումով ինչպես ՌԴ-ում, այնպես էլ ՀՀ-ում հիմնախնդիր են մնում միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացումը և անցումը բյուջետային միջոցների տնտեսման կոշտ ռեժիմին: Այդ նպատակով պետությունն օգտագործում է ֆինանսական գործունեության տարբեր ձևեր և գործիքներ, որոնցից մեկը պետական և մունիցիպալ

* Մանկավարժական գիտությունների թեկնածու:

կարիքների բավարարման համար ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման պայմանագրային համակարգն է [2, 3]:

Առանձնահատուկ նշանակություն են ձեռք բերել ֆինանսաիրավական հարաբերությունները, որոնք առաջացել են պետական և մունիցիպալ ծախսերի կատարման արդյունքում՝ գնումների ոլորտում պայմանագրային համակարգի միջոցով:

Գնումների ոլորտում պայմանագրային համակարգն ուղղված է պետական և մունիցիպալ կառույցների գործառույթների և իրավասությունների կատարմանը՝ պահպանելով հասարակական դրամական ֆոնդերի ծախսման նպատակահարմարության և արդյունավետության սկզբունքները:

Այս համակարգի ֆինանսաիրավական կարգավորումից է կախված ոչ միայն հասարակական-իրավական կառույցների ռեսուրսների ծախսումների տնտեսական արդյունավետությունը, այլ նաև պետության և մունիցիպալ մարմինների կողմից իրենց գործառույթների կատարման արդյունքները:

Պայմանագրային համակարգի ներդրման պրակտիկայում ՀՀ-ում առկա են պետական գնումների գործընթացի որոշակի թերություններ, որոնց վերացումը հնարավոր չէ առանց գնումների ոլորտում ֆինանսաիրավական հարաբերությունների նորովի զարգացման և վերահսկողական նոր ինստիտուտների ձևավորման:

Պետական գնումների ոլորտում պայմանագրային համակարգը որոշակի մեխանիզմ է, որի նպատակը պետական և մունիցիպալ մարմինների կարիքների բավարարման համար իրականացվող գնումների գործընթացում առաջացող հարաբերությունների կարգավորումն է: ՀՀ պետական գնումների կարգավորման նպատակով 2000 թվականին ընդունվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքը (թիվ 62), որը 2005 թվականին ուժը կորցրած է ճանաչվել, և ընդունվել է «Գնումների մասին» նոր օրենք (թիվ 160), իսկ արդեն 2011 թվականին վերջինս նույնպես ուժը կորցրած է ճանաչվել՝ փոխարինվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքով (թիվ 206), որը գործում է մինչ օրս [4]: Այդ օրենքներում տեղի է ունեցել պատվիրատու հանդիսացող մարմինների շրջանակի ընդլայնում, կատարվել են գնումների իրականացման ձևերի փոփոխություններ, այնպիսի քայլերի հաջորդականության սահմանումներ, որոնցով հնարավոր կլինի ապահովել առավել արդյունավետ, տնտեսող և թափանցիկ պետական գնումներ: Միևնույն ժամանակ, ինչպես ցանկացած համակարգ, այնպես էլ գնումների պայմանագրային համակարգն ունի զարգացման և փոփոխությունների կարիք:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ կարգավորման առարկա են հանդիսանում պատվիրատուների կողմից ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման գործընթացի հետ կապված հարաբերությունները. օրենքով սահմանվում են այդ հարաբերությունների կողմերի հիմնական իրավունքները և պարտականությունները, իսկ «գնում» եզրույթը սահմանվում է որպես «պատվիրատուի հատուցմամբ նյութական և ոչ նյութական ակտիվների (արժեքների)՝ բոլոր տեսակի ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը»:

Կարևոր է ոչ միայն հետամուտ լինել պետական գնումների իրականացման միջոցով բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացմանը, այլ նաև մի շարք հարակից խնդիրների լուծմանը, որոնք ուղղակի թե անուղղակի կերպով փոխկապակցված են պետգնումների հետ:

Պետական գնումների արդյունավետ գործառնող համակարգի և վերահսկողական մեխանիզմներն առանձնահատուկ կարևորություն ունեն: Լայն իմաստով պետական գնումները պետական պատվերների իրականացման գործընթաց են: Պետական պատվերները կարող են հանդես գալ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների տեսքով, որոնք, տվյալ տարվա կարիքների սահմանման համար, յուրաքանչյուր պետական մարմին նախապես ներկայացնում է ՀՀ ֆինանսների նախարարություն՝ լիազոր մարմին, ինչը սահմանված գործընթացների իրականացման արդյունքում ամրագրվում է «Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում:

Կարևորվում է պետական պատվերների, հիմնական կարիքների միասնական համակարգի, այսինքն՝ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների միասնական առավելագույն գների, բնութագրերի և տեսականու սահմանումը, ինչը կարող է էապես նպաստել պետական գնումների և վերահսկման գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

Պետական կարիքը գնումների ոլորտի պայմանագրային համակարգի հիմնական և ամենակարևոր տարրերից է, քանի որ պետական պահանջների ճիշտ և հստակ սահմանումից է կախված ֆինանսական ռեսուրսների արդյունավետ և նպատակային օգտագործումը, հատկապես եթե նկատի ենք ունենում, որ ծախսերի զգալի մասն ուղղվում է գնումներին:

Այս իմաստով առկա է պետական կարիքի՝ ըստ յուրաքանչյուր պետական հիմնարկի բացահայտման և սահմանման, մեխանիզմների, չափորոշիչների փոփոխության անհրաժեշտություն, որն էլ կհանգեցնի պետական

պատվերի որոշակի փոփոխության: Բոլոր պետական հիմնարկների համար կարևոր է նաև հիմնական օգտագործման ապրանքների, աշխատանքների և ծառայությունների սահմանման միատարրությունը, ինչն էլ կհանգեցնի պետական կարիքի սահմանման հստակության:

Պետական կարիքների, ձևավորվող պատվերների, գնումների կազմակերպման, ինչպես նաև դրանց սպառման փուլերում մեծ է կիրառվող հսկողական մեխանիզմների և հսկողություն իրականացնող մարմինների առկա և բացահայտվող խնդիրների վերհանման նշանակությունը: Նշված գործընթացների կազմակերպման համար ՀՀ-ում օրենսդրությամբ նախատեսված են մի շարք պետական մարմիններ, որոնք ընթացիկ հսկողություն և վերահսկողություն են իրականացնում պետական գնումների բոլոր փուլերում: Այս առումով, սակայն, ՀՀ օրենսդրությունը կարիք ունի նաև միջազգային, մասնավորապես՝ այն երկրների փորձի յուրացման, որոնց հետ ՀՀ առևտրատնտեսական հարաբերությունները ձևավորվում են տնտեսական դաշտի համանման պատկերի հիման վրա:

Նկատենք, որ ՌԴ-ում պետական գնումների համակարգը կարգավորող օրենսդրության մեջ վերջին տարիներին կատարվել են մի շարք բարեփոխումներ, որոնցից կարևորագույնը նոր՝ հասարակական հսկողության ինստիտուտի ձևավորումն է, որի գործունեությունը գտնվում է երկրի ղեկավարության անմիջական հսկողության ներքո: Ի դեպ, ավելորդ չէ նշել, որ ՌԴ նախագահը և վարչապետը բազմիցս՝ համաժողովներում, ասուլիսներում կամ այլ առիթներով, ընդգծել են այդ ինստիտուտի կարևոր նշանակությունը:

«Պետական և մունիցիպալ կարիքների բավարարման վերաբերյալ ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գնումների պայմանագրային համակարգը» ՌԴ օրենքի համաձայն (թիվ 44 ՖՅ)՝ քաղաքացիները, հասարակական միավորումները և իրավաբանական անձանց միավորումներն առաջին անգամ իրականացնում են հսկողություն գնումների ոլորտի վերաբերյալ պայմանագրային համակարգի՝ ՌԴ օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված դրույթների պահպանման նկատմամբ: Պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են ապահովել տվյալ հսկողության իրականացման հնարավորությունը [5]:

Միանգամայն ակնհայտ է, իսկ ձեռք բերված միջազգային փորձով՝ նաև հավաստված, որ հասարակական հսկողության ինստիտուտի ներդրումը ՀՀ-ում կարող է բարձրացնել պետական գնումների արդյունավետությունը, ինչ-

պես նաև ստեղծել հենք պետական գնումների նկատմամբ հասարակական վստահության ստեղծման համար:

Հունվար, 2017թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Лебедев В.А.,* Финансовое право, М., 2000.
2. *Белов В.Е.,* Поставка товаров, выполнение работ, оказание услуг для государственных нужд: правовое регулирование, М., 2011.
3. *Смотрицкая И.И.,* Экономика государственных закупок, М., 2009.
4. «Գնումների մասին» ՀՀ օրենք, թիվ 62 (2000թ.), թիվ 160 (2005թ., թիվ 206 (2011թ.):
5. Федеральный закон «О контрактной системе в сфере закупок товаров, работ, услуг для обеспечения государственных и муниципальных нужд», 2013.

ՀՀ-ՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ՖԻՆԱՆՍԱՒՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գրիգոր Ներսիսյան

Ամփոփագիր

Պետական գնումների ոլորտում պայմանագրային համակարգի գործառնման նպատակը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կարիքների բավարարման համար իրականացվող գնումների գործընթացում առաջացող հարաբերությունների կարգավորումն է: Սույն հոդվածը նվիրված է այդ համակարգի՝ ժամանակի հրամայականով պայմանավորված շարունակական փոփոխություններին, ինչպես նաև համակարգի արդյունավետության բարձրացման առումով հասարակական հսկողության ինստիտուտի ստեղծման անհրաժեշտության հիմնավորմանը: Մասնավորապես, հղում է արվում խնդրո առարկայի վերաբերյալ ՌԴ-ում իրականացվող բարեփոխումներին:

ОСОБЕННОСТИ ФИНАНСОВО-ЮРИДИЧЕСКОГО УРЕГУЛИРОВАНИЯ В СФЕРЕ ГОСУДАРСТВЕННЫХ ЗАКУПОК РА

Григор Нерсисян

Резюме

Целью деятельности договорной системы в области государственных закупок является урегулирование отношений, возникающих для удовлетворения потребностей государственных и местных органов самоуправления, осуществляемых системой закупок. Данная статья посвящена продолжительным изменениям указанной системы, продиктованным велением времени, а также обоснованию необходимости создания института общественного контроля с точки зрения усовершенствования продуктивности системы. В частности, в статье кратко излагаются преобразования, осуществляемые в РФ по данной проблематике.

FINANCIAL AND LEGAL REGULATION PECULIARITIES IN THE AREA OF GOVERNMENT PROCUREMENT IN THE REPUBLIC OF ARMENIA

Grigor Nersisyan

Resume

The objective of the contractual system in the government procurement is to regulate the relations that emerge in the public procurement process, in order to satisfy the needs of the state and local self-government institutions. The article addresses continuous development of this system, which is an imperative of the time, as well as substantiates the necessity of creating a public control institute for increasing the effectiveness of the system. Particularly, the reforms carried out in the Russian Federation with regard to the subject matter are referred to and presented concisely.

ՀՈՒՇԱԳԻՐ ՀԵՂԻՆԱԿԻՆ

«21-րդ ԴԱՐ» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ, որոնցում առաջնային են ՀՀ հիմնախնդիրների վերաբերյալ թեմաները: «21-րդ ԴԱՐ» հանդեսի խմբագրական խորհրդի կողմից *պատվիրված* նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳԿՀ-ի սեփականությունը: Ձեռագրերը գրախոսվում են: «21-րդ ԴԱՐ» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), «*Sylfaen»* տառատեսակով, 11 տառաչափով (ֆոնտով), ծավալը չպետք է գերազանցի 12 էջը:
2. Հոդվածի հետ պարտադիր ներկայացնել հեղինակի ինքնակենսագրությունը *(CV)*, ինչպես նաև բանալի-բառեր:
3. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, լուսանցքները ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև բացվածքը՝ 1.5: Հոդվածը պետք է ունենա ամփոփագիր (հայերեն, ռուսերեն, անգլերեն):
4. Հոդվածում օգտագործված աղբյուրների և գրականության հղումները բերվում են քառակուսի փակագծերում՝ միացյալ և հաջորդական համարակալումով, այդ համարի կողքին նշելով հղված էջ(եր)ը, եթե հղման աղբյուրը մեկից ավելի անգամ է օգտագործվում ամբողջ հոդվածում: Էջը պետք է նշել աղբյուրի բնագրի լեզվով՝ էջ (հայերեն), с. (ռուսերեն), p. (անգլերեն, ֆրանսերեն կամ այլ լեզվով աղբյուրներ). օրինակ՝ [1], [2, с. 11-12]: Հոդվածի վերջում, «Աղբյուրներ և գրականություն» բաժնում, նույն հաջորդականությամբ բերվում է գրականության ցանկը, 10 տառաչափով, բնագրի լեզվով, օրինակ՝
   - *Մարգարյան Ա.*, Երկրի մրցակցային ռազմավարությունը տնտեսական անվտանգության համատեքստում, «21-րդ դար», # 1, էջ 5, 2003:
   - *Шарипова Р.,* Панисламизм сегодня: идеология и практика Лиги Исламского Мира, с. 15, М., 1986.
   - *Yasha Lange*, Media in the CIS, Center for Civil Society International, Amsterdam, 1997, from http://www.internews.ras.ru/books/media, Sept. 28, 1998.

5. Ինտերնետային աղբյուրների հղումները ցանկալի է նշել տողատակում:
6. Հայկական, լատինական և կյուրեղյան տառերից տարբեր աղբյուրների դեպքում հղումները կատարել լատինական այբուբենով՝ փակագծերում տալով թարգմանությունը և լեզուն. օրինակ՝ *Al-Arman fi Lubnan* (Հայերը Լիբանանում, արաբ.):

Խմբագրություն

«21-ՐԴ ԴԱՐ» տեղեկատվական-վերլուծական հանդես
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ 21dar@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 20.01.2017թ.
Թիվ 1 (71), 2017թ.
Տպաքանակը՝ 150:

Թուղթը՝ կավճապատ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 8 մամուլ: Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «ԹԱՍԿ» ՍՊԸ տպարանում